

4903-4907

297

2-81



2010



ms. 917

p. 2

*Անուշահյան*

# Խ Ի Ի Լ Ա Փ Ա Թ

ՊԵՏՄԵԿԱՆ ՀԵՏԵՉՕՏՏԻԹԻՒՆ

ԵՐՐՈՐԴ ՏՊԵՐՐՈՒԹԻՒՆ



Տպարան «ՆԻՐԱԿ» Ալեխանդրապոլ:

1 9 0 6

(33)



9744

*[Faint handwritten signature]*

**И. П. Ф. Л. Ф. Л.**

*[Faint mirrored text]*

Дозволено Цензурою С.-Петербургъ, 7 Октября 1905 г.

*[Faint mirrored text]*

*[Faint mirrored text]*

0001

**И. П. Ф. Л. Ф. Л.**

**И. П. Ф. Л. Ф. Л.**

*[Faint mirrored text]*

*[Faint mirrored text]*







Ահա այս բառի մէջ է կայանում սիւննիների ու շիաների վէճը. այս բառն է պառճառ կղել երկու աղանդաւորների իրար մէջ ունեցած հակակրօթեան և բիրաւոր անմեղների սրածուրթիւնների, կոտորածների և տանջանքների:

Մահմէդի ամենամօտ խորհրդատուները և աշակերտները, որոնք հեթանոս և նորադարձ Մէքքէի ժողովրդի դարևոր աւագանիներն ու առաջնորդներն էին կղել, գլխաւորաբար Աբուբէքրը՝ օրէնսդրի աները, Էօմէրը՝ Կօրէիշների ամենասիրելին և եռանդուն զօրավարը աչք ունէին խալիֆի գաւազանի վրա, այն ինչ Ալին, որպէս օրէնսդրի հօրեղբորդին, Մահմէդի միակ դստեր Փաթիմէի ամուսինը և առլծի նման քաջ ու անյաղթելի հանդիսացածը, բոլոր կրօնական պատերազմներում, աւելի մեծ իրաւունքներ ունէր իրան յաջորդ հրատարակելու: Ալին շրջապատողները կտակը նրան էին վերագրում, որպէս ամենաքաջի և Մահմէդի օրինակ տոհմական ժառանգի, այն ինչ ջոջ Կօրէիշները՝ Մէքքէի դարևոր տիրապետողների յաջորդները՝ շէին կարող զիջանել և այդ աղքատի քաջարի որդուն հպատակել: Մահմէդի մահից յետո, նրա մերձաւորները, կինը՝ Այիշէն, աջակիցները, զօրականներ ժողովելով՝ «ամենագօրեկը» համարեցին օրէնսդրի աներօջը՝ Աբուբէքրին և նրան էլ հրատարակեցին խալիֆ (յաջորդ): «Ամենագօրեկ» բառը նրանք միայն անհատի մարմնական ուժի մէջ շէին տեսնում, այլ առաջնորդի զինուորական կազմակերպութիւնը, քաղաքացիական կապերը, կառավարող ընդունակութիւններն էլ նկատի էին առնում:

Այդպիսով իսլամական սիւննի վարդապետութեան մէջ կազմուեց այն դաւանանքը, թէ—օրէնսդրի՝ Մահմէդի բացարձակ հրամանի համաձայն, խալիֆը նա է, ով ամենագօ-

րեզնէ իր զինուորական, քաղաքական իշխանութիւնով, որը տիրապետում է իսլամի նուիրական վայրերը—Մէքքէ, Մէդինէ, առաջնորդում է իսլամի հետևողներին Մահմէդի ծրագրած շաւղով նորանոր տիրապետութիւններ անելու, իսլամի կրօնը տարածելու, նրա հետևողների թիւը բազմացնելու, աւանդը անսասն պահելու, ամէն ջանք գործ դնելու, որ նւիրական դրօշակը (սանջագը շէրիֆ) ծածանի աշխարհի ամենահեռաւոր ծայրերում:

Այս բացատրութիւնը մշ թէ հետևողական, այլ մինչև անգամ երկնային պատգամ<sup>1)</sup> ևն համարում սիւննի մեծամեծ իւլէմները (կղեր): Քանի որ Ալլահն է տալիս ամէն բախտ, նա է անօրինում երկրի գործերը, ուրեմն Ալլահն ինքն էլ տալիս է միայն արժանաւորներին այն զօրութիւնը, որով կարողանում են տիրել, ձեռք բերել այդ նւիրական իշխանութիւնը:<sup>2)</sup> Իսլամի նախկին աշակերտներից ամենամեծ մասը հէնց սկզբից ընդունեցին և քարոզեցին այս դաւանանքը և Ալէլիներին (Ալիի հետևողներին) շիա [հերձած] անունը տւին, որոնց վարդապետութիւնը Պարսկաստանի սահմանից դուրս չեկաւ և որոնց թիւն այսօր հօթը ութ միլիօնից աւելի չէ կազմում, այն ինչ աշխարհի ամէն կողմը տաբածաւած են սիւննիները (ուղղափառ) մօտ 150 միլիօն:

Համաձայն այս վարդապետութեան բոլոր սիւննի իւլէմ-

1) Իսլամի վարդապետութիւնը բաժանւում է երկուսի. երկնային կամ դուրանական, որի մասին անմիջական սրտում կա դուրանում, և հետևողական, որը աւանդել են, Մահմէդի շորս գլխաւոր յաջորդները և որոնք արձանագրել են «Հադիսում»—շորս զիրք կամ սիւննայում:

2) Ղուրան 11 սիրքիտ 118 և 248 այտթ:



ները կուրարար հոլատակեցին Իսմաններին, երբ Մուսաին խրաջրեց խալիֆայութիւնը, Արատեաններին, երբ վերջիններս Քաղղազի փառապաժն գահից տիրում էին ամբողջ արևելքին ու իսլամ աշխարհին, Սոյջուկներին, երբ վերջիններս ընկճեցին Քաղղազի ամիրապետներին, Գահիրէի ամիրաներին, և վերջապէս Եգիպտոսի ստրուկ մէմլուկներէից առաջացած ամիրապետներին, որոնք յափշտակեցին եգիպտական ամիրաների իշխանութիւնը: Այս բոլոր հարստութիւններին պատկանող միահեծան սուլթանները համարւում էին խալիֆ: Մահմէդի անդակայ և իսլամի գլուխ կամ ներկայացուցիչ:

Օսմանեան սուլթանները Կ. Պօլիսը տիրելուց յետո, մտածում, անխնջ աշխատում, տքնում էին խալիֆութիւնը ձեռք բերելու համար, որով կապիտոլ իրանց հետ խոյժի հոգևորականներին, իսլամ ազգերին, կկարողանային աւելի գիրութիւնով տարածել, բնդարձակել իրանց իշխանութիւնը: Իւրաքանչիւր տարի Օսմանեան սուլթանները որքան նւէրներ էին ուղարկում Մէքքէի, Մէկլինէի ու խաաաղիմներին, իրանց ջերմեռանդութիւնը և կրօնասիրութիւնը ցոյց տալու համար, սրբան կաշառքներ էին ցրում այդ քաղաքներում նստող Զէրիֆին, նրա արբանեակ իւլէմներին, շէյխերին, սէլիդներին, զրանց սրանքը գրաւելու համար: Քայց դժււր. Գահիրէի ամիրապետը՝ խալիֆ Ղաւրի սուլթանը, գիտնալով Օսմանների նպատակը, շժողեց մինչև անգամ. որ սուլթան Սէլիմ Ա. Եալուզը իր ծախսով վերաշինէ Մէքքէի ջրմուղները, որոնք այն ժամանակ կարօտ էին մեծածախս վերանորոգութիւններին: Այս գէպքը այնքան սուր կերպարանք ստացաւ, որ սուլթան Սէլիմ ասլիֆից օգուեց և պատրաստութիւն անսաւ Եգիպտոսի ամիրապետի՝ իսլամի խալիֆի դէմ պատերազմելու: Ղաւրի ամիրապետը կրօնական իշխանութիւնը ձեռքից

շփախցնելու համար, մինչև անգամ զիջաւ և սիւննի վարդապետութեան ամենաօխերիմ թշնամի Սէֆէլի Զահ-Իսայիլից՝ Պարսից շիաների սուլթանից օգնութիւն խնդրեց: Վերջինս էլ վախենալով, թէ մի գուցէ Օսմանեանները իրանց սեփականելով խալիֆութիւնը, զօրեղանան և իրան ձեռքից խլեն Ոսրեասանի, Քարեղատանի, Մարտտանի և Հայասանի սիւննիարնակ նահանգները, զիջաւ և պատրաստութիւն անսաւ Օսմանեանները դէմ:

Խալիֆութիւնը ձեռք բերելու համար ինչ արիւնահեղ պատերազմներ մղեց Սէլիմ սուլթանը. նախ պարսից դէմ՝ Չըլլրանի և Թարիզի ճակատամարտներում, մօտ հարիւր հազար մարդ կոտորեցին, ապա եգիպտացիների դէմ՝ Հալէբից մինչև Գահիրէ և խորքերը, ասելի քան հարիւր յիսուն հազար հոգի: Սէլիմը գեւ Եգիպտոս շնասած, Հալէբում ի մ ա մ ք. նրան շոգորութիւլու և մի բան պակելու յուսով, ուրբաթ օրւա աղօթքի մէջ (Կաււզբե), երբ Սէլիմին անուանց խալամի խալէֆ և նւիրական քաղաքների առաջնորդ, վերջինը շկարողանալով ուրախութիւնը զտելլ, խալոյն վրայից հանեց սակհուս վերաբերուն և հազրեց իմամին: Քայց վերջապէս Սէլիմը հասաւ նպատակին. Եգիպտոսի Ղաւրի սուլթանին Սուրիայում, պատերազմի գաշտում սպանելուց յետո, մտաւ Եգիպտոս, որտեղ հօր դահը բարձրացրած Տոնամքա սուլթանին կախել աւաւ. ջարդեց, կոտորեց նենգութիւնով մէմլուկների բոլոր ազնւականներին, փշրեց նրանց գիււորական գօրութիւնը, արեց Եգիպտոսին և արիւնաներկ ձեռքերով վեր առաւ Մէքքէի շէրիֆի ուղարկած նւիրական քաղաքների և Քէարէի արծաթի բանալիները, և այդ օրից (1516 թւից) մինչև այսօր իսլամ սիւննի հոգևորականները Օսմանեան սուլթաններին են խալիֆ ճանաչում, նրան ևն Մահմէդի յաջորդ



համարում և երկրագնդի բոլոր մղկիթներում սիւննիները ուր-  
բաթ օրերը խ ս ս ւ ւ ր ւ է ն (աղօթք յատուկ խալիֆի համար)  
նրա անսենով են կարուում:

Քացի շիւնները սիւննի բոլոր աղպերը Օսմանեան ի-  
խանութեան տակ, թէ դուրսը, իրանց կրօնի պէտ, Մահմէ-  
դի տեղակալ և խալիֆների յաջորդ ճանաչել են և ճանաչում  
են Օսմանեան սուլթաններին, համաձայն Մէքքէի շէրիֆների  
ամենանշանուոր իւլէմների աւած ֆլթուաներին (հատուած  
շէրիաթից կամ դուրանից): Իսլամ իւլէմները վճիռը արդա-  
բացի է, թէ ապօրինի, նրանց ֆլթուաները դուրանի սղուն,  
«հազիսին» համաձայն են, թէ հակառակ, այդ մի այնպիսի  
խնդիր է, որ մեր ներկա յօդուածի ծաւալում չի կարող տեղ  
գտնել: Քաւական է, որ այսօր երկրագնդի բոլոր սիւննի իս-  
լամները, Թիւրքիայի սահմանում, թէ դուրսը, սուտական, ֆրան-  
սիական, անգլիական, շինական արապետութիւնների և թէ  
մասնաւոր իսլամ իշխանութիւնների տակ, անպայման ընդու-  
նել են և ճանաչում են: Օսմանեան սուլթաններին խալիֆ,  
Մահմէդի տեղակալ, իսլամի ներկայացուցիչ և նշանց համա-  
րում են իրանց հոգեւոր պետք: Աղօթում են Ալլահին և խընդ-  
րում իրանց խալիֆի—Օսմանեան սուլթանի կեանքին՝ երկա-  
րութիւն: սրին՝ կարուելութիւն, դինուորական դորութեանը՝  
ոյժ ու կարողութիւն, կառավարութեանը աջօգութիւն և  
բարգաւաճում: Ինչպէս վերև ասացինք, Օսմանեան սուլթան-  
ները բունի ոյժով են ձեռք բերել այդ իշխանութիւնը, յա-  
փշտակել են եզրագոտի վերջին մէմլուք ամիրներից, բայց  
նրանց այդ ընթացքը իսլամի իւլէմների վճիռներով արդա-  
բացի, իրաւացի, օրինական է նկատուել և ընդունուել:

Այս բոլորից երևում է, որ այն կարծիքը, թէ՛ սուլթան-  
ները ինքնակոչ խալիֆներ են, իրանք իրանց և նրատարա-

կել և անուանում Մահմէդի յաջորդ, կամ սիւննի—մահմէդա-  
կան ժողովուրդի աշքում, եթէ կայ մէկը, որ կարող է համար-  
ւել իրեն խալիֆ, մարդարէի յաջորդ, այդ Մէդլինէի  
մեծ շէրիֆն է,—անհիմն կարծիք է:

Ոչ միայն ամեն մի իսլամ, այլ նոյն ինքն Մէքքէի շէրի-  
ֆը, իսլամի բոլոր իւլէմներով, եթէ ամէն ուրբաթ օր, կէսօ-  
րից մի ժամ առաջ, շեն աղօթում խալիֆի բարաթով [ֆէր-  
մանով] շինուած մի ջամիում [ժողովարան—մղկիթ], նրա հա-  
մար սրուած աղօթքը (խուդրէ), նրան օգնութեան շին կան-  
չում բոլոր երկնային գորութիւնները, սամադանին [ժամի  
ամիս] եթէ ներկա շին լինում այդպիսի ջամիներում ընդ-  
հանրական աղօթքներին, այդպիսիները իսլամի հաւատա-  
ցեալները անջատուած են համարում և յաւիտեան կանու-  
թեան մէջ իսլամներին խոտաւարած երջանկութիւնը վայելե-  
լուց զրկւած: Գարձ ասած, ինչպէս մի կաթօլիկ անպայման  
պէտք է հաւատա, որ Քրիստոսի փոխանորդն է աշխարհի  
վրա Հոսթի պապը, պապին շճանաչել նշանակում է եկեղե-  
ցուց բաժանուել, նոյնպէս ամէն մի իսլամ հաւատում և դա-  
ւանում է սուլթանին, որպէս Մահմէդի տեղակալ երկրի  
երեսին:

Իսլամ սիւննի իւլէմների կողմից նոյնպէս յայտնի բողոք  
չէ նկատուած Օսմանեան սուլթանների խալիֆութեան գէմ:  
Ամիրապետութիւնը սրանց ձեռքն անցնելուց յետո, 1516  
թուականից մինչև վերջին դարը, մինչև ըէֆօրմացիայի սկիզբ-  
ները, ոչ թէ անբաւականութիւն, այլ ընդհակառակն, ամէն  
կողմ, ամէն տեղ մինչև երկինք են բարձրացրել Օսմանեան  
սուլթաններին, նրանց ջերմաստանը կրօնամտութեան համար:  
Ոչ միայն Օսմանեանները հովանաւորութեան տակ սնուած  
նշանաւոր հոգեւորականները, այլ սրանց սահմանից դուրս



ապրած իսլամ ակնյայտնի բոլոր իւլէմները պատկառանքով  
 և ակնածութեամբ են գրել ու խօսել Օսմանեանների մասին:  
 Այդպէս էլ լինելու էր, քանի որ իսլամ կղերը միշտ զգւած  
 ու փալփալած է եղել սուլթանները և կղերը իր շաւղով է  
 առաջնորդել նրանց: Եթէ ուշադրութեամբ քննենք Օսմանեան-  
 ների պատմութիւնը, կտեսնենք, որ շատ ու շատ է պարտա-  
 կան իսլամութիւնը օսմանեան սուլթաններին: Վերջիններիս  
 բարբարոսական սրածութիւնները, պատերազմները, արիւ-  
 նահազուլթիւնները ու խոխոզումները եթէ չլինէին, գուցէ այ-  
 սօր երկրագնախ վրա գտնվող 150 միլիօն սիւննիներէ կրե-  
 սունը հազիւ մնացած լինէր: Եթէ աչքի անցնենք միայն Եւ-  
 րոպայի գոգում վարած արիւնահոյ պատերազմների և բռնի  
 իսլամացնելու տարեգրութիւնները, կտեսնենք, թէ յոյները,  
 բուլղարները, ռոշնակները, գերմանացիներն ու վննեակիցիներ-  
 ըը ի՞նչ ահաւոր գոհեր են աւել Օսմանցիներին: Գեւ շնք  
 ուղում յիշել ասիական դաւառների քրիստոնեաների գլխին  
 անցեալ դարերում, աղջամղջում կատարւած գաղանային սար-  
 սափները, սրանց մեծագոյն մասը մատնել և յաւիտենական  
 մուսուլթեան:

Այստեղ աւելորդ չենք համարում յիշել մի երկու օրինակ  
 սուլթանների այդպիսի քսամնելի գործերից, սրանցից ըն-  
 թերցողը գաղափար կարող է կազմել նրանց գործունէու-  
 թեան մասին:

Սէլիմ Ա Եսպուղ (վէս), Եգիպտոսին տիրելով՝ իսլիֆա-  
 յութիւնը ձեռք բերելուց յետո, սրպէսզի բոլորովին իր կող-  
 մը գրաւէ իսլամութիւնը և Ալլահին մի աւելի մեծ ծառա-  
 յութիւն մատուցած լինի, Ֆէրման տունը՝ իր իշխանութեան  
 տակ աղբոյ բոլոր քրիստոնեաներին բռնի իսլամացնել,  
 նրանց եկեղեցիները մզկիթի վերածել և հակառակողներին

սրածել: Ո՛րքան կաշառքներով, որքան սառապանքներով և  
 սօսկալի շարշարանքներով քրիստոնեաները կարողացան հա-  
 մոզել Սէլիմին, տրւած հրամանը յետ առնելու համար: Կա-  
 շառւած մեծ-վիզիրը, եթէ անելանելի վիճակի մէջ չզցէր  
 Սէլիմին, դժւար թէ քրիստոնեաները խուսափէին աչք ընդ-  
 հանուր կոտորածից: Խորամանկ պաշտօնեան առում է՝ «Եթէ  
 քրիստոնեաներին կոտորենք, երկիրը կաւալարելու համար  
 կարենք փողը սրտեղից հաւաքենք: 2է՛ որ իսլամ ժողովըր-  
 դին հարկի չենք կարող ենթարկել»: Սուլթանը կիսով չափ  
 ետ է առնում հրամանը, բայց և այնպէս ստիպում է իրել  
 քրիստոնեաներից, բոլոր քարաչէն, կամարակապ եկեղեցիներ-  
 ըր, մզկիթի վերածել գրանք և առաջարկել քրիստոնեանե-  
 րին, որ եթէ ցանկանում են, նորերը շինեն փայտածածկ:

Սուլթան Մուրադ Գ, 1583 թիւն, երբ կատարում էր  
 որդու գահաժառանգ Մէհմէդի թրփաման հանդէօր, այն  
 բազմածախ հանդէսները, որոնց պատրաստութիւնները բիւ-  
 բաւոր բանւորները տարիների ընթացքում հազիւ էին գումար  
 բերել, որոնց արդ ու դարձը միլիոններ էր կուլ տուել, ար-  
 ծաթն ու ոսկին, մարգարիտն ու գոհարը շէքիներով <sup>1)</sup> էր  
 գործադրւել, ամիսներով ամբողջ Սթամբուլը սղոզուկ էր քաղց-  
 բաւէնիներով, օշարակներով և վարդիւղիբով, էլ ճրագայոյծ-  
 ներ, հրախալութիւններ, սուսերամարտիկ թշառո բռնակ-  
 ներ, որոնք իրանք իրանց յօշոտում էին, նուազածու իմրե-  
 րի, պարողների թափոքները թնդացնում էին Քօսթուրի փեկ-  
 ըրը. ճաշկերպիներին, բնթրիքներին հարկը հազար մարդիկ  
 էին ժառանգցում, նրախրւած հանդիսականները և օտար պե-  
 տութիւններից եկած ներկայացուցիչները իրանց թանկագին

<sup>1)</sup> 2էքի—100 օթա, մօտ 9 պուդ:



նւէրնեքսով սփռուել էին սուլթանի մայրաքաղաքում: Խալիֆը խլամ աշխարհին մի նոր սիւրպրիզ անելու համար և միւսիւմաններին մի աւելի հոգեկան մխիթարութիւն պատճառելու տենչով, և օթը հաղար հինգ հարիւր քրիստոնեա մանուկներ խլել էր տուել իրանց թշուա ծնողներից և գահաժառանգի հետ թլփատել:

Հատորներ կիսգմի, եթէ մենք օսմանեան սուլթանների քրիստոնեա հոլատակներին խլամացնելու և մահմէդականութիւնը տարածելու, բազմացնելու դիտմամբ կատարած բարբարոսութիւններն ու անգթութիւնները մէկ մէկ նկարագրէինք: Վերջացնում ենք մեր խօսքը մի կրքորդ օրինակով: Գեռ անցեալ դարի վերջերում, 1789 թւին, Սէլիմ Գ սուլթանը, իր գահակալութեան երրորդ օրը, ծպտեալ դուրս եկաւ մայրաքաղաքը լրտեսելու: Խոլամականութեան ջերմ պաշտպան և կրօնամոլ միւսլիմ լինելը գործով ապացուցանելու համար, այդ օրը նա գաղանաբար երեք անմեղ քրիստոնեա սպանել աւելեց, ուսնչից առաջինը մի քսան տարեկան հայ պատանի էր: Սրա յանցանքը մաքուր և կոկ հագնած լինելն էր, որը գուր չեկաւ խլամի պետին: Թշուա պատանին քրիստոնեաներին արտօնւած միայն սև գոյնով վոյելուչ շորեր սնէր հագին: այնպէս որ Սէլիմ սուլթանը, երկար քննելուց յետո, ճարահատեալ հրամայեց պատանու սև լափշինները [կօշիկ] հանել ստերից: Պատանու կարմիր գուլպաները և գեղին ստտերը շարժեց Սէլիմի ժպիտը, որը ինքնաբաւական ասաց.

—2էս իմանում, որ գետաւերներդ այդ գոյնները բանեցնելու արտօնութիւն չունիր: Տարէք Պալըզիսանէ (ուր գրանում է, կառափնարանը):

Բացի խլամի տարածման համար կատարած այսպիսի մեծամեծ բարբարոսութիւններից, սուլթանները երկրի ղեկը

յանձնած էին խլամի իւլէմներին: Առանց նրանց խորհրդի, առանց նրանց վճար ու համաձայնութեա՞ սուլթանները ոչ մի գործ չեն արել և ոչ էլ ֆէրման ստորագրել: Թէ պալատում, թէ գինւորականների դասում ամենանշանաւոր տեղը իւլէմներինն է եղել և ամէն անգամ աւարի ամենաշագ բաժինը. եկամուտի ամենաապահով մասը նրանց է հասել:

Ոչ միայն իւլէմները ամէն մի քաղաքում, ամէն մի աւանում նշանաւոր տեղ են բռնել և ափրացել ինչպէս վագֆին (կղերին, մղկիթներին յատկացրած կալածներ), նոյնպէս հոգևորականութեան յատկացրած գաւառներին, կղզիներին, անառներին և դաշտերի եկամուտներին, այլ պետութեան գանձարանից ամէն տարի նշանաւոր գումար բաժանել է նրանց՝ որպէս վարձատրութիւն: Մէքքէի շէրիֆը, բացի տարեկան այնտեղ գնացող 80,000-ից աւել հաջիններից ստացած նւէրներից և քաղաքի նշանաւոր եկամուտներից, մի ահագին գումար էլ Օսմանեան գանձարանից է ստանում: Գանձարանից մեծամեծ թոշակ ստացող Մէքքէի, Մէզինէի մէջ ապրող իւլէմների և շրջակայքում բնակւող շէյխերի թիւը երեք-չորս հարիւր է հասնում: Սուլթանի գինւորականները, քաղաքական պաշտօնականները տարեկան մի ամսական հաղու են ստանում, այն ինչ Մալիէի (ֆինանս) տեսուչը պարտաւոր է ամէն տարի որոշ ժամանակին, նոր կարւած ոսկի զրամով, առանձին-առանձին ծրարներով միանալով ուղարկել այդ բոլոր իւլէմներին ու շէյխերին, նրանց դարևոր թոշակի շարունակութիւնը: Ապա ամէն տարի հաջինների տարած և նրանց հաւուղարկուած նւէրները:

Մի առանձին պաշտօնակատար, ուղեկից սպասաւորների մեծ բազմութեամբ, հանդէսով, պատշաճաւոր զբօշակով Քէարէի (այն տաճարը, որտեղ պանում է սև քարը, և նստում է



Մէքքէի Չէքրֆը) ահաւոր շինութիւնը ծածկելու համար տանում է Մէքքէ սուլթանի ուղարկած այդ վրանը, որ կարւում է կարմիր մահուդից, սակէթելով ասեղնագործած: Մինչև անդամ եթէ հաջինների թիւը որևիցէ պատճառով 80,000-ի չի հասնում, սուլթանը պարտաւոր է ազգասնեղին, կարօտեալներին զանաւարտից փող քաժանել, ուխտաւորների պահասորդ թիւը լրացնել, ուղարկել դէպի նախնական քաղաքները: Իսկ ամբողջ Արարիան այս բոլորի փոխարէն Օսմանեան գանձին ու երկրին ոչինչ չի վերադարձնում, բացի ձրիակեր և խոտապահանջ հաջիններից:

Եւ ինչի՞ համար է այս բոլորը, պիտէք ընթերցողներ,— որպէսզի իսլամը սուլթանին խալիֆ ճանաչի:

Այս բոլորից յետո՛ւ, շատ պարզ է, որ իսլամ հոգևորականները օսմանեան սուլթաններից պիտի անշափ քոհ լինէին, ամէն անգ և ամէն կողմ դրւատէին, փառաբանէին նրանց անունն ու յիշատակը, որպէս Մահմէդի ամենաարժանաւոր տեղակալներ և խալիֆների օրինական յաջորդներ:

Եւ եթէ եղել են գոգոհներ, բողոքողներ Օսմանեան սուլթանների դէմ, դրանց ձայնն էլ խեղդուել է ահաւոր իսլամ իւլէմների բազմութեան ճնշման տակ: Քայց թէ ինչի՞ ս ո ու լ թ ա ն ը ա յ ժ մ ա յ լ և ո խ ա լ ի ֆ չէ, այդ բացատրելու համար բաւական է, որ աւելի սրուց կերպով պարզենք, թէ ինչ կապ կա խալիֆի և իսլամ ժողովրդի մէջ, ինչ պարտականութիւն օւնի խալիֆը դէպի իսլամ ժողովուրդն ու իւլէմները, փոխադարձաբար նրանք դէպի խալիֆը:

1. Ամէնից առաջ պէտք է գիտենալ, որ իսլամի կրօնը (մեր խօսքը գլխաւորապէս սիւննիներին մասին է) քրիստոնէութեան նման չէ սահմանափակուած միմիայն գուա կրօնական վարդապետութեան շրջանակով: Աւերանք մի լոկ ատ-

ւած արանական վարդապետութիւն չէ. նա անբաժանելի կրօնաքաղաքական, երկրա-երկնային իսլամի պետական կազմութեան անփոփոխելի օրէնսդրութիւնն է: Իսլամի կրօնապետը՝ խալիֆը, թէ աշխարհական և թէ կրօնական գլխաւորն է այս պետական կազմութեան, միայն դուրանի արածածած, սահմանած իրաւունքներով: Սուլթանը, դուրանի համաձայն, ճանաչելով իսլամի խալիֆ, իր ընթացքը պիտի լինի համաձայն դուրանի վարդապետութեան. հակառակ դէպքում, եթէ նա դուրանի ներհակ ընթացք բռնէ, իսլամը նրան չի ճանաչիլ որպէս խալիֆ, նա կգտնուի սոսկ մի աշխարհական բանակալ իշխան, մինչև անգամ քաֆիր (հայհայոց), որպիսի մի իշխանաւորի հովանաւորութեան տակ ապրելու իրաւունք չունի իսլամ անհատը և պիտի հեռանայ, աղաաւի, եթէ հնաբաւորութիւն գտնի: Աւերանի վարդապետութեան համաձայն, միջոց գտնող և շհեռացող իսլամը զրկուած է երկնային փառքից, ջէհէննէթի վայելքներից:

Այստեղ մի հարց է առաջ գալիս— թէ ինչի՞ ուրեմն Մարօքի, Օմանի սուլթանների, Բուխարայի, Աֆղանստանի, Բելուջիստանի էմիրների հպատակ իսլամ սիւննիները չեն գիտնում դէպի խալիֆութի կարւածները: Ինչի՞ քրիստոնէա պետութիւնների հպատակ միւսլիմները չեն գաղթում դէպի Թիւրքիա:— Իսլամ իշխաւորների երկիրներում՝ Մարօքում, Օմանում Թիւրքումնստանում և Աֆղանստանում իշխողները սիւննի իսլամներ են, և այդ երկիրներում գործադրուած է բացարձակապէս շէրիաթը կէտ առ կէտ. չնայելով, որ բուն խալիֆայական երկրի մէջ այսօր շէրիաթի հետ գուզընթաց թաղաւորում է նոր օրէնսդրութիւնը, այդ երկիրներում կարելի չէ էլ զգացուի որևիցէ վերանորոգութեան, այն պատճառով, որ այդ երկիրներում գուա իսլամներ են ապրում, որոնք



րացի շէրխաթից, ուրիշ օրէնք ունենալու իրաւունք չունին, մինչև անգամ շէրխաթը քննադատելն աններկի յանցանք է: Քանի որ ազատ դործադրում է շէրխաթը, ժողովուրդն էլ, կղերի հետ միացած է կրօնական տեսակէտով խալիֆի հետ և ամեն մղկիթ նրանից ստացել է և ստանում է օրինական բէրաթհները (հրովարտակ), նրանք իրանց անբաժան են համարում համիրամտկան պետութիւնից և ստիպւած շին իրանց հայրենիքից հեռանալու: Նա մտնաւանդ որ այդ սուլթաններն ու ամիրները համարում են խալիֆի օգնորկաններ իրանց հայրենիքում և սուլթանը, զրանց զահակալութիւնները շնորհաւորելիս, անւանում է նրանց իր կրօնական ներկայացուցիչները իրանց վիճակներում: Քեւ կարգադրում էլ է խալիֆը, որ զրանց ժողովուրդը մարդարէի տիղակալին յատուկ ուրբաթօրեա «խուդբէի» ազօթքից յետո, յիշեն իրանց ազօթքներում անպական իշխանաւորներին ևս: Այսպէս այդ իշխանաւորները դառնում են մի տեսակ փոխանորդներ մեծ իմամի և զրանց երկիրներն էլ՝ համիրամտկան վիճակներ:

Իսկ այլադասան օտարապետողների մահմաններից պարտաւոր են հեռանալ միայն միջոց ունեցողները, և եթէ հետաքրքրւենք, կտեսնենք, որ հեռանում էլ են: Խրիմից, Կազանից, Կովկասից և ուրիշ տեղերից ամեն տարի նիւթադէս տւահասոված դասը քիչ-քիչ գալթում է, թէև իսլամին յատուկ կրիայի քայլերով: Իսկ Ալժիրի, Տունիսի, հնդկաստանի իսլամների մէջ ատրածւած է մի այսպիսի, ինչպէս իրանք ասում են, շիրէի-շէրի (օրինական նենդ) կեղծ փաստ:—Քանի որ այդ պետութիւնները զաշնակից են խալիֆի հետ, այդ զաշնագրերի համաձայն իսլամ ժողովուրդներն էլ ազատ անկախ՝ իրանց կրօնական յարաբերութիւնները պահպանում

են խալիֆի հետ, հետեւաբար էլ բաւութեան տակ շին և վայելում են խալիֆի շնորհը՝ զաշնագրերի դօրութեամբ՝ տիրող պետութիւններից, սերմն կարէք շունին գալթելու, իբր թէ ասլոսմ են խալիֆի իշխանութեան տակ: Յայց և այնպէս միջոց ունեցող մտեռանդներն աշտակերից էլ են գալթում:

Սրանից էլ հետեւում է, թէ համաձայն դուրանի սրտ և բացարձակ պարտաւորեցուցիչ հրամանի, սուլթանը կրօնական պատերազմ հրատարակելիս, սանձաբը—շէրիֆը (նաբիտական դրօշակը) դուրս հանելիս, երկրագնդի ամեն ազգի սիւննի իսլամները պարտաւոր են ոտքի կանգնել և դիմել դէպի այդ նախկան դրօշակը ու շէհիդ դաւնալ (մարտիրոսանալ) այդ պատերազմներում: Այս փաստից է, թուրքօթլիները վախենում են՝ թէ սուլթանը, որպէս խալիֆ, եթէ կրօնական պատերազմ հրատարակէ, ամէն իսլամ պարտաւոր է նրան հետեւել և կամ՝ մեծ-իմամի մի քանի տող գրուածքը, հոսմի պապերի կանդակները նման, կարող է բորբոքել և ստրի հանել իսլամներին իրանց տիրապետող պետութիւնների դէմ: Բայց փորձը մի քանի անգամ վերջին գալթում շէ արդարացիւ Օսմանեան խալիֆներին այդ երազը ոչ սանձաբը-շէրիֆի տակ է կարողացել հաւաքել իսլամ հաւատացեալներին և ոչ էլ ստրի են հանել այդ «մուսաժ լէշին» նրա երկար ու ձիւր հրօթարտակներն ու քարոզիչները՝ նրանց տիրող պետութիւնների դէմ: Սրա պատճառները թողնելով ուրիշ անգամի, անցնենք խալիֆի իրաւունքները և պարականութիւնների շարունակութեան:

Ա. Խալիֆի ամենազգլիաւոր պարտականութիւնն է անխալտ պահել դուրանի վարդապետութիւնը, ինչպէս իր ամբիջական իշխանութեան տակ դամւած երկիրներում, նոյնպէս նրա սահմաններից դուրս. հակել և գործադրել սալ



կէտ առ կէտ իսլամի շէրիաթը, որից զուրո իսլամը պարտաւոր չի լինիլ նրան հպատակելու: Քանի որ այսօր սուլթանը, երկրի քրիստոնեա տգգաբնակութեան պահանջման և եւրոպական քրիստոնեա պետութիւններն հետ կապած զաշխագրերի համաձայն՝ ստիպւած նոր-նոր օրէնսդրութիւն է սահմանել, այնպէս որ այդ նորոգ սահմանւած կանոնների համեմատ էլ կառավարելու են իսլամները, ուրեմն սուլթանը իր խալիֆական իշխանութեան դէմ է վարել, հետեապէս իսլամը նրա վրա այլ ևս Մահմէդի տեղակալի հայեացք չի կարող ունենալ:

Եթէ քննենք վերջին դարի Օսմանեան պատմութիւնը, Ալիիմ Գ.-ից մինչև մեր օրերը, մենք կնկատենք, թէ ինչ բռնի ուժերով են քրիստոնեա պետութիւնները ստիպել Օսմանեան սուլթաններին վերանորոգութիւններ մտցնել երկրում, մասնաւորապէս վարչական և դատաստանական բաժիններում և որքան խոշնգոտների են հանդիպել սուլթանները ամէն մի վերանորոգչական քայլափոխի ժամանակ: Որքան մեծ կորուստների է ենթարկել ժողովուրդը, աղագբնակութիւնը, վերանորոգութիւններ չմտցնելու պատճառով: Սուլթանի կառավարութիւնը գտնել է երկու սրերի մէջ. մի կողմից քրիստոնէական՝ իսլամի հետ հաւասարութիւն պահանջող վերանորոգութիւն և արածոնութիւն, միւս կողմից խալիֆական պարտականութիւն՝ իսլամի առանձնաշնորհեալ երկնային կարգերի անխախտ պահպանումն:

Սուլթանի վարչութիւնը ուրիշ կը շունենալով՝ պարտաւորել է կեղծել և խաբել, խոտաւնալ և չկատարել խաթիբ-շէրիֆներով կուրացնել արտաքին աշխարհը, ներքին գաղտնի հրահանգներով, իւլէմների ձեռքով շարունակել իր ընթացքը՝ դարեօր ուղղութիւնով: Այստեղ պէտք է աւել-

լացնել, որ սուլթաններն քրիստոնեաներին խոտացած արածոնութիւնների բոլոր հրովարտակները և հրատարակւած օրէնսդրութիւնները, խմբագրելուց յետո, նախապէս առաջարկել են իսլամ իւլէմների քննութեան և փոփոխութեան և շէրիաթի համաձայն ու օրինական ճանաչելուց, չէյս-իւլ-իսլամից վաւերացելուց յետո են հրատարակել:

Բայց և այնպէս, սրանցից ինչ օգուտ, քանի որ հրատարակւած բոլոր հրովարտակները և օրէնսդրութիւնները չէրիաթին հակառակ են եղել: Բաւական է, որ դրանցով խոտացել է ճանաչել «բայան երին» իսլամի ժառանգների հետ հաւասար խալիֆի թագաւորութեան մէջ. բաւական է, որ առել է թէ օրէնքը նրանց հաւասար պիտի նկատէ,—արդէն շէրիաթը խախտել է, իսլամի օրէնքը սօքի տակ է արտրել: Հապա այն դատաստանական, վարչական և ուրիշ հիմնարկութիւնները, որոնք բոլորն էլ իսլամի շէրիաթին հակառակ են: Իսլամ երկրում, բացի դուրանի աշակերտ գաղիններից, ուրիշ մահկանացու ինչպէս կարող է դատաւոր լինել, և ամէն վճիռ հիմնւած պիտի լինի շէրիաթի վրա. ուրեմն այդ նորահաստատ դատարանները, որոնց մէջ գանրում են «բայան եր» ևս, փակել են իսլամի երկնային շէրիաթի դռները միւսիւլմանի առաջ, վերցրել են խալիֆի պետութեան միջից Ալլահադիլ օրէնքը:

Հետեալաբ իսլամ ժողովուրդը, նրա հետ իւլէմների երկրորդական գասը, իսկապէս իսլամի շէրիաթը խախտւած են համարում, հակառակ պալատը շրջապատող և երկրի գլխաւոր վարչութիւնը ձեռքն ունեցող առաջնակարգ իւլէմների ջանքերի: Պալատական կղերը իրանց չաղ բաժիններից և բարձրակարգ աթոռներից չբաժանելու համար՝ կեղծում և համակերպում են սուլթանի պալատականների և մինիստրը-



ների հետ և իբր թէ խաւամբ բարիքը նկատի ունենալով՝ արդարացնում ու օրինականացնում են դրանց ընթացքը: Տըրանջում է ժողովուրդը խալիֆի դէմ, զգում է, որ «խ ու զ ր է ն» նրա անունով կարգաւով՝ մեղանշում է կրօնի դէմ. բայց առանկում է,—իւլէմները, առաջնորդները նրան կաշկանդում են, նրան մոլորեցնում են և նա ինքն էլ այդ անելը դրութիւնից ազատելու մի նպատակով հնարը շի գտնում:

Իւլէմների, իրանց ֆէթւանները արդարացնելու համար, գլխաւոր փաստը նրանումն է և նրանք ասում են դադատագողի, որ այդ բոլորը գրւում և անւում են խաւամբ բարիքի համար, մի կերպ կրօնացիներին մոլորեցնելու, մինչև բարեյաջող ժամանակի հասնելը: Բայց ժողովուրդը, կարգացողները սօֆիստները իրանց ձեռքում աւելի զօրեղ փաստ ունին, այն է, թէ—«խաւամբ օրէնքը, դաւանանքը բոցայայտ պիտի լինի. գաղտագողի և թաքցնովի կրօնըով նրանք չեն կարող ելկնքի ճանադարհով գնալ և խոստացւած կրանութեան հասնել»: Սրանից պարզ է, որ այդպիսի առաջնորդները չեն կարող այդ կս ճանաչել խաւամբ աւանդապահ իւլէմներ և սուլթանը՝ Մարգարէի արժանաւոր յաջորդ:

III. Խալիֆը պիտի օր ու զիշեր տքնի խաւամբ տարածման խնդրով, պիտի ջանա նորանոր երկրներ նաճել անօրէններից ու այլադուաններից և չպիտի թոյլ տա, որ իր գնդերը, որոնց հարկ եղած դէպքում երկնային մէլաիքներն են (հրեշտակներ) օգնութեան հասնելու, պատեհազմի դաշտից գլխակոր կտ դառնան, կամ փախչեն տյո ճակատամարտերից:

Բայց շարտրաստիկ բախտի ոգին երեսը վտոյց չուս է աւել Օսմանեան ստրտափահար սուլթանները յաջորդներից: Հարիւր տարուց աւելի է, ամէն կողմ խաւամկան կրնորները

ջարդում, կտտրում, յրւում ու փախում են ճակատամարտներից և երկնային զօրութիւնները չեն դալիս նրանց օգնութեան, որից կարելի է դուշակի, որ Մահմէդն էլ կրես է շուս աւել Օսմանեան դահալայներից և շի ընդունում նրանց իրեն արժանաւոր յաջորդ: Մինչև անգամ Այիշէի ննջարանի վարդապետը՝ Սանջաղը-Չէրիֆը շի նպատում, շի զօրացնում որոստախոս զէյրէգներին և հաստարագուկ գահրիմաններին, որոնք սուտ դրագուններն ու կողակներն առաջից գլխակոր փախում, վերագտնում են իրանց խրճիթները: Հարիւր տարուց աւելի է, որ ոչ միայն մի թիզ հող շի աւելացել խալիֆի հողերի վրա, այլ կարուելով, մտնելով, այսօր Օսմանեան փառապանծ շրջանում ունեցածի քառորդն էլ հաղիւ է մնացել, թէև այդ բոլորը շի խոնդարում գոուղ հիւնքիարների վերջին յաջորդին, առանց կարմրելու Ղադի (յաղթուղ) մականունը կս կրելու իր տիտունների մէջ:

IV. Սուլթանը Մահմէդի տեղակալ և յաջորդ հրաւորակելով, անդայման պարտաւոր է կէտ առ կէտ ընդունել և դաւանել այն օրինադիրքը, այն շէրիաթը, որ աւանդած է օրէնսդրից և միայն այդ շէրիաթն անդայման ընդունելով՝ կարող է համարել խալիֆների յաջորդ: Ղուրանը իր վարդապետութեան բոլոր հետեողներից պահանջում է անտարակոս հաւատ և դաւանանք գէպի իր բովանդակութիւնը, սրի մի ամենատնշան կէտի մասին թիւր կարծիք յայտնելը դատապարտելի է համարում: Այդ վարդապետութեան համաձայն, խալիֆի տիրապետութեան տակ գանւած բոլոր երկիրները պատկանում են «բէյթ իւլմալին» [խալամ համայնքին] և ոչ թէ սուլթանին, այնպէս որ Օսմանեան սուլթանների խալիֆ հրատարակելուց առաջ՝ ձեռք բերած բոլոր կալւածներն էլ առանց պայմանի, խալիֆայութիւնն ստանձնելուց



յիտո, իսլամ հասարակութեան սեփականութիւն գործան: Խալիֆը իսլամի առաջնորդն է, նրա զինւորական զօրութեան գլխաւոր հրամանատարն է, նրա նւիրակահ թաղարների (Մէքքէ-Մէդինէ) պաշտօնական է, մի խօսքով նրա կարողութեան աւանդապահն է, բայց երբէք աէրը չէ: Ծախելու, փոխելու, նւիրելու իրաւունք չունի: Կարող է իր արժանաւոր հպատակներին երկրի այս ու այն կասրի երեսից օգտակու արածուութիւնը տալ, նւիրել, բայց մի օտար պետութեան բաշխել երբէք չի կարող: Մինչև անգամ, շէրիաթի համաձայն, խալիֆը իրաւունք չունի պետութեան եկամտուներին դիպչելու, իւրացնելու, բացի իրան համար որսւած թռչակից: Երկրի եկամուտը գործադրելու է հասարակութեան բարիքի, իսլամի տարածման և բարգաւաճման համար:

Էօմէք խալիֆի որդին, — աւանդաբար պատմում է կենսագրութիւնների մէջ, — մի օր մօտեցաւ հօրը և խնդրեց որ իրան մի դրհէմ (կէս մսխալ) արծաթ ապ, որպէս զի մի վերարկու գնի: — Որդիակ, պատասխանում է հայրը, սպասիր մինչև վաղը, այսօրւայ հինգ դրհէմ թռչակս արդէն ծախուած է, իսկ հասարակութեան պատկանող գանձին, խօ գնուեա, չեմ կարող դիպչել:

Այն ինչ ներկայ խալիֆների յաջորդը, առանց տատանելու, արիւնի փոխարէն՝ առանց մի կաթիլ քրտինք անգամ զոհելու, ոչ թէ «բէյթ իւմալի» եկամուտից, այլ պետութիւնից Կիպրոսի նման մի ահագին կղզի բաժանեց տաւ անգլիացիներին, Բօսնիա-ձէրցէզովինիայի նման նահանգները Աւստրիային, Թէսալիայի և Եպիրոսի կէսը՝ Յունաստանին: Յայտնի բան է, մաղն ու մանանխար քննող մանրագնին իւլէմները նկատում են, գգում են, ցաւում են, բայց զօրաւորներն անկարող են խօսելու, իւզալի պաշտօնների թեկնա-

ծուները պարտաւորւած են լսելու, իսկ սօֆիստների մօլլաների ձայնը խեղդուած է, էլ ինչպէս իսլամը այդ պարտապանց աւանդապահին խալիֆ ճանաչի ու դաւանի:

V. Խալիֆը իշխանութեան տակ պիտի ունենայ նւիրական քաղաքները [Մէքքէ-Մէդինէ] ու նրանց ճանապարհները ազատ ու ապահով պիտի պահպանէ հաջ գնացողների տուաջ: Եւ վերջապէս, օրինակահնութեան դասն անցած իսլամական սրբազան, նւիրական իրերը պարտաւոր է իր արամողութեան տակն ունենայ:

Այս բոլորը ճշտութեամբ կատարում է խալիֆը, այնպէս որ սրանց մասին դժգոհ լինելու առիթ չունին իսլամները: Թէ ինչ զոհողութիւններ է անում սուլթանը Մէքքէ ու Մէդինէ գնացող հաջիների պատճառով, նայն երկրում ապրող իւլէմներին, շէյխերին ինչպէս է վարձատրում, վերեր նկարագրեցինք: Իսկ սրբազան աւանդական նւիրերը ամենայն ակնածութիւնով ու խնամքով սուլթանը պահում է իր պալատում, կրկնակի. քառակի փականքների տակ, ամենախիտ զգուշութիւնով:

1) Այժի բրդից գործւած Սանջազը-Էէրիֆը, որը առաջին անգամ Մահմէդը քաշեց Այիշէյի ննջարանից տարաւ, բարձրացրեց որպէս զբօշակ՝ ամբոխին Մէքքէ ուխտի առաջնորդելու համար, Աբուբէքրի հրամանով, մեծ խնամքով պահուելով՝ յանձնել է յաջորդաբար Չամի, Բադղադի, Գահիրէի խալիֆներին, որոնցից յափշտակեց Սէլիմ Ա. որպէս խալիֆների յաջորդ: Իսլամները հաւատում են, որ եթէ այդ զբօշակը պարզէի պատերազմում՝ անպատճառ իրանք յաղթող կհանդիսանան:

2) Սրա հետ պահում է Էօմէրի զբօշակը, որի հրաշագործութիւնը նախորդից քիչ նւազ է համարում:



3) Խրիտի Չէրիֆը [նւիրական թիկնոցը], որը էօմէրը դնեց Չէհրիբի որդուց, որին նւիրել էր Մահմէդը: Այս հրաշագործ համարած վերարկուն քառասուն կապոցների մէջ փաթաթած, մեծ զգուշութիւնով պահուում է մինչև օրո, որին համբոյր են տալիս ամէն տարի մի անգամ խալիֆը ու նրա մեծամեծները: Ասում են, որ ասրից է գործւած և դարմանալի է, որ հազար երեք հարիւր տարւայ ընթացքում չի փթել:

4) Քէարէի արծաթեայ բանալին, որը Մէքքէի Չէրիֆը նւիրեց Սէլիմ Ա-ին, Մէքքէի, Մէդինէի բանալիների հետ:

5) Մահմէդի մօրուսի մագերը:

6) Մահմէդի նալները [փայտի քշեր]:

7) էօմէրի ինքնաձեռագիր մի մատեան և ուրիշ մանր մունր իրեր, որոնց ամէն մէկի հետ կապւած է իսլամի քարոզիչների, նախկին դաւանողների, խալիֆների, զօրականների և իւլէմների կեանքից այլ և այլ դէպքեր, առասպելներ, վէպեր:

VI. Թէև սուլթանը իսլամի առաքեալի [Րէսուլ—այս է Մահմէդի պաշտօնական անունը, և այդ ախադոսով նրան անւանում է իսլամ աշխարհը] և նրա յաջորդների տեղակալն է, կրօնի պալատն է, բայց նա իրաւունք չունի կրօնական վճիռներ տալ, ինչպէս տալիս են ուրիշ դաւանանքների կրօնապետները: Խալիֆը զուրանի ու շէրիաթի շաւղից զուրս գալու արտօնութիւն չունի. սխալանքների տեղիք շտալու համար, հէնց նախկին ամիրապետների ժամանակից, կարգ է դրւած, ամէն մի գործ նախապէս յանձնել ամենայայանի մի քանի իւլէմների վճռին, ջոկ ջոկ, և ապա գործադրել: Խալիֆներն իրանք իւլէմներից, որին որ կամեցել են, նրան են յանձնել գործերի վճիռը: Չէյխ-իւլ-իսլամի [երկրի առաջին

կրօնապետը] ընտրութիւնն ու հրաժարեցումը բացարձակապէս կախում ունի սուլթանից: Չէյխ-իւլ-իսլամն էլ նշանակում է, դարձեալ խալիֆի բարաթով, նշանաւոր իւլէմներին, պետութեան գաւառների բոլոր միւֆթիներին (վիճակաւոր վերահսկող կրօնի), դալիներին (վիճակաւոր դատաւոր), միւղէրիսներին (նոյն մզկիթների քարոզիչ-ուսուցիչ) և ուրիշ սպասաւորներին: Այս պաշտօնական կղերները վարում են իսլամի գործերը շէրիաթի համաձայն, մեծ իմամին փոխարինելով: Ի՛նչ մեծ-մեծ արտօնութիւններ ունին իւլէմները, բայց և որքան ստորացած են իրանց գործերով:

Պաշտօնականութեան երկիւղով, չազ տեղերից շրթանւելու և բարձրանալու տենչով մոլորւած, ամբողջ բարձրագիւր կղերը ստիպւել է համակերպւելու սուլթանի վարչութեան, մինիստրութեան հետ, այնպէս որ դա. իր ազդեցութիւնը և վարկը կորցրել է երկրորդական իւլէմների, սօֆթաների և մօլլանների աչքում և ժողովրդից չի վայելում նախկին յարգը: Թէ ևնիշարութեան ժամանակ և թէ նրանից յետո, նշանաւոր իւլէմները քանի գլուխները քարձրացրել են, բողոքել են ապօրինութիւնների դէմ, ժողովրդին, իրանց աշակերտներին զրդուել են հիւնքեարիներին դէմ, վերջիններս լռելիան, առանց ցոյցի, նրանց բռնել կատարել ու գաղտնի ջուրն են գցել ձկնիւրին կերակուր: Վերջին դարում քանի քանի հազար սօֆթաներ ու մօլլաներ կապւած՝ նաւեր են լցւել ու ծովերի խորքերը թափւել:

Սուլթան Մահմուդ Բ. ևնիշէրիները կոտորելուց, սուսաց հետ խաղաղութիւն կապելուց յետո, երբ ցոնկանում էր անկեղծ կերպով մտցնել իր պետութեան մէջ, երսպական բարեկարգութիւնիւններ, իւլէմները նրա առաջը կարեցին, շթողին այլ ևս ոչ մի քայլ առաջ գնալու: Պետութիւնը այդ



ժամանակ ծանր պարտքի աակ էր և միջոցներ էլ չկար ըէ-  
ֆորմներն իրագործելու: Սուլթանի մտերիմները խորհուրդ  
տուին, ֆրանսիացիներէ նման, վազֆները ծախել [մզկիթնե-  
րին և իւլէմներին յատկացրած անշարժ կալածանքերը], իսկ  
կղերին պետական գանձարանից թոշակ տալ, որով ոչ մի-  
այն պետութեան պարտքը կարող է վճարել, բարեկարգու-  
թիւններ մացնել, բերդեր, նաւեր շինել տալ, դորանոցներ  
ու հասարակական հիմնարկութիւններ շինել, այլ այդ ըն-  
թացքով կկարողանար բոլորովին ընկճել իսլամի կղերը: Ծա-  
խելով վազֆները, սուլթանը բոլորովին կփշրէ իսլամի իւլէմ-  
ների ոյժը, որոնք իրանց ապրուստի, թոշակի սիրոյ համար,  
պարտաւորեալ աւելի շուտ պիտի ընկճէին, ձուլէին պետու-  
թեան և նրա շահերի հետ, որով աւելի արագ կարելի կլի-  
նէր կատարել կարեւոր բարեկարգութիւնները:

Բայց կղերը, հանկանալով սուլթանի միտումները, այն  
պէս ընդդիմութիւն ցոյց տուաւ, այնպէս լարեց ժողովուրդը  
հիւնքեարի դէմ, որ սուլթանի ամենամօտ անձնաւորութիւն-  
ները նրան «գեւաւոր» [անհաւատ] համարելով, խորշում, հե-  
ռանում էին նրանից: Բանն այնտեղ հասաւ, որ թշուառ սուլ-  
թանը կորցրած իր հաւատը իրան շրջապատողների վրա,  
փախս էր տալիս բոլորից և հանգստութիւն չէր գտնում: Մի-  
այն սիրելի քրոջը վատահած, նրա մօտն էր միայն ապահո-  
վապէս քնում, հանգստանում Չամլճայի բարձունքի վրա: Բայց  
այնտեղ էլ իւլէմների ձեռքը նրան դադար չտուաւ. մի գիշեր  
բարձերը բերանին գրին, խեղդեցին նրան, մօտ քառասուն  
տարեկան հասակում, իր կեանքի այն շրջանում, երբ նա ան-  
ձամբ ամէն բան քննած, ամէն բան ուսումնասիրած, ամէն  
ծրագիր պատրաստած՝ ձեռնամուխ էր լինելու իսկական ըէ-  
ֆորմատոր դառնալ:

Երբ բուզարիայի սարսափներէց յետո, 1876 թւին,  
սուլթան Ազիզը, Աստորիայի կարինէտի առաջարկութեամբ,  
կերտական պետութիւնների պահաջներին մի կերպ բաւա-  
րարութիւն տալու նպատակով, հրատարակեց մինոր «Խաթ-  
թը-հիւսմայիւն». որով քրիստոնեա հպատակներին իս-  
լամի հետ կատարեալ հաւասարութիւն էր խոստացում, ա-  
մէն գործում, վկայելու իսլամների հետ հաւասար ձայնով,  
վերացում էր դիւսորական տուրքը (բէդէլէթը-ապէրիէ) և  
դրա փոխարէն նոյն օրւանից ծնւած քրիստոնեա մանուկնե-  
րը պարտաւորում էին զինուորակոչութեան ենթարկելու,  
կատակեց իսլամ ամբօխը, մզկիթների մէջ բողոք բարձրա-  
ցրեց և իսլամների կողմից կատարեալ հալածանք սկսեց  
քրիստոնեանների դէմ յայտնապէս:

Այդ ժամանակ առիթից օգտւելով, սուլթանի հակառա-  
կորդ կուսակցութիւնը միացաւ իւլէմների հետ և ճնշում  
գործ դրեց սուլթան Ազիզի վրա: Մի քանի ցոյցերից յետո,  
սուլթան Ազիզը զիջաւ իւլէմներին և իրանց ընտրելիներին  
կանչեց, յանձնեց մինիստրութիւնը: Միզհատ փաշան, իւլէմ-  
ների հետ ձեռք ձեռքի տաւ, կղերի ձեռքով, Օսմանեան  
պետութեան բոլոր մզկիթների իմամների միջոցով, իսլամ  
ազգարնակութիւնից գաղանապէս, իր նախօրօք պատրաս-  
տած, տպագրւած թերթերով ստորագրութիւններ հաւա-  
քեց, որով ամբողջ իսլամ ժողովուրդը իր դայրոյթն էր յայտ-  
նում հիւնքեարների ընթացքի համար, իսլամի շէրիաթը սո-  
նակիտ տալու պատճառով: Այդ հանրագրութիւնների վրա  
հիմնւած շէյխ-իւլ-իսլամ Խայրուլլահ էֆէնդին ֆէթուա տուաւ,  
ցած իջեցնել իմամի աթոռից Ազիզ սուլթանին և նրա տեղ  
բարձրացնել Մուրադին, որից սուլթանացած արքայասպանու-  
թիւնը պարզ է աշխարհին:



Այս իսկ պատճառներով սուլթանները միշտ վախենում են և շեն համարձակում զուրանի, շէրիաթի հակառակ քայլեր անել, ժողովուրդին չզբոստելու համար: Բարձրագիւր իւլէմներն էլ միջին ճանապարհը բռնած, երբեմն հիւնքեարի կողմն են առատանում, երբեմն էլ ժողովուրդի, սրով երկրին ակրում է կատարելու անիշխանութիւն: Ո՛չ շէրիաթն է թագաւորում, ո՛չ էլ նորակազմ օրէնսդրութիւնները. խալիֆը, իւլէմները, վէզիրները այս կողմն էլ են թեքում, այն կողմն էլ, յայտնի բան է միշտ իսլամի շահերին նախապատիւ տեղ տալով: Այդ երկզիմի, լիովին շէրիաթին հակառակ ընթացքը նկատելով իսլամ հաւատացեալները, շեն կարող հիւնքեարին խալիֆ համարել և զէպի նա զզւանք չզգալ:

VII. Իսլամ ժողովուրդը, իւր պետական պարտաւորութիւնները կատարելուց առաջ, իր հասարակական իրաւունքների աէքն է սուլում դառնալ: Ամէն մի իսլամ, նորադարձ, թէ դարեւոր իսլամի սերունդ, իւլէմ, թէ գոհհիկ, երկրագործ, թէ արհեստաւոր, ծառայող, թէ պաշտօնակալ, անխաիր իրան ժառանգորդ է համարում իսլամի պետութեան մէջ: Պէտք է իմանալ, որ դասակարգութիւն, իշխանականութիւն, զարմականութիւն, աղնւատոհմութիւն չէ ընդունում զուրանը, իսլամը իր հեռանդների մէջ խարսութիւն չի դնում. միայն ոչ իսլէմներն են, որ շեն կարող Ջհէննէթի որդոց հետ հաւասար վայելել երկրի բարիքները: Պատութեան ամբողջ կարողութիւնը իսլամի սեփականութիւնն է, «բէյթ իման» է. ոչ-իսլամը «բայա» (երամակ) է երկրի մէջ, սրը շէրիաթի համաձայն, պետական, վարչական սր և է գործում ոչ ձայն ունի, ոչ կարող է միջամտել և ոչ էլ իր վիճակի գէմ բողբոխ: Կատարութեան մասնակցելու իրաւունք չունի «բայան», սրան կառավարելու են իսլամի որդիքը: Քրիստո-

նեայի կաշքը, կարողութիւնը իւրացնելը, ուտելը, խելը յանյանք չէ, որովհետեւ այդ ամէնը իսլամի սեփական կաւածներին արդիւնքից յաւելած է բայայի մօտ մնացած. բայայի դաւակնելը յափշտակելը բարեգործութիւն է, նրանց իսլամացնելու համար՝ յաւիտենականութեան մէջ աւելի շատ հիւրիններ են խոստացւած իսլամի ժառանգորդներին:

Ամէն մի լաւ բան իսլամի դաւակնելին է պատկանում, լաւ ձին, լաւ զէնքը, լաւ այգին, լաւ արօտատեղը, լաւ հագուստը արժանի է զուրանի որդիներին, նրանք առանց այլ և այլի կարող են յափշտակել բայաներից, որովհետեւ նրանք բայաների կեանքը խնայում են, պաշտպանում են օտարների յարձակումներից և տեղաւորել են իրանց հովանու ներքե: Բայա բառը հպատակ բառի իմաստով չէ ընդունում իսլամը: Բայան նրա աչքում մի տեսակ ֆէլաւ է (ինչպէս քիւրդերն անւանում են քրիստոնեաներին), որը պիտի դասի, աշխատի իր տիրոջ համար և յանձնէ այդ աշխատութեան պտուղը ամբողջապէս իսլամի դաւակնելին, առանց մտածելու անգամ իր ցամաք օրապահիկի համար: Ամէն մի իսլամ ձգտում է հրամայող դառնալ, պահանջող լինել ոչ իսլամի գլխին, և բայաներին իր երկնապարզ ստրուկ է համարում: Այս ամէնը իւրաքանչիւր իսլամի հոգու մէջ մտած, մարմնացած մտարութիւն է մանուկ հասակից: Ընտանիքի շրջանը, զբացիութիւնը, կղերը, կառավարութիւնը և դաստիարակութիւնը այդ ոգին են ներշնչել նրա մէջ և այդ ամէնը նրա աչքում սովորական բան է դառել:

Իսլամ անհատը զարմանում է, երբ լսում է, որ իր բէտուլի տեղապահը, այդ բայային ուղում է ստրկութիւնից բարձրացնել, կամ աւելի լաւ է ասել, իրան նւաստացնել և բայայի հետ դասաւորել զայրանում է, երբ նրան ազատ



Թոյլ շին տալիս բայայի աշխատածից լիտլի օգուելու՝ կատաղում է, երբ բայան ընդիմադրում է նրան՝ յափշտակութիւնների գէպքում՝ բորբոքում է, երբ նրան դատի են հրաւիրում բայային հասցրած չարիքի համար՝ արհամարհում է այն ատեանները, որտեղ դատաւորների և կառավարիչների շարքում տեսնում է բազմած բայային՝ մերժում է այն վճիռները, որ չի կայացրել իր դագին, չի հպատակում այն հիմնարկութիւններին, որտեղ շէքիաթի փոխարէն մի լինշ որ կանոնադրութիւն է գործածւում և չի ճանաչում այն խալիֆին, որը ըէսուլի հրամանների հակառակ, շէքիաթի ատանդութիւնների գէմ է գործում:

Վերջացնելով միւր խօսքը, եղջակացնում ենք: Օսմանեանների բախտը գէպի անկումը թերւելուց յետո, երբ պարբերաբար նրանց բանակները իրար ևտից սկսեցին զլիակոր վերադառնալ պատերազմական դաշտերից, երբ սրանց յաթիոնները գրաւեցին իսլամական ընդարձակ նահանգները և իլրումն այդ ամենի, երբ հիւնքեարները խոնարհեցին, պարտաւորեցին քրիստոնեա պետութիւնների հետ կապած գաշնադրերի զօրութեամբ՝ վերանորոգութիւններ մտցնել իրանց երկրում, Թոյլ աւին քրիստոնեա պետութիւններին միջամտելու իսլամի երկիրների ներքին գործերում. մի խօսքով ուղեցին շափ ու սահման դնել իսլամի անսանձ հարստահարութիւններին.— իսլամ ժողովուրդը, կղերը շէքիաթի գիշանել, նկատելով իրանց սուլթանների անկումը, թուլութիւնը, որին և հետեւեց խալիֆի երկրում աստիճանաբար շէքիաթի գործադրութեան գաղաբումը, իսլամականների սիրան էլ քիշ քիշ սառեց գէպի Օսմանեանների հիւնքեարը, թէ պետութեան սահմանների մէջ և թէ գուրսը իսլամականները սկսեցին խորթ աշքով նայել սուլթանին:

Արդէն սրանից 50—60 տարի առաջ նշանաւոր իւլմներ գաղապարի տարածում էին այն միտքը, թէ խալիֆայութիւնը գուրս է գալու հիւնքեարների ձեռքից, թէ հիւնքեարների համար «խուլգրէն» կարգալը մեղք է, յանցանք է, բայց ոչ սիրտ չէր անում հրապարակ գուրս գալ, ամենքն էլ սպասում էին Մահդիի երեւալուն, որը պիտի զօրացնէր իրանց անընկճիլի պետութիւնը, բարձրացնէր սանջագը շէքիֆը և սասանեցնէր գեաւուրներին. ախրելով ամբողջ աշխարհին: Իսլամները սպասում էին «ամենազօրաւորին». ըէսուլի կապի համաձայն նա պիտի գայ, հասնի և նրանց ազատէ մեղկացած իւլմներից և անօրինացած սուլթանից ու վերանորոգէ իսլամի օրինական խալիֆութիւնը և վերահաստատէ շէքիաթը:

Երբ Եղիպտոսում, 1830-ական թւականներից յետո, Մէհմէդ-Ալի փաշան, Օսմանեանների նախկին կուսակալը, ապրտամբեց, զօրացաւ և տիրեց, բացի Եգիպտոսի հարեան նահանգներից, Ասորքին ևս, այն երկրին, որտեղից կորէիշները. իւլմները հրամայել էին աշխարհին, իսլամական սկզբունական դարսւմ, երբ Մէհմէդ-Ալին՝ Չամը տիրելուց յետո մօտենում էր Փոքր-Ասիային, իսլամները սրտատրոփ սպասում էին, որ կդնա և կխլէ հիւնքեարներից խալիֆութիւնը: Բայց կը:պան գաղաբեցրեց նրա արագ, արձակ և ազատ քայլերը Գ. Պօլիս դիմելու: Վերջապէս սրանից 17 տարի առաջ, կըր Մահմէդին Մուղանում երեաց և Մահարալում հաւաքեց իր գնդերը, այլ ևս իսլամ աշխարհը կասկած չունէր, որ նա պիտի վերանորոգէր խալիֆութիւնը ս ախրէր աշխարհին: Բայց այդ անգամին էլ իսլամի յոյսը փշրեցին անզլիացիները, Մահդիի ճանապարհն էլ կտրեցին:

Այժմ իսլամ աշխարհը, հիւնքեարներից յոյսը կտրած, ձեռքերը ծալած սպասում է մի նոր Մահդիի, որը կարծում ենք և հաւատացած ենք, որ հրէաների սպասած Մէսիայից վաղ աշխարհ չի գալ:



# Շ Է Ր Ի Ա Թ

ԹԻ

Կ Ո Ռ Է Ք Ս?

«Հաւասացեալներ, ոչ ոքի հետ անկեղծ  
բարեկամութիւն մի՛ կապիք, այլ միայն ձեր  
մեջ. նրանք անպայման ձեզ խելահաս կա-  
նեն, նրանք ցանկանում են ձեզ կործանել»:

Ղուրան III Իմրան, 114 այեաթ:



## ՇԵՐԻԱԹ ԹԷ ԿՈՂԵՔՍ?

I.

Մարգարե՛, կուիր գեաւուրեն-  
րի եւ կեղծաւորենի դեմ նա-  
խանձախնդրութեամբ եւ անգուր  
եղիւ նրանց հետ: Նրանց բնակա-  
ւանք գեհեհն է:

Չուրան սիր. LXVI Թէհրիմ 9 ալ.

**Գ**րեթէ հարիւր տարուց աւելի է, որ արեւելքում՝ Քիւ-  
զանդական կայսրութեան աւերակների վրա բարձրացած Օս-  
մանեան պետութեան երկրներում՝ աշխատում են ամէն տե-  
սակ միջոցների գիմելով, պետական, հասարակական, տըն  
տեսական, զինւորական և քաղաքացիական վերանորոգութիւն-  
ներ, փոփոխութիւններ մտցնել, բայց այդ անվերջ ջանքերը  
համարեա թէ ապարդիւն, առանց զգալի հետեանքների ևն  
մնացել: Վերանորոգութիւնների համար տրւած բոլոր հրո-  
վտրտակները <sup>1)</sup>, հրատարակւած օրէնսդրութիւնները՝ քննա-  
կան հայեացքի առաջ՝ նմանում են մի տեսակ խարէութեան,  
նենգամիտ և խարդախ քաղաքականութեան ցոյցերի, վերու-

<sup>1)</sup> Խաթթը-Հիւմային 26 ձարան 1255 (1838 թ.), Խաթթը-Չէրիֆ 1  
Ջէմազիլ ախր 1272 (1856 թ.), Խաթթը-Հիւմային 23 Ջիլհիջէ 1277  
(1870), Ֆէրմանը-Ալի 1292 (1875) և այլն:

Արսասպա՛մ „ՏՈՒՍՁ“ շաբաթաբերից



ոռոյց, կեղծ, ոսկեայ առարկաների, որոնց կեղևի մէջ անպէտք աղբով է լքցրած: Եթէ լրջութեամբ և ուսումնասիրութեամբ հետեւենք երկրի պատմութեան, ժողովրդի մէջ կատարւած անցքերին և քրիստոնեաների վիճակին, մենք բարե նորոգւած փոփոխութիւն չենք նշմարիլ: Անցեալ դարում քրիստոնեայի հետ ինչպէս որ վարւում էին, գրեթէ նոյնպէս են շարժւում և այսօր:

Թէ տաճկաստանի քրիստոնեաները և թէ Եւրոպացիք մեծ համակրութեամբ են դիմաւորել՝ ենիշէրիններին կոտորելուց յետոյ՝ պարբերաբար հրատարակած բոլոր հրովարտականերին և օրէնսդրութիւններին: Այդ վերանորոգչական հրովարտակաները և օրէնսդրութիւնները նենգութեամբ, թէ ոգևորւած յափշտակութեամբ, պարբերաբար ֆրանսերէն թարգմանելի, Կ. Պօլսում Օսմանեան պետութեան հաշուով սպաղընի և ցրնի են արեւմուտքում հետաքրքիր, բանիրուն և զիպլոմատիք շրջաններում: Ո՞ր յառաջագիմական կուսակցութիւնը, կամ անհատը սրտատրոփ չէր դիմաւորիլ բարբարոս արեւելքում, կիսափայրենի աղգերի մէջ, մոլեռանդ խրամի տիրապետութեան տակ հրատարակւած և ժողովրդին, ազգաբնակչութեանը կատարելագէտ հաւատարութիւն խոստացող հրովարտականներին: Այն հրովարտականներին, որոնք քարոզում էին՝ ջնջել ժառանգական բէզութիւնները, աղալընները, խիել ի ս լ ա մ ի հ ա մ ա յ ն ա կ ա ն հ ո գ ե ը ր Է) և վարչական

1) Իսլամական հասկացողութեամբ, չէրի (կրօնական) վարդապետութեան համաձայն, իսլամի զինւորներով նւաճած և ինքնակամ հպատակած բոլոր երկրներին հողերը կազմում են իսլամի համայնքի ընդհանրական սեփականութիւնը—բէյթ-իւլ-մալ, կամ Երազիլ—Ամիրէ (ամիրապետական հողեր) և վազֆներ: Այդ կալածքների երեսը մասնատրոնների կապալով (դաբալա) արում է ընդմիշտ օգտակու տասնորդական հարկով, բայց ոչ սե-

կրաւունքները այդ ժառանգական առանձնաշնորհեալ դասակարգերից, որոնք մէկ-մէկ դէրէ-բէզի (ապստամբ, անդուսպ իշխան) դարցած շէին հպատակում ոչ մի իշխանութեան և կամայականութիւններով կեղեքում, հարստահարում, տանջում էին երկրագործ ու արհեստաւոր ժողովուրդը:

Երկրագործ զասակարգը, որ մինչև վերանորոգութիւնները իր հնձի համարեա կէսից աւելին յանձնում էր կալածական բէզին, կամ աղային, թէ որպէս համայնական, թէ որպէս պետական և թէ որպէս վարչական հարկ, կատարում էր այդ աղայի տնտեսական, անական և մասնական ծառայութիւնները, աչքի արտատունքները, որտի խորքից հաւաքանքները զոպած՝ տանում էր նրա ամէն տեսակ անարգանքները և զրկանքները, ի՞նչ մեծ հրճանքով էր դիմաւորելու այդ խոստացւած օրէնսդրութիւններին և կարգերին, նկարագրելու կարիք չկայ:

Որի սիրտը չէ բարախել սուլթան Մէջիդի Օսմանեան նահանգներին, դաւաւններին, աւաններին և գիւղերին շնորհած ինքնավարութեան կանոնադրութիւնները կարգալիս: Վարչութեան բոլոր գործերում պետութեան ներկայացուցիչներին—վալիին, կամ միւզլիին այդ օրէնսդրութիւնների

փականութիւն երոտական իրաւարանական բառի մարով (propriété), իսկ կալածքը միշտ մնում է Բէյթ-իւլ-մալ: Եօմէրն երբ նւաճեց Պարսկաստանն ու եզիպտոսը, բոլոր հողերը համայնականի վերածեց: Recherches sur la constitution de la propriété dans les pays Musulman p. 122 et 123, Worms: Ընդմիշտ կազալով օգտակու իրաւունք ունեցողը, կարող է իր իրաւունքը ծոխել, զբաւ զնել, բայց միջից դուրս եկած հանքին՝ ոսկուն և գտնած իրին դարձեալ տէրը Բէյթ-իւլ-մալն է: Legislation musulman II p. 269 293 et 648 Perron. Ղուրան սիրիա II Բէզարա 27 այեաթ:



համաձայն արևում է միայն երեք ձայն (վալին, օդնականը և քարտուզարը) ժողովրդի ութ-իննը ձայնի դէմ: Հապա հասարակական և համայնական ընտրութիւնները, որքան մանրամասնութիւններով որոշում է անհատի ընտրելու, ընտրելու իրաւունքները, պաշտօնականների անսահման շէղարութիւնը<sup>1)</sup>: Ինչպէ՞ս չհիանայ մարդ, երբ կարգում է սուլթան Մէջրիդի Պարիզի կոնգրէսից առաջ տւած հրովարտակը: Մարդու, անձնաւորութեան անձեռնմխելիութիւնը, ամէն տեսակ բէգեարից (ձրի աշխատանք), անորոշ տուրքերից, կամայական պահանջներից, սովորական փէշքեաշներից և կաշատաւութիւնից ազատութիւնը: Մարմնական պատժի իսպառ բարձումը. ծեծ, քաշքշել, դաղել թաս-անցկացնել, ջուր կտպել (մէջքին), կղէզ դնել, անդամները կարել, գլխատել, կախել և սուրիչ ամէն տեսակ տանջանքների վերացումը—որքան քրտագրաւ է: Այդ քաղաքական, հասարակական, դատաստանական և քրէական օրէնսդրութիւնները կարդալիս, քրքրելիս, սւմ միտքը ակամա չէ ընկել նապօլէօնի ցօձերը:

Դեռ 1866 թ. սուլթ. Ազիզը Պարիզից վերադառնալուց յետո, լուսաւորութեան նախարարութեան համար հաստատած ընդարձակ օրէնսդրութեան հետ, Օ ս մ ա ն ե ա ն երկրում սւսումը պարտադիր հրատարակեց: Այդ կանոնադրութեան համաձայն, հրամայւած էր լուսաւորութեան մինիստրին՝ բաց անել երկրի ամէն մի անկիւնում՝ զիւրում, աւաններում պարտ ու պաաշաճ ուսումնական հաստատութիւններ, տարրական, միջնակարգ լիցէներ, մասնագիտական գպրոցներ և համալսարաններ: Այս ուսումնական

<sup>1)</sup> Վիլյէթների վարչութեան յատուկ կանոնադրութիւն, որտեղ կան նաև սուլթանների նշանուոր հրովարտակները և հրահանգները. Կ. Պօլիո 1868 թ. Գրլլըճեանի հրատարակ.

հաստատութիւնների գոյութիւնը պահպանելու համար, նոյն թիւն հրատարակեց մի ուրիշ հրովարտակ, որ երկրի բուսականութիւնից մի տասներորդ հարկի [աշար] փոխարէն, ստացելի մի ութերորդը և յաւելւած հարկը սահմանի լուսաւորութեան նախարարութեան ծախսերին: Հէնց այն տարւանից սիսեցին քրիստոնեա ազգաբնակչութիւնից այս աւելւածով հարկը հաւաքել, այն ինչ մինչև այսօր, ուսումնարաններ, պարտադիր ուսումն դեռ պիտի կորգադրին...

Երբէք զարմանալու չէ. եթէ երկրի դրութիւնը քնննք խլամի հայեացքով և հասկացողութիւնով, թէ ինչի շնն կոտորւում, շնն գործադրում լուստացւած և հրատարակւած այդ օրէնսդրութիւնները: Այն ինչ փոխանակ գործադրելու այդ օրէնսդրութիւնները, հաւատարացնելու ազգաբնակչութիւնը, պաշտպանելու անհատական իրաւունքները և ապահովելու քրիստոնեա ազգաբնակչութեան գնէ պատիւն ու կեանքը. մենք երկրի ամէն մի անկիւնում զիմաւորում ենք հարստահարութիւնների, զրկանքների, կոզապուանների, բարբարոսական տանջանքների, անզուսպ հառաշանքների և դժոխային կոտորածների: Ամէն տեղ ժողովուրդը, քրիստոնեա ազգաբնակչութիւնը գրաստների պէս տանջւում են. քաշելով իրանց ուժից շատ բարձր հարկերի ծանրութիւնները և շնչասպառելով այդ վճարումները հաւարոզ անխիղճ մխտարների ճիրանների տակ: Հարկեր, սչ միայն պետական, հասարակական, այլ գրանց կրկինից և քոտապատիկից աւելի մասնական պաշտօնականների, քիւրդ բէյերի, քաղաքացի ազանների, շէյխերի, հարկահաւաքների և շղիտեմ էլ ինչերի ձրի ծառայութիւնները, անանուն հարկերը, անվերջ տուգանքները և վճարումները:

Թանկիմաթից առաջ ամէն մի հողաբաժին, զիւր, կամ



գաւառակ կաղմում էր մի աղալը, կամ բէգլը, սրի տէրը իր օգտի համար պաշտպանում էր կողմնակի աւարառութիւնից, կողոպուտաներից մասնական անհատների ոտնձգութիւններից իրան կալածքի վրա բնակւող լայաններին և նրանց սեփականութիւնները: Վերջանալով աղալըղները՝ վարչութիւնները նրանց փոխարինեցին: Պէտք է, որ սրանք պաշտպանէին երկրագործ և արհեստաւոր ժողովրդին, բայց սրանք վաթսուն-եօթանասուն տարւա ընթացքում չկարողացան կանոնաւորապէս բարեկարգել, որ կարողանային իրանց ստանձնած պաշտօնը, իրանց կոշման համեմատ կատարել: Այս պաշտօնականները, որոնք մեծ մասամբ նախկին աղաների, բէգերի ժառանգների դասից էին, իրանց մեղկութիւններից առանց ձեռք քաշելու, կեղեքեցին և՛ ժողովուրդը, և՛ գանձարանը, իրանց ընկերակից վեր առնելով նոյնպէս նորակոշ պաշտօնեաներին և ստիկաններին: Անտէր մնացած քրիստոնէա աղղարնակութիւնից ամէն մի խումբ, պաշտօնական համադրեստով, ստիկան, դէրուշ, մօլլա, քիւրդ թէ բէգ՝ իրան իրաւունքն է համարում՝ այդ թշուաւ բայայից մի բան առնել, իրան մասը կորզել: Այնպէս որ, այժմ ոչ պետական գանձարանն է կարողանում կարգին իր հարկը հաւարել, ոչ էլ թշուաւ գործաւորին և երկրագործին թողնում են, որ իր գառն աշխատանքով ձեռք բերածից կարողանա իր ընտանիքը կերակրելու բաժին հանել:

Այդ բոլոր անկարգութիւնները, այդ աննկարագրելի տանջանքները և թշուառութիւնները նկատելիս, մարդ ակամա մտածում է. թէ ինչի չեն գործադրում այն օրէնսդրութիւնները, այն բարենորոգութիւնները, որոնք կարճ ժամանակամիջոցում աւերւած կործանւած և քայքայւած երկիրը կարող են դրախտի վերածել: Ինչի մեռած տառ են մնացել

այն մեծահնչիւն և վերուն հրովարտախերը, այն սաւառահատոր օրէնսդրութիւնները, որոնք հաստատել և հրատարակել են Օսմանեանների սուլթանները և թագնում են, որ թշուա ժողովուրդը անվերջ հեծէ ու հառաչէ, սգն ու մորմորա:

Այս հարցերին պատասխանելով, համարձակւում եմ ասել, որպէս մօտ ծանօթ խլամական ժողովրդի, նրա վարդապետութեան, գառտիարակութեան, այդ երկրում ծնած, մեծացած, ուսումն առած, որ այս դարիս մէջ սուլթանների հրատարակած հրովարտախերը և օրէնսդրութիւնները բառի բուն նշանակութեամբ, անկարելի է գործադրել: Այդ հատորներով հրատարակած օրէնսդրութիւնները կմրնան մեռած տառ, քանի որ Օսմանեանների սուլթանը աշխարհի վրա գտնւող ընդհանուր սիւննի խլամականութեան համար Ալլահի աշխարհի վրա դրած շուքն է <sup>1)</sup>: Քանի որ Կ. Պօլսում նստող փաղիշահը մահմէդականութեան Իմամը աղամն է [մեծ-իմամ—առաջնորդ] <sup>2)</sup>. Ալլահի խլամների համար չարգած դատաւորն է [հարիմ] <sup>3)</sup>, խլամի համայնական սեփականութեան [Բէյթիւ-մալի] աւանդապահը և Մահմէդի տեղակալն ու յաջորդն է:

Իսլամի վարդապետութեան շրջափակից դուրս, խլամի գաւառանքներին ընդդէմ, ոչ միայն հիմնական վերանորոգութիւններ, այլ մինչև անգամ տարրական փոփոխութիւններ, չի կարելի անել. քանի որ այսօր մահմէդական աշ-

<sup>1)</sup> Излож. Нал. мусулман. закновѣденія ст. 84, 383 и 104 Барона Торнау.

<sup>2)</sup> Ղուր. սիր. II Բեգարա 248. սիր. III Իմրան 25 այ. սիր. XLV Ջասիթ 17 այեաթ.

<sup>3)</sup> Ղուր. սիր. IV Նիսա 62 այեաթ.



խաբհի համար Օսմանեան պետութիւնը ոչ թէ մի սոսկ թագաւորութիւն է, այլ համալսումական կրօնական—համայնքի միութիւնն է կազմում, Մահմէդի հիմնադրած իսլամի ընդհանրական սեփականութեան պետութիւնն է և այդ համայնքի կրօնական սահմանադրութեամբ հաստատուած վարչութիւնը: Պարզ է, որ իսլամիդի հիմնած, մահմեդականութեան համայնականութեան սեփականութիւնը կազմող պետութիւնը, չի կորսող իսլամ դաւանութեան և վարդապետութեան հոգուն հակառակ օրէնսդրութիւնով և կարգերով կառավարել:

Եթէ իսլամի վարդապետութիւնը սոսկ կրօնական, ևրկնային, վերացական սահմաններում սեղմուած լինէր, յայտնի բան է աշխարհական, երկրային վարչութեան համար, մարդկային հասարակութեան որոշուած կարգերը և կանոնները մարդիկ դարձեալ կարող էին իրանց յարմարութիւնների համաձայն փոփոխել, բարեկարգել, բայց իսլամի հիմնադիրը, իսլամի հետևող հաւատացեալներէ կազմուած համայնքի կառավարութեան համար սահմանել է երկնային, երկրային, քաղաքական, դիպլոմատիքական, քրէական, անաստական, զինուորական, անհատական և հասարակական, մի տեսակ կրօնաքաղաքական օրէնսդրութիւն: Այս օրէնսդրութիւնն է իսլամի պատաստանագիրը <sup>1)</sup> և սա է կառավարել ու կառավարելու է իսլամի հետևորդներին: Այդ օրէնսդրութիւնից զուրս իսլամի աշակերտը աշխարհային, մարդկային <sup>2)</sup> մտքի արտադրած ոչ մի օրէնսդրութեան չի կորսող հպատակել և այդ շէրիաթով [երկնքից արւած օրէնսդրութիւնը] պիտի վճար նրա բոլոր գործերն ու վէճերը <sup>3)</sup>:

1) Ղուրան սիրիա IV նիսա 106 այեաթ.  
 — « » XIII Բայիդ 37 այեաթ.  
 2) « » III Իմրան 79 «  
 3) « » XL Ջիսրիֆ 31 «

„երբ քեանֆրենիկն (սեհուս) դիմաւորեք, այն ժամանակ կհրեցեք քեանց գլխները, մինչեւ քեանց բոլորովին ընկնելը:

Ղուրան XLV II Մոհամմէդ 4 այ.

Մահմէդը իր զուրանով մի կրօնական համայնք <sup>1)</sup> կազմեց, մի այնպիսի համայնք, որից հեռոճեալ շատ կարճ ժամանակամիջոցում առաջացաւ մի ընդարձակ պետութիւն: Ղուրանն է <sup>2)</sup> այդ համայնքի երկնային և աշխարհային օրէնսդրութիւնը, որը ամէն մի հաւատացեալ իսլամի հաւատքով և համոզմունքով Ալլահի նւիրական կամքի ու հրամանների արձանագրութիւնն է, որ Ալլահի հրամանով երկնքում հրեշտակները գրել են: անցկացրել արարական լեզուով <sup>3)</sup>: Ղուրանը Ալլահի սահմանած կարգերի և օրէնքների գիրքն է, սրով պիտի կարգադրին աշխարհի վրա ապրող համայն ժողովուրդները բոլոր գործերը: <sup>4)</sup> Այդ ճշմարտութեան ձեւաւորելով մարդիկ խաւարից լոյս, սգիտութիւնից ճշմարտութիւն, կորուստից փրկութեան ճանապարհի վրա են բարձրանալու: <sup>5)</sup> Մի այնպիսի սուրբ գիրք է, որ երկնքից է, անեզծելի, անփոփոխելի, անփոխարինելի, իմաստնագոյն, բուժիչ, սուան անմերձեանայի, շահատող, բացատրող ամէն բանի և ճշմարտութեան ճանապարհն առաջնորդող <sup>6)</sup>: Մի սուրբ յայտնու-

1) Ղուրան սիրիա III Իմրան 100 և 106 այեաթ.  
 2) « » XLV Ջասիէթ 17 այեաթ.  
 3) « » XIII Բաիդ 39 այեաթ. սիր. LXXX Երէս 13—15 այ.  
 4) « » IV նիսա 109 այեաթ.  
 5) « » II Բեզարա 1 և 181 այ. և Ուլա. XXVII նէմել 2 և 78 79.  
 6) « » XII Յոփտէփ 111 և սիր. V Ուլուդ 18 այեաթ.  
 — « » IV նիսա և 84 սիր. XLI Ֆազիլաթ. 89 այ.



Թիւն, որ մաս մաս Ալլահը Գարբիէլ հրեշտակագետի միջոցով Թեւադրեց Մահմէդին և վերջինս արձանագրելով՝ աւելցիր կրօնական համայնքին <sup>1)</sup>, որպէս լուսմն, վերջաբան, կնիք և պսակ բոլոր սուրբ գրքերի, որին ոչ մի փոփոխութիւն չաւանան էլ չէ հետեւելու <sup>2)</sup>: Այս յայտնութեան գրքին առանց կասկածի, անսլայման խորին համոզմունքով հպատակելու է իսլամի աշակերտող հաւատացեալը և այդ հպատակութեան «իսլամ» անունը կրելու <sup>3)</sup>: Իսկ Թերահաւատին, ուստ գիրք կարծողին, հերքողին և կամ սխալմունքներն գտնելու յանդուհոյն սոսկալի յաւիտենական տանջանքների սպառնալիք է կարգում Մահմէդը <sup>4)</sup>:

Ղուրանը բացարձակապէս պահանջում է իր հետևողներին՝ աւելյաման հպատակութիւն իր վարդապետութեան <sup>5)</sup>, հաստատուն հաւատք, խորին համոզմունք նրա բովանդակութեան ամէն կէտի համար <sup>6)</sup>: Այդ բոլոր առաւելութիւններով չօժտած մարդը իսլամ չէ <sup>7)</sup>: Ենթադրութիւնը և կարծիքը օրինադանցութիւն է և ճշմարտութեան հակառակ <sup>8)</sup>: Մար-

1) Ղուրան սիրիա II Բէգար. 19 ալ. սիր. LXXXI Թւրքի 18—21 այեաթ.  
 2) „ „ XXXIII Ինգար 40 ալ. սիր. XI Թովրէ 33 ալ.  
 — „ „ XLVIII Ֆէթիհ 28.  
 3) „ „ XI Ինամ 21 ալ. սիր. VII Արաբի 35 ալ. u. IX Թովրէ 74 ալ.  
 — „ „ X Յոֆն. 18 ալ. սիր. XYIII Քեհահիֆ 55 ալ. u. XXXIX Զէմիր 33 ալ.  
 4) „ „ VI Ինամ 156 այեաթ.  
 5) „ „ V XIII Միւնաֆիդին 1 ալ.  
 6) „ „ IX Թովրէ 75 ալ. սիր, XLIX չիւջիւրաթ 14 ալ.  
 7) „ „ XLIX չիւջիւրաթ 13 ալ. սիր. XLV Զա-սիէթ 31 ալ.

կային մտքի ծնունդը, դատողութիւնը չի կարող փոխարինել երկնային յայտնութեան, Ալլահի զբաժ օրէնքին <sup>1)</sup>:

Իսլամ ժողովրդի դաւանանքով, միայն Ալլահին հաճելի և աշխարհիս ամենից գերազանց համայնքը իրանք են կազմում <sup>2)</sup>, իսկ իրանցից դուրս բոլոր ազգերը, բոլոր կրօնական հասարակութիւնները պիղծ են <sup>3)</sup>: Թէև իսլամի կողմնակիցները ուզում են հաւատացնել, որ Ղուրանը հրէաներին և Նադարեաններին [քրիստոնեա] անհաւատ կռապաշաների կարգը չի դատում, նրանց ջէհէննէմի [գհհհնի] տանջանքներից ազատ է համարում <sup>4)</sup> և գրութիւն ունեցող [էհլի-իւլ-քիթաբ] է կոչում <sup>5)</sup>, բայց իսլամի վարդապետութեան զիբը նախորդ սիւրիայով տաժ առաւելութիւնը ջրում է յետագա սիւրիաներով, երբ Մահմէդը զայրացած հրէաների <sup>6)</sup> դէմ և յուսահատած քրիստոնեաների հաստատմամբ իւնից <sup>7)</sup>, նոր յայտնութիւններ ստացաւ երկնից: Այդ սիւրիաներով, քրիստոնեա ազգերը անհաւատ կռապաշաներից շատ էլ դերագաս չեն համարում, քանի որ պնդում են երբեքութեան խորհրդի վրա, իսլամի վարդապետութեամբ, նրանք միւշիք են (Աստծուն ընկերներ աւագ), կռապաշտ, պիղծ <sup>8)</sup>: Իսկ Թէ քրիստոնեան չի ճանաչում Մահմէդին որպէս մարգարէ և չի ընդունում զուրանը, անհաւատներից տարբերութիւն չունի <sup>9)</sup>:

1) Ղուրան սիրիա VI Իմրան 115 այեաթ.  
 1) „ „ III Իմրան 106 ալ.  
 2) „ „ III Իմրան 9 ալ.  
 3) „ „ II Բէգարա 59 ալ.  
 4) „ „ IV Նիսա 169—172 այեաթ.  
 5) „ „ II Բէգարա 154—157 ալ. սիր IV Նիսա 152—160 այեաթ:  
 6) „ „ „ Ուզուտ 17—18 ալ.  
 7) „ „ „ IV Նիսա 169 ալ. սիր. V Ուզուտ 77 ալ.  
 8) „ „ „ III Իմրան 93 ալ. սիր. LXV Թհհիմ 9 ալ.



Իսկ այդ քրիստոնեա անօրէն և պիղծ պետութիւնները, իսլամի խալիֆայական համայնականութեան զբաղիները, իրանց զիւական պիղծ օրէնքներով և կարգերով ուզում են խախտել Մահմէդի հիմնադրած Քէլամ Իլլահի (Ասուածային խօսք) շէրիաթը և այդ սուրբ օրէնքի փոխարէն ներմուծել իրանց սաղայէլական մտքով յղացած ու շարադրած, կարծիքներով ու դատողութիւններով կազմակերպած օրէնսդրութիւնները: Մի այնպիսի միտք, որն ամբողջութեամբ նախատեսուած և խոտութեամբ արդելւած է զօրանով իսլամի աշակերտներին <sup>1)</sup>:

Իսլամի մղեւանդ ամբոխին և նրա կայր հեանող իւլէմներին շատ քաջ յայտնի է. որ սուլթանները նեղն ընկած, ճարահատ, սախլւած են եղել բոլոր գաշնադրերը, կոնգրէսների վճիռները վաւերացնելու, որոնց հիման համաձայն պարտաւորել են՝ տալ իրանց հրովարտակները և հաստատել օրէնսդրութիւնները:

Բանի որ սուլթանները արտաքին աշխարհի, հարեան թշնամի (զուրանը բոլոր պետութիւններին իսլամական համայնականութեան թշնամի է համարում <sup>2)</sup>) պետութիւնների թնդանօթիների և գրահակիրների ոյժի՝ առաջ խոնարհւելով են զիջել խմբազրելու և կնքելու այդ բոլոր վերանորոգութեան անւան տակ հրատարակւած կանոնադրութիւնները, իսլամը երբէք նշանակութիւն չի տւել այդ մըտած, կամ ստղադրւած թղթերին: Մահմեդականութեան հայեցողութեամբ և հասկացողութեամբ, այդ բոլորը կազմակերպել են ձևականութեան, գրացի թշնամի պետութիւններին խալիլու համար <sup>3)</sup>:

<sup>1)</sup> Զուրան սիւրիա III Իմրան 114 այեաթ.

<sup>2)</sup> ,, ,, LX Միւթահանէթ. 1 այ.

<sup>3)</sup> Երբէք չեմ մտանալ մի իսլամ պետական ծառայողի նկատողութիւնը այդ օրէնսդրութիւնների մասին, երբ ես աշակերտ ժամանակ

Սուլթանների վարկը ընկել է իսլամի աշքում, քանի որ նրանց իշխանութիւնը թուլացել է և ստորացել: Նրանք ընկճած զիջել են ստորագրելու շէրիաթի ընդգլխմ այդ գաշնադրերն ու օրէնսդրքերը, բայց ճգնաժամում տրւած գաշնադրերի անգորութիւնը <sup>1)</sup> և այդպիսի գէպրւած իսլամի խալիֆի կեղծելու և նենգելու արածնութիւնն աշքի առաջ ունենալով <sup>2)</sup>, իսլամի իւլէմները լուսթեամբ համակերպել են և սուլթանի արարքներին ախմա համաձայնութիւն կեղծելով, օրինականի ընթացք են աւել, Մահմէդի տեղակալների այդ հրովարտակներին: Բայց այդ իւլէմներն իսկ իրանց նեղքին շրջաբերականներով իսլամի բոլոր կղեչին, կրէք շին թայլ տւել, շին համաձայնել և շին զիջել, որ այդ «մարդկային մտքերի ենթադրութիւններով և կարծիքներով խմբազրւած կանոնադրութիւնները— օրինագանցութիւնները» <sup>3)</sup> գործադրել իսլամ համայնքի երկրների սրկիցէ անկիւնում, փոխանակ նրանց շնորհւած Չէրիաթի Իլլահիին (Ասուածային օրէնք <sup>3)</sup>):

Գ. Պօլսում մեծ հետաքրքրութեամբ ուսումնասիրում էի գէսթոււրները (Օսմանեանների նոր օրէնսդրութիւնները). դեռ 1874 թ. մի սնանկութեան գործ էր վարում հայրս և մանկացողի մատանները կարգի բերելու համար Ի ս թ ի ն ա ֆ ի (Appellation)-ի կայարանի քարտուղարներից մէկին տուն էր հրաւերել: Այդ մարդը գրողմանքս քննելուց յետո, վիճարանութեան բռնւեց ինձ հետ և երկար թեր և գէմ խօսքերիս պատասխանեց սակւով որ — կթէ ուզում ես մեր երկրում առաջ երթալ, գործ բռնել և յաջողութիւն գանել, ուսումնասիրիր Չէրիաթը: Այդ բոլոր օրէնսդրութիւնները մեր երկրում և ոչ մի հիմնարկութեան մէջ չեն կարող գործադրել, դատարկ խաբէութիւններ են: Փորձով այդ բանը սպացուցւած է:

<sup>1)</sup> Զուրան սիւրիա XVI Նէհիլ 180 այեաթ.

<sup>2)</sup> ,, ,, III Իմրան 47 այ. սիւր, VI11 Ինֆուս 30 այեաթ.

— ,, ,, X Յոփն. 22 այեաթ.

<sup>3)</sup> ,, ,, XԴIX Հուջուրաթ 13 այեաթ:



ձշմարխտ է, որ շատ ցանկալի, շատ փափագելի էր և է օսմանեան սուլթանների համար, բարեկարգել իրանց պետութիւնը եւրոպայում գոյութիւն ունեցող կարգ ու կանոններով և զօրացնել իրանց գահակալական իշխանութիւնը. այդ բարեկարգութիւնների հետ վերապահելով իրանց գերբնախանութիւնը, անբաժանելի իսլամի խալիֆութիւնն և իմամի-աղամի արածուութիւնները: Եթէ մենք մտնենք օսմանեան պետութեան վեց դարի պատմութեան, նրա քայքայման և անկման քննադատութիւնների մէջ, մենք կզգանք, որ որքան փայտալուծ և շուրճ անըջական ցնորք է եղել և իդէալական ցանկութիւն օսմանեան չիւնքեարների համար, տեսնել իրանց պետութիւնը վերափոխուած, ինչպէս իրանց զրացիների երկիրները: Յայց Մահմէդի տեղակալների այդ ցանկութիւնը, մենք համոզուած ենք, որ կմնան յաւիտեան լսկ իդէալական մտածութիւններ և խարուսիկ երազներ:

Ինչպէս շղանկար Սէլիմ Գ.-ը (1789 թ. գահակալ) վերանորոգել իր պետութիւնը, երբ անդուպ ենիշէրինները պատերազմներից գլխակոր փախչելուց յետո, երկիրը, ազգաբնակութիւնը տակ ու վրայ արին, եզրօրը՝ Համիդ Ա. և հօրեզրօրը՝ Մուստաֆա Գ. գահից իջեցրին և արիւնահեղութիւնով ոչ միայն Կ. Պոլիսը, մինչև անգամ իր պալատը ներկեցին: Սրտի խորքերում կուտակուած մաղձն ու անդուպ վրէժը ինչպէս կարող էր թաղել իր մէջ Մահմուդ Բ և շրջարդել, բնաջինջ շանել այն ենիշէրիններին, որոնք մի օրուայ մէջ իր աչքի տուջ երկու սուլթանների՝ հօրեզրօրն ու եզրօր՝ Սէլիմ Գ.-ին և Մուստաֆա Գ.-ին խոզխոզել էին, որոնց տաք տաք արիւնը իր վրայ ցայտելով բինիշն էր ներկել և մարմինը այրել...

Ո՞ր մէկ սուլթանին յայտնի չէ այն վեց դարի պատմու-

թիւնը, որի ընթացքում իսլամի կղերը իրանց ձեռքում խաղալի շինած խալիֆներին, իրանց կամայականութիւններով երկիրը և ազգաբնակութիւնը կեղեքել են. սպարապետներին ու վէզիրներին, ներքինապետներին և ենիշեր ազաններին իրար դէմ դիտելով՝ արքունիքը աղմկել, պետութիւնը քայքայել ու կործանել են: Ո՞ր մէկ սուլթանը չի ջանացել, չի աշխատել թուլացնել իսլամի կղերի զօրութիւնը, որի դէմ ինքը միշտ խրաւրիակի դեր է կատարել: Կամ ինչի՞ հաճելի շպիտի լինէր այդ սուլթանին՝ զոպել կրօնաճոլ ամբօխին, մեծամիտ կղերին և անտանձ ենիշէրիններին և զրանց գլխին արքայալայել անկախ իշխել: Հապա վեց դարու ընթացքում թշնամի պետութիւնների հետ կատարուած հարիւր վաթսուներ վեց սոսկալի պատերազմները, արիւնահեղ կոտորածները, անգութ բարբարոսութիւնները, որոնցից շատերը տարիներ է տեկ, թշուառ, անդէն, ազգաբնակութիւնների դէմ: Հալածուած, տանջուած, սոսկալի զրկանքների ենթարկուած հպտակ ազգաբնակութեան հարիւր եօթանասունից աւելի անգամ կատարած ապստամբութիւնները, որանց դէմ հրովարտակով յայտարարուած պատերազմները, ուղարկուած զօրքերն՝ իրանց սպարապետներով, հեծելազօրով, զրահակիրներով և թնդանօթներով ամայացել են գաւառները, նահանգները ու աշխարհներ, բնաջինջ անել ցեղեր ու ազգեր: Իսկ ենիշէրիների՝ ըացի գաւառներում, նահանգներում կատարած և յաւիտեան մոռացութեան տրուած անթիւ, անհաշիւ ապստամբութիւնները եօթանասունից աւել անգամ Կ. Պոլսում կատարած անգութ կոտորածները, անուկի ապստամբութիւնները և դարհուրելի սրախողխողումները, որոնց թրին գոհել են ինչպէս նշանաւոր վէզիրներ, պաշտօնակալներ, իւլէմներ, դագաթէրներ ու Չէլիս-իւլ-իսլամներ, նոյնպէս և ներքինապետներ



ու սուլթաններ: Միթէ կարող էին զանցառուլթեան ու մոտոցութեան տալ Օսմանեան պետական տոհմի անդամներն ու գահակալներն այդ նոսկալի արկածները:

Օսմանեան երեսուներհինգ սուլթաններից հինգը միայն իրանց բնական մահովն են մեռել, երկուսը պատերազմներում, իսկ մնացեալները կամ հրապարակով գահից վար են առնել, զլիսատեւել, տանջել, ու սպանել, և կամ գաղանապէս պալատում ներքինիների ձեռքով խեղդել, թունաւորել: Այս բոլոր անցքերի պատմութիւնը, երկրի պարբերաբար տմայանալը, ազգաբնակչութեան սպաւելը, արդիւնաբերութեան ցամաքիլը, պետական եկամուտների նւազլը, նամանաւնդ իրանց՝ գահակալների անհաստատ սոսկալի վիճակը և պետութեան կործանման սպառնալիքը՝ իւրաքանչիւր նոր գահակալի ստիպել է մտածել, խորհել և այդ անխշտ հուլթեան, բռնակալութեան և կամայականութիւնների առաջն առնել զբաղան մի օրէնսգրութիւնով. բայց այս մտքերը միայն քաղցր և յուսախար երազներ են մնացել սուլթանների համար և մնալու են...

Ինչպէս ասացինք, իրանք՝ Օսմանեան սուլթաններն էլ համամիտ էին և հոգով ցանկանում էին իրանց զբայի պետութիւնների ստիպմունքներին զիջած վերանորոգութիւնները նրանց երկրներում գործադրելու: Այդ թշնամիների ստիպմունքները սուլթանները իրանց ցանկութիւնների կատարման մի միջոց, մի գէնք էին համարում, սրմնոյով ստիպում էին իսլամ իւլէմներին, իսլամի բէյթիւլէմալի փրկութեան, տալահովութեան և պետութեան յանկարծահաս կործանումից ազատելու համար, զիջանել և պարտ ու պատշաճ ֆէթետաները տալ: Բայց քանի որ ճգնաժամում կատարւած և անօրէն, պիղծ քրիստոնեաների առաջարկութիւններով էր

աահմանւած այդ բոլոր կանոնադրութիւնները, մոլիւանդ ամբոխը վերանորոգութիւններին, զիմադրել է մեծ ատելութիւնով:

Մահմէդը աւստրիական (բեսուլ) և մարգարէական (նէբի) զերից դուրս, սրպէս առաջնորդ (իմամ-աղամ) իսլամ համայնքի, իր ինթացքում այնպիսի պատերազմական գործերի առաջնորդից իրան հետեւողներին, այնպիսի յաջողութիւններով նւաճեց, խոնարհեցրեց, գսպեց հակառակորդներին և որպէս զենպետ ու զատուոր (հաքիմի-չէրի) այնպիսի խելամուլթեամբ քննեց ու դատեց, բաշխեց ու բաժնեց, բաւականացնելով խաղաղացրեց, որ իրան յաջորդող իսլամի առաջնորդներին, իր կենդանի գործերի օրինակներով մի լայնարձակ պետութեան առպարէդ բացեց: Այդ յաջորդները հետեւելով իրանց հիմնադրի օրինակին, հասան նրա ըզներին, ընդարձակելով իսլամի նորակազմ պետութեան սահմաններ Միջերկրականից մինչև Գանգէս, Հայաստանից մինչև Հարէշտան, ամբողջ Ափրիկէի հիւսիսային ափից մինչև Սպանիա և Ֆրանսիա, բազմացնելով իրանց հետեւողների խմբերը: Մահմէդի անմիջական յաջորդները՝ Աբուբէքիրը, Օսմանը, Ալին ու Մուաւին մի գարի ընթացքում այնպիսի ընդարձակ ծաւալի հասցրին այդ պետութիւնը, իսլամի հետեւողների թիւը այնպիսի առատութեամբ բարդութեամբ բազմապատեւեց և իսլամի վարդապետութիւնը այնպէս ամրապնդեց այդ ամբոխի սրբտի խօրքերում, որ ուշադիր հետաքրքրուող չի կարողանում այդ բոլորին առանց կասկածանքի հաւատալ, թէ և փաստերն անհերքելի են:

Հետեւելով իրանց, թէ և մելամաղձոտ, բայց հաստատամիտ օրէնսդրի գործունէութեան կենդանի օրինակին, այնպիսի անձնագործութիւններով և այնպիսի յամառութիւններով առաջ



տարան Մահմեդի դրօշակը նրա անմիջական շորս յաջորդները. որ նրանց յիշատակը անվերջ դարերով անջնջելի է մնալու ոչ միայն իսլամի հետևողների, այլ համայն մարդկութեան որտու՛մ: Իսլամի իմամները անմիջապէս դուրս եկան աւագոս Արարիայից, մտան բաղմաշատ ազգերի մէջ, փոփոխելով իրանց աթուր Չամից Բաղդադ, Գահիրէ և վերջապէս Կ. Պոլիս: Խալիֆութիւնը ինչպէս շէր կապւած քաղաքների հետ. նոյնպէս յատուկ շէր որսչ տոհմի. նա Կորէշներէի Իւմմիներին անցաւ, Աբասեաններից՝ Սելջուկներին, Մեմլուկներէից՝ Օսմանեաններին: Այդ տեղափոխութիւններից և յափշտակութիւններից ոչ մի վնաս չկրեց իսլամը, այլ ընդհակառակը թարմացաւ, ճոխացաւ, զօրացաւ: Եթէ մի հարստութեան ձեռքում նա քայքայուել էր, թուլացել, միւսը նրան կենդանացրեց ու բարձրացրեց: Եթէ մի հարստութեան օղտերը շեղեցան իսլամի նախասահմանած օրէնքի շուրջից, ամբոխն ուրիշ մի արժանաւորի կողմը յռուեցաւ և կամ Մահգիին սղատեց, որ գայ վերահաստատել Ալլահի տւած անփոփոխելի շէրիաթը: Այս բոլորը դուրանի վարդապետութեամբ և նրա հետևողների համօգմունքով միայն Ալլահի կամքով և նրա նախասահմանութիւնների համաձայն էր կատարուած, քանի որ Ալլահը ում որ կամենում է, նրան է տալիս ոյժ, կարողութիւն, փառք և ճոխութիւն: 1)

Թո՛ղ իսլամի ոյժը աշխարհի որ կողմը պատահի՝ զօրեղանայ, թո՛ղ խալիֆական գահը ինչ տոհմի ձեռք ուզում է անցնի. միայն թէ իմամը-ազամը պաշտպանէ համիսլամութեան շահերը, թո՛ղ հաստատապէս պահէ Ալլահի շէրիաթը, իսլամի հետև-

(1 Գուրան սիւրիա III քարա 118, 248, 252 այտթ.

— ,, ,, III Իմրան 25—29 այ.

ողները նրան կպաշտպանեն, և նրան հետևելով, պատրաստ են դոհողութիւններ անել և կեանքերը զոհաբերել (1:

Իսլամի շէրիաթը. նրանց հաւատքով, երկնառք մի օրէնսպրութիւն է. մի սահմանադրութիւն է իսլամի հետևողների իրար մէջ ունեցած յարաբերութեան, ժողովրդի ու նրա խալիֆի մէջ, իսլամի և նրանցից դուրս ազգերի յարաբերութիւնների համար և իսլամ ժողովրդի ու իր Ալլահի մէջ: Այդ շէրիաթովն է կառավարում Ալլահը երկինքն ու երկիրը, մարդիկն ու ջիւները 2) և զրա նշանախեցն անգամ մահկանացուն փոխելու, ձուլու իրաւունք շունի 3): Ալլահը և նրա բէսուլը (առաքեալ) միայն կարող են բացատրել ու մեկնել դուրանը (4:

Այո վարդապետութեան հաւատալիքները այնպիսի խոր արմատներ է գցած իսլամի հետևողների հոգու խորքերում, այնպէս մարմին ու արիւն է դարձել մտկոսանդ ամբոխի համար, որ ոչ թէ սուլթանի հրովարտակները, հաստատած օրէնսդրութիւնները, այլ մինչև անգամ եւրօպական զրահակիրները, թնդանօթներն և ուժանակները շնն կարող այդ

- 1) ,, ,, XXII հաջ 77 այտթ.
- ,, ,, III Իմր. 163—145 այ. ս. IV Նիսա 97 այ.
- ,, ,, IX Թսվրէ 20 այ. LVII հէդիդ 10 այ.
- 2) Գուրան սիւրիա LI Ղէրիաթ 56 այ.
- ,, ,, XXII ճին. 11—15 այ.
- 3) ,, ,, VI Ինամ 115 այ.
- 4) ,, ,, III Իմրան 5 այտթ.
- ,, ,, IV Նիսա 62 այտթ.
- ,, ,, XXV Փուրզան 35 այտթ.
- ,, ,, VII Աբաիֆ 15 այտթ.



մտաւոր ու հոգեկան զգացմունքները ջախջախել, փշրել, անհետացնել: Չկա մի ոյժ, որը կարողանայ այդ հաւատացեալ սրտերի խորքերից կտրել իրանց փայփայած շէրիաթը և նրա փոխարէն դնել վերանորոգչական բարեկարգութեան կանոնները: Իսլամի պետութիւնը կարելի է շատ ու շատ հեշտութեամբ կտրծանել, քայքայել, բաժանել իսլամի համայնական երկրի վրայ նորանոր պետութիւններ հիմնել, կիսկսել այլադաւան ազգերի մէջ, բայց երբէք խալիֆութեան ամբողջութիւնը պահպանելով, չի կարելի նրա պետութեան միջոց շէրիաթը վերցնել, զրա փոխարէն ուրիշ օրէնսդրութիւնով երկիրը կառավարել, կամ բարեկարգել—վերանորոգել, յայտնի բան է, բառի բուն նշանակութեամբ:

Գարեբի, երկար ու ձիգ դարերի անընդհատ քարոզութիւնները, պարբերաբար մեկնւած, բացատրւած վարդապետութիւնները, անզայտարւայ ամեն մի եղանակին իւրտքանչիւր տօնին ու ծոմին կատարւած հանդէսների, զոհարերութիւնների և արարողութիւնների կրկնութիւնները այնպիսի համոզմունք են արծարծել իսլամի հետևողների ուղեղի, արիւնի, ջգերի ու զգացումների մէջ, որ այդ հաւատքը, դաւանանքը թուլացնելու, մեղմացնելու և մտքերի ազատ շարժում առաջացնելու համար, դարձեալ այդպիսի երկար ու ձիգ տարիների քարոզների կարիք կայ: Նախնական թերահաւատ, կամ բռնութեամբ իսլամ ընդունած ժողովրդի որպիքը այնքան զրկանքի և տանջանքի են մատնել, որ նրանց սերունդները կամա, ակամա հաստատահաւատ մտեռանդներ են ծնել, շնորհիւ ընդհանրութեան մէջ ափսոս մտութեան: Թէ միջին, թէ նորագոյն դարերում, իսլամի քաղաքների, աւանների և նոյն իսկ գիւղերի մզկիթների բակում կառուցած մէզբէտներում, այնքան բիւրաւոր և միլիօնաւոր մարդկային ուղեղներում

ծածանել է զուրանի այաթներն (յօդւածներն) և սուրիաներն (զլուխները) իրանց նախապաշարմունքներով և աւելորդապաշտութիւններով, որ սերունդից սերունդ այդ միատիրական քասուեմ շլթայել է իսլամի հետևողների միտքը: Հապա զրացիական, ժողովրդական գիշերային հաւաքումները, ուր մի աղօտ ձլթի ճրագի լոյսի շուրջը հաւաքւած յիսունով և հարիւրով ամբար իրան ծերուկներով, հասակաւորներով, երիտասարդներով և մանուկներով անդադար պատմել են, նշարագրի կրօնական, գաւան սկան, բարեպաշտական և գատաստանական արկածներ և դրանց ազդեցութեան տակ մտամոլորել:

Անջնջելի է ծնողների տնական դաստիարակութիւնը, դաւակնելին սովորեցրած աղօթքները, գաւանական պարտականութիւնները: Հաղիւ է պատահում մի միւսլիմ, որ շրգիտնայ իսլամի երեսուեք երկու պատիրանները, թնգ սովորական աղօթքները, որն անպայման դիտէ իւրաքանչիւր իսլամ, ևօթը տարեկան հասակից: Ամեն մի միւսլիմ մայր իր սրդուն հազար անգամ նկարագրած կլինի իսլամի հերոսների՝ Ալիի, Էսմերի, Օսմանի արկածները և աղջկան Փաթիմէի, Քադիջէի, Այիշէի և ուրիշների պատրաստակամ ծառայութիւնները իրանց ամուսիններին: Երբական տառերը կարծես ստեղծւած լինէին միմիայն իսլամի զուրանը տարածելու համար: Բացի զուրանից, նրա բացատրութիւններից և կենսազրութիւններից ուրիշ գրւածների մարդ հաղիւ է պատահում իսլամի բնակւած բոլոր երկիրների մէջ: Անասիի զոհարութիւններով և ջանքերով յունարէնից արարէրէնի թարգմանւած, կամ փոխադրւած գրքերը իսլամի հետևողների մէջ սրունելը զուր բան է, այդպիսի գրքերի տարածման առաջ պատւարի նման կանգնել են իսլամի իւլէմները: զրանք երբէք չեն թողել, որ ընդհանրանան այդպիսի գրւածները, և մոլի-



ասնդուժիւնը, նախապաշարմունքը վաղուց ջնջել անհետաց-  
րել է այգւլիսի հաղապիւտ գործերը 1):

III

„Միայն հօգօագոյն, իմաստնագոյն Ալլանից օգ-  
նուքիւն, որպէս զի անհաւաստեբի մարմինները  
անդամահասեք, նրանց յաղքահարեք, որ առանց  
ցոնկուքիւններին հասնելու ետ դառնան“:

Ղուրան III Իմրան 122 այգւթ.

Իսլամի հետևորդը իր կրօնի հետ այնպէս պինդ է կապ-  
ւած, իսլամի աշակերտը այնպէս կոյր հպատակ է իր դաւա-  
նանքին, իր հաւատքին, որ շի կարող իր խալիֆայութեան  
մէջ ուրիշ մարդկային մտքի ծնունդով կազմուած գրքերի և  
օրէնքների հաւատ ընծայել, համոզում գոյացել և հնազան-  
դել: Իսլամի հետևորդը կուրաբար, առանց բացատրութիւն-  
ների յտելու. դառում է.—Մէկ է Ալլահը և մէկ է շէրիաթը. թէ

1) Թուրքիում միւշտէիգի սպարանքում մի ախունդի մօտ նըս-  
տած էի, երբ մի զիւզացի կալածատէր եկաւ նրա մօտ և ծոցից դուրս  
բերելով շորի կտորի մէջ փաթեթուած մի զիւք՝ նրան առաջարկեց քննե-  
լու: Ախունդը ձեռքը երկնցուց զիւքն տաւ, բայց մատերի ծայրովն այն-  
պէս էր բռնել, որ կարծես այդ զիւքը գարշելի նեխած գազանի զիտի լի-  
նէր: Ախունդը քրք մօտեցուց զբքի առաջի երեսը իր ակնոցաւոր աչքերին,  
մի քանի տող կարգաց ու թերթեց, իսկոյն մատերի միջից զիւքն ընկաւ  
և նա սկսեց մըմնջել մեղայական աղօթքներ: Ես ապշեցի, իսկ ախունդը  
կատաղի հայեացքով գայրոյթը կալածատիրոջ յայտնելուց յետոյ, օջախի  
առաջից ունելին վերառաւ, նրանով բռնեց այդ գլուխը պիղծ գիւքը,  
վերցրեց և ուղղակի ծոռային տւեց հրամայելով Տա՛ր, իսկոյն զցի՛ր ար-  
տաքնաց: Ախունդը իսկոյն ձեռքերը լաց և հրամայեց սենեակի թաղիքի  
վրայ փուած շիթը լանայ տալ: Երբ առանցին մնացինք ախունդի հետ,

երկնքում և թէ երկրի վրա 1):

Ղուրանի թարգմանութիւնները կարգայով. զուրանի  
օրէնսդրութիւնների հետ ծանօթանալով, զուրանի հիման վրա  
հաստատած հաղիւնները և սխնան, ուսումնասիրելով, զբանց  
մասին ահագին գրականութիւն ձեռքի տակ ունենալով, զար-  
մանալի է, թէ ինչի՛ երոպական դիպումացիան պնդում է, որ  
այդ երկրում կարողանա, թէ բարենորոգութիւններ մտցնել  
և թէ պահպանել իսլամի խալիֆութիւնը իր ամբողջու-  
թեամբ: Պնդում են, իսլամի համայնական երկրներում, Եւ-  
րոպայում գոյութիւն ունեցող հիմունքների վրա, ժողովրդա-  
կան հաւասարութիւն սահմանել, կրօնական անխարութեան  
հայեացքով, պետութեան բոլոր ազգաբնակչութիւնը հաւա-  
սարել:

Եւրոպացի դիպումաւանները, վարչական գլուխները մտա-  
ծում են. թողնել իսլամի զուրանը-շէրիաթը. որպէս կրօնա-  
կան վարդապետութեան մի ձեռնարկ, Օսմանեան երկրնե-  
րում քնակող իւլամի հետևորդների համար, յայտնի բտն է  
քրիստոնէական մատչտապով, իսկ նոր պետական օրէնքներ  
ոսահմանել երկրի ամբողջ ազգաբնակչութեան համար և եր-  
կիրը կատաւարել այդ նորահաստատ օրէնքներով:

շատ ստիպեցի, որ ինձ յայտնի, թէ այն ինչ գիրք էր, որ այնպիսի սոս-  
կալի վիճակի դատապարտեց: Ախունդը ինձ բացատրութիւն չկարողացաւ  
տալ, քանի որ ինքն էլ չգիտէր, թէ ինչ գիրք էր, միայն տուաց.—Բաւա-  
կան է, որ կը օնա կան գիրք չէր:

- 1) Ղուրան սիրիա 11 թղաբա 2,158,256 այ.
- ” ” VI Ինամ 115<sup>7</sup>այ. սիր. 9. Թէօվրէ 31 այ.
- ” ” XI չուգ. 15 այ.
- ” ” XXXVIII Գէսէս 88 այեաթ.
- ” ” XX Թէ-չէ 14 այեաթ.



Ջարմանալի է նոյնպէս, որ Եւրոպոսն—գիւլլոմայիան գլխտենայով որ այդ պետութիւնը, երկիրը ամբողջութեամբ պատկանում է Մահմէդի հիմնած կրօնական համայնքին, սուլթանը ոչ թէ երոպական թագաւորների, կայսրների նման ինքնակալ՝ անսահման տէր էր այդ երկրին, այլ մի խալիֆ է (տեղակալ), մի աւանդապահ իսլամի Բէյթ-իւլ-մալին [համայնական գոյրին], մի առաջնորդ [իմամը—աղամ] իսլամի հետեորդներին և սահմանափակած զուրանի օրէնսդրութիւններով այդ աստուածպետական կառավարութեան գլխին, որն առանց հետեորդների կամքն ու խորհուրդն հարցնելու ոչ մի գործ չի կարող սկսել <sup>1)</sup>, ուղում են այդ սուլթանին աշխարհային այնպիսի իրաւունքներ սահմանել և այդ իրաւունքները պաշտպանելու համար զօրքով, զրամով, զբանակիւններով և թնդանօթններով աջակցել, որ նա իր խալիֆական իրաւունքի հակառակ գործէ և իրանց հաւատար մի ինքնակալ դառնա, պահպանելով միանգամայն Մահմէդի տեղակալութիւնը:

Եթէ քննենք երոպացիների պահանջների էական կէտերը և իսլամի վարդապետութեան դրանց վերաբերեալ անհամբերատարութիւնը, զիջանելու անհնարաւորութիւնը, դուրանի անմիջական որոշումներով և պատէրներով, մինք աւելի որոշ եզրակացութիւնների կհասնենք: Բարենորոգումների գլխաւոր կէտը այն է, որ հաւատար իրաւունքներ ունենան, իսլամի պետութեան մէջ ապրող իսլամ և ոչ-իսլամ ազգաբնակչութեան անխափր բոլոր անհատները:

Բարենորոգումների ամենաէականն և դժւար կէտն այս է.

<sup>1)</sup> Ղուրան սիրիա III Իմրան 153 այեաթ.

Իսկ այդ մասին իսլամը զիջանել չի կարող, քանի որ վարչական ղեկը իր ձեւըումն է:

Իսլամի վարդապետութեամբ, նրա հաւատքի, դաւանանքի համաձայն, իսլամի հաւատացեալները ընդհանուր իսլամական—համայնական բոլոր իրաւունքներին և կարողութեանը հաւասար ընկերակից և բաժնեկից են, մինչև անգամ այդ դաւանանքը մի ժամ, մի բոլոք առաջ ընդունողը <sup>1)</sup>: Իսլամի հետեորդ որպէս բաժնեկից իսլամի համայնական հարստութեան (Բէյթ-իւլ-մալ), կարողութեան և պետութեան, նա տ է ր է նոյնպէս համայնքի շարժական, շնչական և անշարժ հարստութեան: Իսկ իսլամի բայան (իսլամի անասունների հօտերը, նախիրները), այսինքն այն ոչ-իսլամները, որոնք իրաւունք ունին իսլամի աիրած երկրներում ապրելու <sup>2)</sup>, իսլամականութեան գրաստների նախիւն է <sup>3)</sup>: Իսլամական վարդապետութեամբ, դուրանի որոշ պատւիրաններով, այդ բայան երը [անասունների հօտ] իսկապէս պիտի ամբողջական գլխատութեան ենթարկէին, մինչև ամենավերջին անհատը, բայց Ալլահը՝ Մահմէդի քարոզած դուրանի հետեւորդների մարմնաւոր բարիքների ըղձերին բաւարարութիւն տալու մտքով՝ թոյլատրել է, որ դրանք ապրեն <sup>4)</sup>, այն պայմանով, որ իրանց գոյքը, կիանքը պարտաւոր (զիմմի) մնան իսլամի հետեորդներին <sup>5)</sup>: Ամէն մի բայա (անասունի հօտի

1) Ղուրան սիրիա III Ինֆտալ 76 այեաթ  
 2) ,, ,, II Прилож. Кора на Горд. Сабаукова 1879 г. стр. 52—53.  
 3) ,, ,, VII Արաիֆ 178 այ.  
 — ,, ,, XXI Փուրգան 46 այեաթ  
 4) ,, ,, III Ինֆտալ 68—72 ,,  
 5) ,, ,, XI Թէօվրէ 29 ,,



անհատ), ամէն մի զիմմի իր գոյքը և խնայած [սպանման շենթարկած] կեանքը պարտաւոր է իսլամի: և այդ կեանքը վարելու, վայելելու համար, կարճ խօսքով ապրելու համար, զեռ պարտաւոր է իսլամի Բէյթ-իւլ-մալի արկղին ամէն տարի գլխագինը վճարել (Չէզլիէ) <sup>1)</sup>: Գլխատութիւնից ազատելու, իսլամի տիրած երկրում ապրելու, օգր շնչելով ապականելու համար. ամէն տարի, բայան պարտաւոր է կեանքը իսլամի համայնքից զնել, որոշ հարկը տալով:

Իսլամի պետութեան հարեան կառավարութիւնների թնդանթիները ստիպում են, որ իսլամի երկրի և երկնի օրինական ժառանգները զիջանին, իրանց անասուններին հօտերին, գոյութիւնները պարտականներին, ապրելու, կեանք վայելելու և օղն ապականելու համար հարկ (Չէզիէ) վճարող գրաստներին իրանց հետ հաւատար գտնելու, իսլամին շնորհած այս աշխարհի մարմնաւոր բարիքների հետ բաժանորդակից ճանաչելու: Ի՞նչպէս կարող է մի հաւատացեալ իսլամ, առանց իր հաւատքը խտտելու, իր դաւանանքը կասկածանքի մասնելու, իրան հաւատար գտնել մի պիղծ, ստոր, անարգ էակ, որ իր կրօնական հասկացողութեամբ և խորին համոզմունքով, վայրի գազաններից էլ խուսրամիտ է. քանի որ չի գգում իր կուրամատթիւնը, զրկարաց չի ընդունում դուրանի լուսաշաւիղ վարդապետութիւնը <sup>2)</sup>: Ի՞նչպէս կարող է զիջանել իսլամը և պարզապէս դուրանի այեթիներով իր ազատ տրամադրութեանը տակ զբւած այդ զազաններին, գրաստներին, պիղ-

(1) Գուրան սիւրիա IX Թէօվրէ 29 այեթի:

(2) ,, ,, XLII Ֆիւպիլաթ 41 այ.

ծերին բարձրացնելով իրան հաւատարել: Այն բայաները, որոնց ապրելու և շապրեցնելու իշխանութիւնը Ալլահը իսլամի ազատ կամքի և տրամադրութեան տակ է թողել որոնց միայն իսլամի մարմնաւոր բարիքների ցանկութիւններին գոհացում տալու համար է միայն Ալլահը զիջել ընդհանրական գլխատուց, Ալլահի սրբազնասուրը հրամանի ներհակ իրանց Ալլահի ամենասիրելի կրօնական համայնքի անգամների հետ հաւատարել <sup>1)</sup>:

Էլ ի՞նչպէս համբերեն, երբ իսլամի հակառակորդ, պիղծ թշնամիները, իսլամին ուղիղ ճանապարհից—չէրիաթի սրբազան շողից—դէպի նախկին անօրէն պղծութիւնները ձգելու տրամադիր գծօքի զաւակները <sup>2)</sup>, ստիպում են իսլամին, որ մտնեն խաւարի խորխորատները և այդ բայաներից, այդ զիմմիներից և ջէզիէ վճարողներից գաւառապետներ, նահանգապետներ, մինիստրներ և ուրիշ պաշտօնակալներ նշանակին իրանց հաւատացեալներին գլխին, իսլամի կուլածների մէջ: Եւրոպացի յաղթող պետութիւնները իրանց զաշնագրով ոչ միայն պահանջում են քաշել, հանել իսլամի գերիշխանութիւնից իրանց վայելքին ծառայելու շնորհած բայաներին, ոչ միայն ստիպում են, որ Յամանեան ակրութիւնը հրապարակով խոտտանա, չթողնել միւսլիմ ազգաբնակաւթեան, ձեռք տալ այդ բայայի կարողութեանը, աղջիկներին, աղաներին, այլ մինչև անգամ ապահովութիւն են պահանջում. որով իսլամը պարտաւորի իր բայայի կեանքի գոյքի համար պատասխանատու լինել այդ յաղթող պիղծ ազգերի առաջ:

<sup>1)</sup> Գուրան սիւրիա XXX Բում 27 այեթի:

<sup>2)</sup> ,, ,, V Մաիլաթ 17—20, 82—85 այ:

— ,, ,, III Իմրան 142 այեթի:



Այսպիսի դուրանի ընդդէմ սկզբունքներով սահմանուած օրէնսգրութիւնը, միթէ կարելի է գործադրել մի երկրում, որտեղ տիրող դասը շէրիաթի մսկուանդ պաշտպանն է. որոնց կարծիքով դուրանից դուրս ամէն բան պղծութիւն, ապականութիւն է և վայրենութիւն: Այն էլ մտածում են իսլամի ամենամեծ իմամի ձեռքով, իսլամի խալիֆութեան մէջ. առանց վնասելու իսլամի համայնական սեփականութեան և առանց այդ պետութեան ամբողջութեանը և խալիֆութեան իրաւունքները վնասելու: Խալիֆը՝ իմամը, որ իսլամի դէնպեան է, դատաւորն է, և կառավարելու, դատելու, պահպանելու է, Ալլահից բղխած շէրիաթով, յայտնութիւնների տրամադրութեամբ իսլամի պետութիւնը, ժողովուրդը և գահը, էլ ինչպէս կարող է ինքն իր իրաւունքների ներհակ սկզբունքներով օրէնքներ սահմանել և գործադրել:

Վստահաբար կարելի է ասել, որ սուլթանները հողւով ցանկացել են վերանորոգել, բարեկարգել իրանց երկիրը, մտցնել երոսպական կարգեր ու հաստատութիւններ իրանց պետութեան մէջ: Սուլթանները ամէն միջոցի զիմել են, ուղղակի կամ անուղղակի իսլամի կղերին գործիք են շինել, վերջիններից շէրիաթին յարմարեցրած ֆէթւաներ կորզել, իրանց հրովարտակներն ու օրէնսգրութիւնները վաւերացնելով հրատարակել և ամէն ջանք արել են. որ գործադրութեան ղեկն իրանց սահմանած կարգերն ու կանոնները երկրի մէջ, բայց հնար չեն գտել: Պետութեան ամէն մի անկիւնում քրթմնջիւնով, բողոքով, հակակրութիւնով և ցոյցերով են զիմաւորել իսլամները այդ կարգերին:

Վերանորոգչական օրէնսգրութիւնները, եթէ հարկն ստպել է, գործադրել է երկու ոչ-միւսլիմի գործերի վերաբերմամբ: Իսկ եթէ գործը շօշափել է մի որևէ իսլամ անհա-

տի շահերը, վերջինս պատասէ է միշտ սուլթանների հրովարտակները և օրէնսգրութիւնները, ինչպէս իշամեղուն սաբդի սոտայնը ու յենուած դուրանին գոռացել — Իսլամի շէրիաթը կործանուեց, որ գեաւուր — բայան բացարձակապէս վարչութեան ձեռքով մեղ կողոպտէ: Ի՞նչպէս էք ստորացել, իսլամի իւլէմներ, որ մեղ հաւատացեալներին պարտաւորեցնում էք մեր զիմնիւնքին (զոյքով ու կեանքով պարտականներին):

Այսպիսի դէպքերում կառավարութիւնը միշտ մոլորել է, եթէ գործի մէջ միջամտել են և երոսպացի կոնսուլները, կամ ղեռպանաւորները: Բայց ամէն դէպքում կառավարութիւնը, իր շահերը պաշտպանելու համար, պարտաւորել է լուկ և թողնել, որ անօգնական բայային կեղեքէ, հարստահարէ, կթէ ու քերթէ դուրանի հարադատ դաւակը:

— Խօ մի զիմնի համար մի ահապին պետութիւն տուժելու չէ:

Թէև սուլթանների հրատարակած բոյսը հրովարտակները և օրէնսգրութիւնները անցել են իսլամի կղերի ցէն ու օրից, այդ կղերի գրչով խուզել, փոփոխել և դուրանին շէրիաթին յարմարեցնել են, եւրոպայից փոխ առնուած օրէնսգրքերի երոսպական ձեւերով յօդածների մէջ à la իսլամական մեծ-փոփոխութիւններ է կատարել, բայց և այնպէս վարչութեան աջակցող իւլէմների կարծիքները և վկայութիւնները երբէք չեն ներգործել իսլամ ամբոխի և կղերի վրա, որոնք միաբերան միշտ գոռում են. — Մէկ է Ալլահը և մէկ է նրա շէրիաթը: Չէրիաթից դուրս ոչինչ չենք ճանաչում, ոչ մի կարգի հնազանդելու պարտաւոր չենք:

Այսօր Օսմանեան նահանգներից և նշանաւոր քաղաքներից շատերի մէջ, ուր ժողովրդի ազգաբնակութեան մէջ ըստաւար թուով քրիստոնեաներ են ապրում և երոսպացի կոնսուլ-



ներ են նստում, հիմնարկած են նոր կարգադրութիւնների համաձայն այլեայլ վարչական, գատաստանական հաստատութիւններ: Վերայէթի (նահանգական), սանձազի (գաւառական), գաղայի (գաւառակի) և միւղիբի (անւանական) ի գ ա ը է ի (administration) ժողովները, գատաստանական ատեանները, քաղաքական խորհուրդները (բէլէգիէ) ամէն մի աշքի ընկնող քաղաքներում կազմակերպւած են: Այս հիմնարկութիւնները սրբան սր հնարաւոր է եղել, ամէն ջանք գործադրել են, որ արտաքուստ ձեականութիւններով նմանեցնեն համանման եւրոպական հաստատութիւններին: Այդ հաստատութիւնների մասին խմբագրւած են հատընկերով օրէնսդրութիւններ և սոււրածաւալ շրջաբերականներ, որոնք թաւալում են այդ հաստատութիւնների գրասեակների այլ և այլ անկիւններում՝ փոշիների մէջ:

Այդ հիմնարկութիւններից իւրաքանչիւրը, օրէնքով կաւալարելու են ժողովրդից ընտրւած ներկայացուցիչները <sup>1)</sup>: Բայց իսկուպէս զրանց ընտրութեան գործում հասարակութիւնը, ժողովուրդը բոլորովին տեղեկութիւն էլ չունի, թէ ինչպէս են ընտրւում իր ներկայացուցիչ—հաւատարմատարները: Ազմինխտարացիան իր սեղածին է ընտրւում ժողովրդի միջից, կամ ընտրել տալիս: Եթէ քրիստոնեա թեմակալ աւաջնորդները քիչ թէ շատ աղղկից մարդիկ են, կարողանում են իրանց կամքն առաջ տանել: Այդ դէպքում ներկայացուցիչները ընտրւում են աւաջնորդների կամքով:

Ներկայացուցիչները համեմատ քաղաքի, կամ գաւառի ազգաբնակութեան, ընտրւում են ինչպէս միւսլիմներից, նոյն-

<sup>1)</sup> Վերայէթ նիգամամէտի, Կ. Պօլիս, 1868 թ. Գըլլըճճևանի հրատարակ: հայաստան թուրքերէն:

պէս և քրիստոնեաներից հայ, յոյն. հրէա և ուրիշներից: Բայց անօգուտ է այդ ներկայացուցիչների գոյութիւնը, մանաւանդ քրիստոնէինը, հրէայինը. միշտ աւելի քան թէ վնասակար: Գրանք աւելի քան թէ մի-մի կոյր գործիքներ են վալիների: միւթէսարիֆների, գատարանական նախագահների և քաղաքապետների ձեռքում, որոնք յիւսւած այդ ազգաբնակութեան ներկայացուցիչների կնիքներին, աւելի կամայական և աւելի սանձարձակ գործում են յօգուտ իրանց զըրպանի, կամ ներքին հրահանգների: Եթէ մարդ հեռաքրքրութեամբ հետեւէ այդ անիւզու ներկայացուցիչների արարքներով, կարող է մի քանի մեծահատոր անեկոթոններ կազմել ապագա սերունդի դարձութեան համար, բայց մեր յօդածի ծաւալը չի ներիլ այդպիսի անցքերի նկարագրութիւններով <sup>1)</sup>:

<sup>1)</sup> Վերջին 1877 թ. պատերազմի ժամանակ, երբ վարչական ժողովի գրադմունքները պատերազմի խտոնաշփոթութեան մէջ տեղի ունեցած ամենաէական հարցերի մասին էր, երբ Ա հ ք ե տ մ ը հարրը (զինուորական գատարանը) սանձաղի ժողովի ինչ ինչ կարծիքներն ստանալուց յետո, ամեն օր մարդ էր կախողան բարձրացնում, որպէս պետական դաւաճաններ և քաղաքական յանցարտներ, երբ յայտնի տաճիկ-ղիպլոմատ և նախկին սողրագամ Քիւշիք Սայիդ փաշան Կարսում միւթէսարիֆ էր, նկատում է, որ իզարէում ներկայացուցիչներից մէկը, առանց սրեւէ կարծիք յայտնելու, առանց շրթունքները շարժելու, ժողովի արձանագրութիւնները առանց կարգալու և երբէք նրանց բովանդակութեան մասին հետքքրելու, կնքում է և դուրս գնում. միւթէսարիֆը հեզնելով ասում է:

— Յակոբ աղա, զուր ես ձանձրութիւն քաշում և ամէն օր ժողովի գալիս: Աւելի լաւ է դու քու կնիքը պատից կախիլ, քարտուղարն էլ կարիք եղած ժամանակ արձանագրութիւնները քո կնքով վաւերացնի: (Օսմանեան բոլոր հիմնարկութիւնների մէջ ստորագրելու սովորութիւն չկա, անւանական կնքով են վաւերացնում արձանագրութիւնները):



Այդ հիմնարկութիւններէն ժողովրդին, քրիստոնեա ազգարնակութեան բարիք երբէք չի կարելի սպասել, եթէ քննենք լրջութեամբ դրանց մասին խմբագրեալ օրէնսդրութիւնները, որոնք կանխապէս իսլամական խորամանկութեամբ ու գործնական հեռատեսութեամբ են կազմակերպուած և պարբերական շրջաբերականներով կաշկանդուած: Ճշմարիտ է այդ օրէնսդրական գրքերը զ ո զ ե թ ի ձեր, բաժանմունքը, հատուածներն ու յօդուածներն սենին, բայց բովանդակութիւնը շատ մթին է և տարբեր: Իսլամի իւլէմները այնպիսի ցէնզորական պաշտօն են վարել այդ օրէնսդրութիւններէ յօդուածներէ խմբագրութեան մէջ, որ դրանց ծումունն ու ձգձգելը շատ հեշտ է վարպետ գործադրողի ձեռքում:

Ամենից պիտաւորն այն է, որ բոլոր դատաստանական տատաններում, աւանի, գաւառի, նահանգի քաղաքներէ, մինչև Կ. Պօլսի դատաստանական սրահներում՝ նորահաստատ օրէնսդրութիւններէ համաձայն՝ նախագահում են իսլամի կրօնական դատաւորները—Հաքիմի-շէրի-դադիները: Հասկանում էք թէ ինչ բան է «Հաքիմի-շէրի» դադին: Պարզենք:

Իսլամի օրէնքով Ալլահը միայն դատաւոր է նշանակել Իմամը-Ագամին, իսլամի անդամներէ բոլոր գործերն ու վէճերը վճռելու համար: Խալիֆը՝ որպէս դեմպիտ՝ երկրի բոլոր

Բայց այս անցքը պատահական, կամ ծայրայեղ դէպք չպէտք է նկատել: Էրզրումի իսթիւտֆի ժողովի քարտուղարը դրողանում մի քսակի մէջ միշտ պահում էր ժողովի անդամներէ կնիքները, մի շղթայի վրա անցկացրած և կնքում էր իր խմբագրած բոլոր վճիռները, մինչև անգամ եթէ կնիքի տէրերը ամբողջով բացակա էին լինում քաղաքից: Պէտք է իմանալ, որ այդ դատարանը իրաւունք ունի անսահման դատարաններէ և ամէն տեսակ անշարժ կայքերի մասին վճիռներ կայացնել, որոնց քանդելը շատ դժուար է Կ. Պօլսի թէմիզում (վճարեկ տտեան):

մղկիթներին փոխանորդներ է կարգում, որ ժողովրդի առաջ իրան անձնափոխանորդաբար կանգնեն և ազօթել տան, մեռելները թաղեն կայն կայն. այդպէս էլ իրան փոխանորդ դատաւորներ (նաիր) է կարգում, որպէս զի փոխանորդաբար ժողովրդի գանդաաները լսեն, գործերը քննեն, դաշնագրերը վաւերացնեն և վճիռներ արձակեն: Մահմէդը, Աբուբէքրը, Ալին, Էօմէրն ու Օսմանը մեծ մասամբ իրանք անձամբ էին քննում ու վճռում ժողովրդի բոլոր գանդաաները և վճիռներ տալիս: Այսօր էլ ամէն մի իսլամ իրաւունք ունի դիմել ուղղակի խալիֆին և իր գանդաաների մասին բաւարարութիւն պահանջել: Բայց երբ իսլամի պետութիւնը ընդարձակեց, այնպէս որ այլևս անհնարին էր բոլոր գործերը կենտրոնացնել և մի տեղից վճիռներ արձակել, Իմամի-Միււալին հետևելով իր նախորդների փոխանորդաբար վարել տուած գործերին, ինքը պետութիւնը բաժանեց գաւառականներ (գաղաներ) և ամէն մի գաւառակում հաստատարնակ դատաւորներ նշանակեց, սրանց իրան փոխանորդ (նաիր) կոչումը տալով և Հաքիմի-շէրի (կրօնական դատաւոր), կամ դադի անւանելով: Այդ ժամանակից Հաքիմի-շէրի դադիները, որպէս Իմամի-ազամի փոխանորդներ՝ սկսեցին տեղն ու տեղը ժողովրդի գանդաաները լսել և շէրիաթի համաձայն վճիռներ արձակել: Դադիների զինուած զուբանով, շէրիաթով, հադիսներով և Միււալի օրերում կարգի դրուած սիւննայով <sup>1)</sup>, այդ օրերից մինչև այսօր դատեցին ժողովրդի բոլոր գործերը իսլամի միակ կրօնապետին փոխանորդաբար:

<sup>1)</sup> Օրէնսդրք՝ սիւննիների, ուր ամփոփուած են Դուրանի երկնասօք պատգամները, հադիսները, աւանդութիւնները և այն վճիռները, որոնք տւել են առաջի շորս խալիֆները:



Ահա այդ նախը-դադինների յաջորդները, իբր վերանորոգւած դատարաններում բազմել են այսօր նախագահի աթոռի վրա. իրանց նահապետական կարգերով, նախորդների սկզբունքներով և վարդապետութիւններով վճիռներ են արձակում: Խարում են աշխարհին, թէ նորակազմ հասարակական ներկայացուցիչներից կազմւած դատարանը վճիռ արձակեց, այն ինչ իսկապէս գործը վճռողը դարձեալ իրամի հին դադին է, որ շէրիաթից մի շիւղի շափ անգամ չի կարող շեղուել: Այն փքուն օրէնսդրութիւնները, այն հաւասարութիւն, ազատութիւն, անխարտութիւն քարոզող հրովարտակների գործադրութիւնը դարձեալ մնում է դուրանի աշակերտների, անհամբերատար վարդապետների ձեռքը և նրանցից իրաւունք և արդարութիւն պիտի մուրան քրիստոնիստների անարգլած, անկեղու զաւակները..:

Ղադին, երկնային յայտնութեան քարոզիչը և վարդապետողը, կարող է միթէ զիջանել, մէկդի թողնել իր ձեռքում ունեցած երկնային աւանդը, Ալլահի յայտնութիւնները, երկնքի, հրկրի, մարդկութեան և ջինների վերաբերեալ սուրբ շէրիաթը <sup>1)</sup>, և դրա փոխարէն իրան ձեռնարկ վեր առնել անօրէնների ճնշման տակ սուլթանների խժրժած կանոնադրերը: Այն կանոնադիրքը, որ խմբագրւած, ժողոված և դատաւորւած է հարեան պիղծ և անօրէն պետութիւնների ստանայական դատաստանազրքերի նման, որ գժոխքի ծնունդ է, և ջէհէնէմի [գեհեմի] զաւակների ենթադրութիւնների և կարծիքների արգասիք: Այն կանոնադիրքը, որ ճնշւած, անճարացած ճգնաժամում են ընդունել սուլթանները, և հրատարակել:

<sup>1)</sup> Գուրան սիրիա LXX 11 քիտեր 1—15 այնաթ.

Ճշմարիտ է, նոր օրէնսդրութիւնների համաձայն դադին՝ դատարանի նախագահը ղեկավարելու է դատավարութիւնը և ինքը միայն ձայն ու կէս ունի. իսկ վճիռը կատարում է մեծամասնութեան ձայնով, բայց եթէ քննեք հասարակութեան ներկայացուցիչների գիրքը, կհամոզուենք որ նա՝ դադին բազարձակապէս ինքն է վճռում գործերը: Ընդհանրապէս դատարաններում երկու-երկու անգամներ իսլամ ան, միմի քրիստոնիստ հայ, յայն (եթէ քաղաքում ապրում են և միմի կաթոլիկ, հրէա և այլն): Նախապէս վարչութիւնը դատարանի կազմակերպութեան միշտ այնպէս է ձեռալիս, որ անդամները կէսը իսլամ և միւս կէսը ոչ-իսլամներից բաղկացած լինի. այս կերպով դադին իսլամների հետ միշտ մեծամասնութեան ձայնը իւրացրած, ապիս է անարգել իր վճիռները, ինչպէս մեծակ տալիս էր վերանորոգութիւնների առաջ քանի որ մեծամասնութեան ձայնով հնարուար է գործերը վճռել, առանց ուշադրութիւն դարձնելու փոքրամասնութեան կարծիքին: Իսկութեամբ դարձեալ դադին շէրիաթն է գործադրում, փոշի փշելով արտաքին աշխարհի աչքում. թէ ինքը այլևս ոչ թէ դուրանի, այլ նոր օրէնսդրութիւնների հիմունքով է շարժւում և վճռում:

Բացի այս, դատաստանական քարտուղարը, որ խմբագրում է դատավարութեան արձանագրութիւնները և միանդամայն օրէնքների ճշտութեամբ գործադրութեան պաշտպան է, երբէք չի գաղարում օրէնսդրքի յօդւածներով և շրջաբերականներով զիմադրելու քրիստոնիստ անդամներին, եթէ վերջինները յանդգնում են պաշտպան հանդիսանալու իրանց հարստահարւած և զրկւած ազգակիցներին: Մանաւանդ որ այդ քրիստոնիստ տգէտ անդամները միշտ իրար գէմ հակակրութիւնով են համակւած և հազիւ է պատահում, որ իրար



հետ միանան և զգալի ոյժ կազմեն:

Իսկ եթէ պատահում են դէպքեր, երբ քրիստոնեա անպամները միանում, զինում են օրէնսդրութիւններով և զիմպրում զազիներին ու իսլամ ընկերակիցներին, պնդելով գոյութիւն ունեցած կարգերի վրա, իրանց համազգի զրկածների իրաւունքները պաշտպանելու, այդպիսի դէպքում առաջ է դալիս վարչութիւնը իր դահճական զէնքերով: Պաշտօնանկ է լինում և ապրուստից զրկում ըմբոստ դատաստանական քրիստոնեա անդամը: Սրան յաջորդում է իր տասնեակներով թեկնածուներից այն ճարտիկը, սրն աւելի աժան է ծախում խիզճն ու հողին և աւելի համոզեցուցիչ փաստերով զբաւում է միութասորիֆի, կամ վալիի համակրութիւնը:

Իսկ բողոքող և օրինազանցութիւնների վրա յամառութեամբ ակնարկող արտաքսեալ պաշտօնականը. որպէս ալըստամբ և խռովարար, որպէս տղզասէր և դաւաճանութեան նախաձեռնող՝ արսորում է, երբեմն այնպիսի վայրեր, որտեղից յաւիտեան տեղեկութիւն անգամ չի կարելի յուսալ...

Կարելի է մտածել, որ կարող են պատահել այնպիսի բարեխիղճ և յուսաւորւած զազիներ, որոնք մարդասիրութեամբ այնպիսի ընթացք տան իրանց ստանձնած գործին, որ օտնատակ շքեկնի արդարութիւնը, անմեղութիւնը և ճշմարտութիւնը: Անհաւանական չէ, գուցէ պատահին բարեսիրտ անձնաւորութիւններ, որոնք խզճի, խաղաղութիւնը շողմկեն, շալեկոծեն կաշառքով, կողմնապահութեամբ: Բայց այդպիսի զազիները կարող են ճշմարտութեան շաղկից շղուրս գալ, այն դէպքում, երբ երկու դատողներն էլ չեն պատկանում իսլամի համայնքին: Իսկ երբ դասի մէջ շահ ունի մի որեւէ միւսլիմ, այն ժամանակ նրա շահերին պէտք է գոհել ըստաների շահերը: Միթէ կարելի է իսլամի ձեռքի նւաճա-

ծի <sup>1)</sup>, իսլամի վայելչութեան համար մահւանից ազատւածի և գոյութիւնը իսլամականութեան պարտականի համար ճնշել ըստայի տիրոջը-միւսլիմին:

IV.

„Առեցեք նրանց հետ, Ալլահը ձեռք ձեռքով կպատժէ և նրանց կխայտառակէ: Ձեզ յաղթութիւն կսա նրանց դէմ և հաւատացեալներէ սիրք կբուժէ:“

Ամէն մի զազի ամէնից առաջ իր գիրքը պիտի պաշտպանէ իսլամի հեռուորդների առաջ և այս պատճառով երբէք չի զիջանիլ շէրիաթից շեղելու. քանի որ համոզւած է, որ իր գործերին հետևում է իսլամ հասարակութիւնը: Ղուրանից, շէրիաթից ամենափոքր շեղումը կարող է իսլամ իւլէմի վարկը պցել և երբեմն յաւիտեան անգործութեան դատապարտել: Իսլամի շէրիաթի մտնրամասնութիւնները հազար երեք հարիւր տարւայ ընթացքում այնպիսի խոր արմատներով մարմնացել է իսլամ ժողովրդի մէջ, որ նրա էական կէտերին քաջ հմուտ է զարձել ամբողջ: Այդ ամէնը զազիին քաջ յայանի լինելուց յետո, միթէ նա կարող է շէրիաթից շեղել և գնալ անօրէն, պիլծ երոպացիների գծադրած նոր ճանապարհով, որ իսլամի համոզմունքով զէպի տնհաւատութիւն է առաջնորդնելու հաւատացեալներին <sup>2)</sup>:

1) Ղուրան սիրիա XXX Բում 27 այեաթ.  
2) „ „ „ VI Ինամ 115 այ.  
— „ „ „ III Իմրան 142 այ.  
— „ „ „ VI Նիսա 91 այ.



Օրէնսդրութեան հիմքը, աղբերակը իսլամական հաւատքով Ալլահն է, որ իր ընտրած համայնքի համար յայտնութիւններով ճշմարտութեան ճանապարհը սահմանել է <sup>1)</sup>: Այս ուղուց դուրս գալը, դուրանի—չէրիաթի շաւղից ծուկը, նշանակում է ուղղակի ճշմարտութեան ճանապարհից խոտորիլ և անհաւատութեան, նախկին պղծութեան մէջ թաւալւիլ <sup>2)</sup>: Բոլոր քաղաքացիական-քրէական օրէնքները բլխում են դուրանի յայտնութիւններից: Ամբողջ համայնական օրէնսդրութեան, անհատական պարտականութեան և պահանջի աղբերակը դուրանն է: Չտա պարզ է ուրեմն, որ պետական ամէն մի գործի մէջ իսլամի կղերը անարգել իրանց քիթը պիտի ներս խրեն, և դարմանալի չէ յը այնպիսի մեծ ազդեցութիւն ունին իսլամի երկրներում և առանց զբանց անմիջական աջակցութեան՝ վարչութիւնը ոչ մի քայլ չի կարող առաջ գնալ <sup>3)</sup>:

Խալիֆութեան մէջ, ուր ամէն ինչ պատկանում է բէթ-

1) Dans toute législation theocratique, comme la loi de Mokammed ou de Moïse, la fouissance des droits civil doit être subordonné aux croyance relig euses. Dulau, Droit musulman p. 11.

<sup>2)</sup> Դուրան սիւրիա III Իմրան 112 այեաթ.

<sup>3)</sup> Սրան ապացոյց իսլամի երկրներում կատարած գործերը: Թարեղի Միշտէիզ Հաջի Միրզա Ջաւադ ազան, որ մի Հաքիմի-չէրի էք, շահի անդլիական՝ մի ընկերութեան հետ կապած բէթիի (ծխախոտի կապալ) շահանազիրը ոչնչացնել տւաւ 1890 թ.: Չէյխ-իւլ-իսլամ Ահմէդ էֆէնդիի մի ֆէթուալով Օսմանեանների մինիստրները գտնից իջեցրին խալիֆին՝ Արդիւ Ազիզին և կտրատեցին 1876 թ.: Ալլահի յայտնութիւններով սահմանւած իրաւունքների պաշտպանող և գործադրել տւող կղերից միշտ գոզացել են բոլոր իսլամ իշխողներն ու սուլթանները:

իւլ-մալին, առանց կղերի անմիջական մատնակցութեան և չէրիաթից տւած ֆէթուալին <sup>1)</sup>, ոչ մի վճիռ, ոչ մի դաշնագիր, ոչ մի հրովարտակ և կարգադրութիւն, օրինական չի կարող համարւիլ: Ահա թէ ինչն է սախիլ Օսմանեան օրէնսդիրներին, որ նոր հիմնարկւած դատաստանական ատեաններին նախագահ են նշանակել գարձեալ Հաքիմի-չէրիին [չէրիական դատաւորին], խալիֆի փոխանորդ պազիին, խալամի պարեոր դատաւորների յաջորդին, օրպէս զի պազիի անձնատրութիւնը սախիլ իսլամի հետեորդներին յարգանքով վերաբերելու սուլթանների նորահաստատ դատաստանական հիմնարկութիւններին: Առանց կղերի ներկայութեան և ոչ մի հիմնարկութիւն չէք գտնիլ Օսմանեան պետութեան մէջ:

Ոչ միայն դատարանները, գաւառական ժողովների ներկայացուցիչները, միւլէսարիֆները, վալիները, այլ մինչև անգամ Օսմանեան պետական խորհուրդը (չուրայի-դովլէթ), պալատը, նայն իսկ սուլթանը առանց կղերի տւած ֆէթուալին չեն յանդգնիլ որեւէ գործ ինքնակամ, կամ օրէնսդրութիւններով կայացնել և հրատարակել: Պէտք է նկատի ունենալ որ և ոչ մի հրովարտակ, ոչ մի օրէնսդրական յօդւած չի դուրս եկել, չի հրատարակել սուլթանի աքրունիքից, մինչև նախագէս դրանց մասին իւլէմներից չի ստացւել ուղղակի չէրիաթին յարմարեցրած մի որեւէ ֆէթուա:

<sup>1)</sup> Ֆէթուա կամ թէմսիլէ (չիաների ոճով) նշանակում է բնագիր: Գաւառներում միւլթիներին, Կ. Պօլսում դազաքէրներին և Չէյխ իւլ-իսլամին ամէն մէ անհատ իրաւունք սնի դիմելու և չէրիաթի վճիռը հարցնելու: Գիւմդները միշտ կեղծ անուններ են տալիս և նկարագրում իրանց գործի մանրամասնութիւնները, որ արձանագրելով մի թղթի վրա՝ իւլէման տալիս սուլթանում է չէրիաթից օրինական որոշ պատասխանը: Այս չէրիաթական սրտչամբ ձեռքերին ամէն մի գանդատաւոր, կամ ստատախանտու ներկայանում է գատարան և գործի վճիռ ընթացքում ներկայացնելով դադիին՝ պահանջում համանման վճիռ:



Ոչ միայն նշանաւոր գործերի, փոփոխութիւնների, վերանորոգութիւնների համար պարտաւորւած են եղել սուլթանները իսլամի կղերի շէրիական վճարն դիմելու, այլ մինչև անգամ ամենահասարակ խնդիրների մասին, արքունիքից արւած հրովարտականքն անգամ կղերի վճարի հիման վրա է հաստատուած: Օտմանեան երկրներում բոլոր վերանորոգւած եկեղեցիների բերութեան անգամ նախապէս իւլէմների ֆէթուայի կարօտ են, առանց այդ ֆէթուաներին սուլթանները չեն կարող մի այդպիսի թեթե հրաման անգամ արձակել: Մեր ձեռքումն ունինք մի քանի հրովարտականք, որոնցից որպէս նմուշ երկուսի թարգմանութիւնը առաջարկում ենք մեր ընթերցողներին ուշադրութեան, որոնք կպարզեն սուլթանի և նրա վարչութեան դիրքը կղերի գերիշխանութեան տակ:

Ն Ր Ո Վ Ա Ր Տ Ա Կ

«Սուլթանների սուլթան, սուլթանների զարմ, սուլթան Մահմուդի (բ). որդի սուլթան Արդիւլ—Աղիդ—խանի:

«Ամիրների դասից, բարձրագոյն զարմերից մեր լիագորը և հաւատարմատարութեան արժանացած ամիրների ամիր Կարսի սանջարի միւլթեսսարիֆ էմին—Ֆէհմի վաշա—բախտդ և աստիճանդ ճոխանա:—Մեր արդարադատ, գերիմասա սուլթանականներից ճշմարտասէր և իրաւարար Կարսի զաղայի նախըս (զաղի գատաւորս), միւլթի, գիտութիւններդ և շնորհքներդ պայծառանա—գաւառական ժողովի մեծայարգ անգամներ, ձեզ հրամայում ենք. վեհապանծ հրովարտակս սահմանաւորին հասնելիս յայտնի լինի: Մեր պայծառափայլ պետութեան հպատակներից Յովհաննէսի Կարսի գաւառաքաղաքում ունեցած մի մանուֆակտուրի մագաղիին կպած կա

եղել մի ուրիշ աւել—ծախի խանութ, դարձեալ նոյն գաւառաքաղաքի բնիկներից Սալէհ անունով մէկի սեփականութիւնը: Յիշեալ Սալէհը վերջերս վերոգրեալ աւել ծախի խանութը քանդելով, վաղուց գոյութիւն ունեցող երեք լուսամտաները (Յովհաննէսի մագաղիինի) փակելու աստիճանի շափ բարձրութիւնով մի հացարարի փուռ է հիմնում և կառուցանում: Գրածների համաձայն յիշեալ մագաղիներ բոլորովին մթնելով, գոյացած վնասի առթիւ գանգատը հասել է. մինչև պատշաճաւոր սրբազնագոյն Չէյս-իւլ-իսլամի գերիշխանութեան գրանը, որտեղից սուրբ ֆէթուա շնորհելը յայտնելուց յետո, տեղի ունեցած արգելքի և վնասի համար խնդրագրով վեհապանծ հրովարտակս է աղերսել յիշեալ Յովհաննէսը: Այդ գործը առաջագրեցինք նախկին Անատոլի-Ղաղաքեար և առաջին կնքի Մէջիդէի բարձրաստիճան պատանշանին արժանացած և ընդունած մեր գերիմաստ արժանընտիր ւարդարադաններից, անձնագոհութեամբ հռչակած Մէլանէ Մէհմէդ Բէֆիզ էֆէնդիին—Ալահը նրա կեանքը պայծառութեամբ երկարացնէ—երջանկութեանը, որ յիշեալ [Չէյս-իւլ-իսլամի] ֆէթուան հաստատեց: Գործի իսկութեան և անձատութեան մասին բնակավայրում տեղն ու տեղը մասնաւորապէս քննութեան և սուրբ շէրիաթով արդարի իրաւունքի հաստատութեան կարիքը նկատելով, վեհապանծ հրովարտակովս հրամանագրում ենք քննութիւնը կատարել և վճարել: Դուք, իմ միւլթեսսարիֆը, նախը, միւլթի և վերոգրեալ մնացեալներդ, դուք ձեր մէջ, ձեր բնակավայրում ժողով անէք, կողմերի ներկայութեամբ և յիշեալ գանգատուրի պահանջի համաձայն, սուրբ շէրիաթի արդարագատութեամբ իրաւայի ն արգարացնէք, [գործը] վերջացնէք: Եթէ գործն այս վիճակի մէջ չլինի, անցքի արձանագրութիւնը, վճարը և աստ-



նազրութիւնը ուղարկէք և հասցնէք երջանկավայրս (Կ. Պօլիս—արքունիք): Վեհապանծ հրովարտակիս գործադրման հրամանն արձակեցիներ, համաձայն բովանդակութեան անմիջապէս ջանար և գործադրէք: Այսպէս զիտեանք: Ջինազրուցմիս հետ յարգանքով վարուիք: Գրեած է Ջիմաղի էւէլ սկզբին 1281 թւականին չիջրի (մեր 1864 թ.):»:

Ամէնից առաջ ընթերցողի ուշադրութիւնը դարձնում ենք այն կէտի վրա, որ իրար յետևից եղած պատերազմներից յետո, խաղաղութեան դաշնագրերում խոստացած են Օսմանեան սուլթանները քրիստոնէին ազատել իսլամի կղերի դատաստանից: Թանդիմաթից յետո, բոլոր հրովարտակներում սուլթանները իրր փակել էին իսլամի նախկին կրօնական մուսաբէմէններին [դատարաններին] դռները քրիստոնեաների համար և դատավարութեան համար նոր պետական արդարադատութեան հիմնարկութիւններ հաստատել: Բայց սուլթան Աղիզը սոյն հրովարտակով դիմելով իր լիազօր էմին փաշային, առաջարկում է դարձեալ կղերի ղադիին միւֆթիին ընկերակցութիւնով, գաւառական ժողովում քննել այս գործը և վճռել համաձայն «իսլամի սուրբ շէրիաթի արդարադատութեան»: Օրէնքներ, նորահաստատ դատարան, օրէնսդրութիւն չկա, սուլթանը նրանց վրա ակնարկելու չի յանդգնում անգամ և հրամայում է, որ սանջաղի ժողովում այդ գործը քննէ ու վճռէ ղադիին: Ղադիին և վճիռը դարձեալ հին—աւանդականն է, միայն թէ «մունաքէմէից» (կրօնական դատարանից) դուրս են քաշել ղադիին և տարել են գաւառական վարչութեան ժողովում բաղմացրել:

Այս հրովարտակից դեռ ի՛նչ եզրակացութիւններ չենք կարող հասնիլ, ի՛նչ տխուր փաստերի չենք հանդիպիլ, եթէ լրջութեամբ քննենք: Մի հայ քրիստոնեայի տան լուսամուտ-

ները փակում է զրացի իսլամը և հային հասած վնասի համար ոչ մի դատարան գաւառում, նահանգում և կենտրոնում (Կ. Պօլիս), չեն կարողանում դատը լսել և վճիռ արձակել: Հայի բողոքը, հայի ձայնը ոչ մի դատարան չի զիջանում լսել և ընտարարութիւն աւել, ոչ մի տեղ նրա խնդիրը գործադրութեան չեն կարողանում գնել Օսմանեան վարչական պաշտօնակալները, քանի որ հակառակորդը միւսլիմ է և այդ ղրկանքի մատնածը ճարահատ դիմում է իսլամի խալիֆին: Ուշք դարձնելու է այն հանգամանքի վրա, որ ղէպքը պատահել է թանդիմաթի (վերանորոգութեան) հրատարակելուց քսան և հինգ տարի յետո, սուլթան Աղիզի օրերում (1864 թ.), երբ արդէն վաղուց հիմնարկել էին դատաստանական հաստատութիւնները, այն էլ մի այնպիսի քաղաքում, որ առևտական սահմանից միայն վաթսուն վերստ հեռաւորութիւն ունէր և որտեղ նստում էր առևտական կօնսիլը:

Չպէտք է մոռանալ, որ այդ թւականից տասն տարի առաջ, Պարիզի կոնգրէսում, իսլամի խալիֆը՝ սուլթան Մէջլիմ հրապարակապէս ամէն խոստումներ անելուց առաջ, Խաթթը—Չէրիֆով մանրամասնաբար կրկին ու կրկին խոստացել և շնորհել էր կատարեալ ազատութիւն, հաւասարութիւն, արդարադատութիւն և անխտրութիւն երկրի միւսլիմ և ոչ-միւսլիմ հասարակութեան:

Սրա վրա պէտք է աւելացնել այն հանգամանքը, որ գանգատաւորը ոչ միայն հարուստ հայ է, այլ մինչև անգամ պետական մի պաշտօնեա. ամբողջ սանջաղի սարաֆը և միւրաբային է (հին դրամները յօգուտ գանձարանի հաւաքող): Մի այնպիսի քրիստոնեա, որ կապեր ունի հաստատած Կ. Պօլսի ազդեցիկ և նշանաւոր պաշտօնակալների հետ, որոնց շնորհիւ



կարողանում է պալատում լսեցնել իր բողոքը: Երբ այսպիսի սեփեղ և հովանաւորւած մարդ ամէն միջոցի դիմելուց և սուլթանի հրովարտակը ձեռք բերելուց յետո, դարձեալ չի հասնում նպատակին, դարձեալ տան լուսամուտները փակ են մնում. խլամի կղերը ոչ միայն խեղդում է այդ յանդուգն բայտ- յի ձայնը, ոտնատակ տալիս ոչ միայն այդ քրիստոնեայի իրաւունքները, այլ մինչև անդամ խալիֆի հրովարտակը: հապա ինչ կարող է անել այն թշւառ ժողովուրդը, որն ադ- քաա, անաէր, թոյլ սգէտ և յուսահատ է: Ի՞նչ անեն որբերն սւ այրիները, սրմնը Կ. Պօլսի և սուլթանի միայն անունն են լսել, ի՞նչպէս լսեցնեն իրանց ձայնը, որքն ու հառաչանքը այդ բռնակալութեան տակ:

Հ Ր Ո Վ Ա Տ Ա Կ

«Սուլթան Մահմուդի որդի սուլթանների սուլթան, սուլ- թանների դարմ, սուլթան Արդիւլ Մէջիդ—խանի:

«Քայարձակ լիազօրս, աշալուրջ վերատեսուչս, հասա- րակութեան բարեկարգիչս, հանրային գործերի իշխանա- տրս, մտքերով զազանիքների և խուրհուրդների մէջ թափան- ցիչ, հրամաններ արձակելու կարող, Ալլահին հաճելիների մէջ գրւած, արդարադատութեան նեցուկ, պետութեանս պայ- ծառութեան նախանձախնդիր բեռնակիրս Էրզրումի վիլայէ- թի վալի Համդի-փաշա, Ալլահը փառքդ և պայծառութիւնդ առատացնէ:

«Ամիրների ամիր և բարձրագոյն զարմբից մեր հաւա- տարմութեան արժանացած Զլդրի զայմագամ Բէհշէգ-փաշա բախադ և աստիճանդ բարձրանա: Մեր արդարադատներէց գերի- մաստ Օլթիի նաիրս, տեղական միւֆթի, գիտութիւններդ և

չնորհրներդ ճոխանա և գուառական ժողովի յարգարժան ան- դամներ, ձեզ հրամայում ենք. վեհապանծ հրովարտակս սահ- մանաձին հասնելիս, յայտնի լինի: Յովհաննէս և Մարկոս անուն գիմիւնները Օլթիի զազայի բնակիչներէց հիւսէին- օղլի մէկի վրա երեք հազար հինգ հարիւր, և Թահիր անունով մէկի վրա երկու հազար երեք հարիւր, և քիւրդ Քիշարի վրա իննը հարիւր քառասունը հինգ դուրուշ... առնելիք ունենալով յիշեալներից իրանց պահանջները ստանալու շէրիական ոչ մի վճուի չարժանանալով, և իրաւունքները ոչնչանալը—փշանալը յայտարարելով, իրանց բնակավայրերում այս գործերի ուշա- դրութեան առնելու, առաջացնելու և եթէ բնակավայրում հնարաւոր չի լինի, գործերի քննութիւնը երջանկավայրումս կատարելու համար աղերսագրով վեհապանծ հրովարտակիս շնորհիւն էին խնդրել այս անգամ վերոյիշեալ Յովհան- նէսն ու Մարկոսը: Այս պատճառով դուք, որ իմ վալի փա- շան էք, և յիշեալներդ, նա ի բս և ուրիշներդ, ձեր միջոցով զաւառական ժողովում յիշեալների գործերին կնայէք. վերոյ- անւանեալ կողմերին իրար երես կհանէք, շէրիաթի հա- մաձայն կբնէք, թէ գործերը ինչ վիճակի մէջ են: Եւ եթէ շէրիաթի համաձայն տասնուհինգ տարւան (давность) ժամանակամիջոցը չէ անցել, ժողովումն էլ շէրիաթի համա- ձայն ապացուցելի յիշեալների պահանջած դուրուշները և հաստատելի, այն ժամանակ սուրբ շէրիաթի տրամա- դրութեան համաձայն վճիռ կկայացնէք, և արդարի իշաւացի պահանջի իրագործման կարգադրութիւնը կտաք և կզործադրէք: Եթէ բնակավայրում անհնար լինի արդարու- թեան գործադրութիւնը, պարտականներին՝ ատենազրութեան հետ՝ իմ վեհապանծ և փառահեղ դուռս կհասցնէք, գործը քննելու և արդարին իր իրաւունքին հասցնելու համար: Եւ



եթէ յիշեալ գործի համար կարելը նկատէք, կամ պահանջոյների կողմից պարտականները կողմը պաշտօնակատար ուղարկելու պահանջ լինի, վերջերս մեր վեհապահած դռնից յայտարարած հրովարտականքի և արած կարգադրութիւնները համաձայն, ուղարկելիք պաշտօնակատարի պաշտօնական ծառայութիւնները համար կարեսը ծախսերը իրանց՝ պահանջողները կողմից ստացւի և այդ պատճառով ոչ սրի շնորհացւի և համանման գէտընց գգուշացւի: Այս բոլորի մասին հոգս տանելու և շուտափոյթ գործադրելու համար վեհապահած հրովարտակա արձակեց: Բովանդակութեան համաձայն գործադրեցէք, այդպէս գիտցէք, նւիրական նշանս յարգեցէք: Գըրւած է սկզբին Ջէմադի էւէլի 1261 (1846 թ.):

Այդ հրովարտակից էլ արդէն պարզ երևում է, թէ ինչպէս երկու եղբայր Յովհաննէս և Մարկոս զիմմիւնները (կեանքով, գոյքով իսլամին պարտականներ), իրանց պահանջները այս ինչ ու այն ինչ միւսլիմներէց շկարողանալով ստանալ, գանձելու հնար չգտնելով, տեղական իշխանութիւնները շկարողանալով դրանց պահանջներին բաւարարութիւն տալ, սախպուկ են դիմել սուլթանի դռան և նրանից աղերսել, իր խոտացած թանդիմաթի համաձայն՝ իրանց գոյքը ապահովել: արդար պահանջներին հատուցում տրւի: Բայց թանդիմաթը հրատարակող սուլթանը, բարեկարգութեան, հաւասարութեան, անխորութեան հրովարտականքն արձակողը, ընդհանուր աշխարհի առաջ նախկին բռնակալութիւնները ջնջելու և պետութեան հպատակները, իւրաքանչիւր անհատի գոյքը, պատիւը, կեանքը ապահովելու խոստումներ անողը, նոյն ինքը խալիֆը իր եօթը տարի առաջ արձակած Խաթ թը-հիւմայիւնի հակառակ՝ դարձեալ դուրանի և շէրիաթի ոճով «զիմմիւններ» կեանքով, գոյքով, պարտականներ է անւանում պա-

հանջատէր քրիստոնեաներին և կարգադրում է, որ նրանց գանգառը դարձեալ քննեն իսլամի կրօնականները—նախն ու միւսթին համաձայն իսլամի «ուրազնատուրը» շէրիաթի:

Պարզ բան է, որ նախն ու միւսթին իրանց սուլթանի այս հրովարտակը կարգալուց և սուլթանի թանդիմաթին հակառակ ընթացքը նկատելուց յետո, ինչպէս կարող են իրանք շէրիաթից այլևս շեղել և փող պարա միւսլիմներին պարտաւորեցնել «իսլամի-զիմմիներին», կամ ինչ արժէք կարող է ունենալ իսլամի կղերի աշքում թանդիմաթի և այս «զիմմիւնները» համար տրւած և իրար հակասող հրովարտականքը:

1839 և 1856 թ., սուլթան Մէջլիդի 1860 թ. սուլթան Ազիզի տւած հրովարտականքի համաձայն, գաւառական քաղաքներում և Կ. Պոլսի դատարաններում ոչ-միւսլիմաններին իսլամի պէմ վկայութեան հրաւիրելու փորձեր եղան քրիստոնեաների կողմից: Այս քայլերը ամէն տեղ մեծ ազմուկ բարձրացրին, ոչ մի ատեանում սուլթանի նախը-դաղիները թոյլ չտւին այդ փորձերը գործադրելու և մերժելով մերժեցին ու շրտեցին քրիստոնեա վկաններին: Կոնստանտինոպոլիսի քաղաքներում երկու ոչ-միւսլիմի գործերի մէջ պարտաւորւած լսում էին քրիստոնեա վկաններին, նախապէս նրանց դաւանութեան համաձայն եկեղեցականների ընկալալայրերում երդեցնելով:

Իսլամների պէմ ներկայացրած քրիստոնեա վկաններին շղտու համար, ամէն մի ժողովում քրիստոնեա ներկայացուցիչները և առաջնորդները վէճի էին բռնում նախագահների, ազմիւնիտրատորները, իսլամ կղերի ու ներկայացուցիչներին հետ և քրիստոնեա անդամները բողոքում էին բարձր վարչութեան՝ բաւարարութիւն պահանջելով: Այս հարցը լրջութեամբ դրադեցրոց ինչպէս Օսմանեան միւսլիմութեանը, նոյնպէս և պետական խորհրդին: Այս խորհուրդներն յղացած մի նոր հա-



տոր օրէնսդրութիւնն ևս քիթ ար-իւլ-բիւլին աթ (վկայութիւնների գիրք) հարիւր յիսունից աւելի յօդաձևերով, որ հրատարակեց եօթանասնական թւականներում:

Այս օրէնսդրութիւնը իր ամբողջութեամբ մի գէնք է նախիր դադիւների ձեւքում, որով կարող են հեռացնել դատարանից ամենարարելիիղճ վկաներին անգամ, եթէ կատկած ունենան, որ նրանք միւսլիմի շահերին հակառակ վկայութիւն կարող են տալ:

Այդ «Ա կ ա յ ու լ թ ե ա ն գ ր ք ի» համաձայն դատարան ներկայացած ամէն մի վկա պէտք է ուղղադաւան, անարատ, բարեպաշտ, կրօնական պարտականութիւնները կատարող, կեանքում խաղաղ, որոշ գործով զբաղւած, բարեխղճութեամբ զբաղիններից վկայւած, եղբէք քրէական գործի չհնթարկւած, ոչ որի միաս չհասցրած, չսնանկացած և չգիտեմ էլ ինչ առարկնի առաւելութիւններով օժտւած լինի: Բացի վերոգրեալները՝ աղբակցական, արիւնակցական, խնամիական և կրօնական (կնքահայր և այլն) կապերով չպիտի կապւած լինի գործ վարող կողմերի հետ: Մինչև անգամ վերջիններից ոչ մէկի հետ առեւտրական, գործավարական, ընկերական և ուրիշ շահերով կապւած չպիտի լինի: Հակակրութեան, համակրութեան, հակառակութեան, թշնամութեան, քէն ու վրէժխնդրութեան երբէք առիթ ունեցած չպիտի լինի: Պարզ է, որ այս նիւթի մասին հարիւր յիսուն յօդաձևից կազմած օրէնսդրքից ամէն մի ոչ-իսլամ վկայի համար՝ կարելի է մի մի օրինական արգելառիթ պատճառ գտնելով՝ հեռացնել դատարանից, եթէ բւարար չէ այն գլխաւոր կէտը, որ ամէն ոչ-միւսլիմ ուղղադաւան չի կարող համարել<sup>1)</sup>:

<sup>1)</sup> Պարսի յայտնի դրամատէր և վաճառական Աթրաշ-օղի Ահմէդը և Պուրի-գաղէ Մէհմէդը (վաճառականական դատարանի նախագահը) մի օր

Կարիք չկա ընդարձակ բացատրելու այն հանգամանքը, որ երբէք մի միւսլիմ չի գիջանիլ մի պիղծ, ստորաքարչ և անասունի հօտերի անհատ զբաստի ջգախն վկայել իր կրօնակցի և ընկերակցի դէմ<sup>1)</sup>: Իսլամի հասկացողութեամբ բոլոր դաւանակից իսլամ կորայրները ոչ միայն պարտաւոր են իրար սիրել, յարգել, պաշտպանել, այլ և պարտաւոր են իրար շահերը ամէն դէպքում խնամել և ապահովել<sup>2)</sup>: Մի գրատախի համար, մի կոյր անհատախի համար, որ չի ուզում հասկանալ Ալլահի կրկնային յայտնութիւնների ճշմարտութիւնները և ետ չի կանգնում իր ծուռ ճանապարհից, ինչպէս կարելի է մի հաւատացեալի շահերը, կամ կեանքը զօհելու ամենամեծ յանցանքին առիթ դառնալ: Անհաւատ քրիստոնեախի, կամ հրէախի համար մինչև անգամ երգմամբ վկայելիս մեծ բան չի կորցնիլ միւսլիմը, քանի որ այդ-

(1872 թ.) սրպէս վկա կոչւում էին դատարան մի գրողացի միւսլիմի դէմ: Յանցաւորը երբ նկատում է, որ դրանց վկայութեամբ կարող է պատժել, իսկայն բողբում է այդ վկաների դէմ, յայտնելով որ առաջինը ընդամայն (ժամանակին չաղօթող խաւարամիտ) է, իսկ միւսը իսլամ (պոչք չպահող — կասկածելի հաւատացող) է: Ղազին յանցաւորի սոյն ամբաստանութեան հաստատութիւն է պահանջում և շանցաւորի ներկայացրած կրկ-երկու վկաներին լսելով հեռացնում է դատարանից Աթրաշ օղլուն և Պուրի-գաղէին, որոնք վկայութեան անարժան անձնաւորութիւններ:

Եթէ այսուլսի նշանաւոր իսլամ անձնաւորութիւններին անգամ սուլթանի նսլր չուսուար պարտաւորւած է հեռացնելու դատարանական ստանդերից, էլ ինչպէս քրիստոնեա վկա կարող է մօտենալ այդ գանելի վկայելու համար:

- 1) Ղազրան սիրիա III Իմրան 93 այիաթ
- ,, ,, XLVIII Փաթին 29 այ.
- 2) ,, ,, III Իմրան 98, 99 և 114 այ.
- ,, ,, XLVIII Փաթին 29 այ.



պիսի երգումները չնշին զոհողութիւններով, նւէրներով, մինչև իսկ մի-երկու օր ծոմապահութեամբ կարող է քաւել <sup>1)</sup>: Դուրանում այս մասին եղած այեաթների հիման վրա, շերտաթն ունի ընդարձակ բացատրութիւններ, հազի սնեքում ու սիւննայում բազմակողմանի մեկնւածքներ <sup>2)</sup>: Պէտք է իմանալ, որ դուրանի՝ սուր, IV նիսա 94 այեաթի բացատրութիւնները համա ձայն իսլամի հետևողը ոչ միայն շի կարող մի միւսլիմի սպանել, այլ մինչև անգամ գիտութեամբ նրա սպանման առիթ դառնալ: Այս բոլորից յետո՝ միթէ զրկւած, անարգւած, լկւած, կամ սպանւած քրիստոնէի գործերի համար Օսմանեան դատարանների առաջ վկա ներկայացնելուց և գործեր հաստատելուց էլ աւելի դժուար աշխատութիւն կարելի է ենթադրել քրիստոնէի համար: Մանաւանդ լկման խնդիրների մասին, ուր շորս վկա է պահանջում զազին՝ շերտաթի համաձայն <sup>3)</sup>:

Իրերի այս վիճակում միւսլիմ աւաղակներին, մարդասպաններին, հրծիպներին, կրքամոլներին ինչ հնաբքով կարող են դատաստանի ձեռքը մատնել թշուա և զրկանքների դատասպարուած քրիստոնեաները:

Օսմանեան մինիստրները և պետական խորհուրդը միայն նորանոր հիմնարկութիւններ հաստատելով, բայաին զանազան հարկերի և տուրքերի տակ ճնշելով, կարծում են, որ իրանց

1) Դուրան սիւրիա V Ուլուզ 91 այեաթի  
 — " " II Ֆէզարա 224-225 այ.  
 — " " LXVI Թէաշրիմ 2 այ.  
 — " " XVI Նէհիլ 94-96 այ.  
 2) " " XLVIII Փաթիհ 29 այ.  
 3) " " IV նիսա 18 այ,  
 — " " XXIV նուր 4 այ.

երկիրը á la franica դարձրին, ամէն բան վերանորոգեցին. պրծան: Դեռ համազուած են, որ գրանցով կարողացան երսպացիներին խարել, սրանց խելքը՝ թուրքի կարծիքով աչքի մէջ է: Իսկ գալով իրանց զիմմիներին, նրանք ինչ իբաւունք ունին բողոքելու, կամ զանդաւելու: Դեռ թող զոհանան. որ շնորհիւ վեհափառ սուլթանի, իրանց կեանքը շնորհւած է և թողատրւած յոյս աշխարհում, արեզակի ջերմութիւնը և անապակ օղը վայելելու: 2 է որ իրանք անսահման իբաւունք ունին այդ ուժտոսպառ և ստորաքարչ տրարածների գլխին և իսլամի կամքից է կախւած այդ բայաների լինելն ու շլինելը <sup>1)</sup>

Դեռ 1875 թ. հոկտեմբերին սուլթան Ազիզը Աւստրիական կոմս Ալիշի խորհրդի և առաջարկութեան համաձայն՝ մի նոր հրովարտակ հրատարակեց, որպէս լրումն իբ նախորդի՝ սուլթան Մէջիդի 1856 թ տւած Խաթթը Չէրիֆի, որով Օսմանեան պետութեան մէջ կատարեալ հաւասարութիւն հաստատելու մտքով մի այնպիսի զիջումն արաւ խալիֆը [յայանի բան է կարմիր ու սև թանաքով, ոսկէ փոշի աւաղով, մի մեծ հաստ թերթ թղթի վրա] որ իսլամի կղերն ու ամբոխը մնացին ապշած: Այդ հրովարտակն էլ եղաւ գլխաւոր պատճառը թշուա Ազիզ սուլթանի անկման և տանջանքով վախճանին <sup>2)</sup>:

Եւրոպացի զիպլոմատները քննադատութեան քառասուն տարի շարունակ նիւթ էին մատակարարել Օսմանեան երկրի

1) Դուրան սիւրիա VIII Ինֆտուլ 40-72 այ.  
 2) Երբէք յիշողութեանս առաջից շի հեռանում այն իւլմայի՝ պատկերը, իրան արեւելքի կղերին յատուկ սպիտակ ու կապոյտ տարազով, որը նայն օրւա ,,Բ ա ս ի բ է թ“ լրագրի յաւելւածը՝ որտեղ տպագրւած է քրիստոնեաների էլ զինուորագրութեան ենթարկելու հրովարտակը ձեռքին շո-



քրիստոնեաները, թէ իրանց պետութեան մէջ անհնար է բարենորոգութիւնները գործադրել, քանի որ իսլամ-աիրող պատակարար զինաշարժութիւններով մարդւած և պատերազմական զործողութիւններով կրթւած է, իսկ իրանք՝ ստրկացած քրիստոնեաները երբէք զէնք կրելու իրաւունք չունին և բոլորովին անպէտք են պատերազմական գործողութիւնների համար: Քանի որ Օսմանեան զինուորական ոյժը միայն իսլամի հետևողներից է բաղկացած և քրիստոնեան ինքնապաշտպանութեան անգամ անկարող է, կառավարութիւնը ոյժ չունի, նրա իսլամ գորքը իրան շի հնազանդիլ, որ բունի ոյժով իր հրատարակած օրէնքներին հպատակեցնի իսլամ ամբոխին:

Ճշմարիտ որ միայն այս հարցի կանոնաւորապէս լուծումից կախումն սննի իսլամի երկրի բարեկարգելու գործը: Իսկ այս հարցը քրիստոնեաներից զինուոր հաւաքելը՝ մի այնպիսի ծանր խնդիր է, որ քառասուն տարի է, սուլթան Մէջլիկ 1856 թ. տւած հրովարտակից յետո, դեռ պիտի կարգադրեն և համոզւած կարելի է ասել, որ երբէք գլուխ չի գալ խալիֆութեան զերիշխանութեան շրջանում:

Իսլամի պետութեան բոլոր երկիրները նւաճել են համախառնական ոյժով: Աւերանը բացարձակապէս պահանջում է իսլամի բոլոր հետևողներից, որոնք որ ֆիզիքական սր և է

զենու մտնելով, ինձ հետ առանձնացաւ օթեակում, ան՝ բնից և խոնուութիւնից պատասպարելու համար: Երբ հրովարտակը կարգաց, վերջացրեց, հառաչեց և սրտի մազձի ալէժփիլը զիմպոծնրով այտոյալալով ասաց

— Էլ ի՞նչ էք կամենում, ոչ միւսիմներ, այլ ևս և ոչ մի խարութիւն շմնաց ձեր և մեր մէջ: Էգուց մէկ էլ օր ձեր սրդիրը մեր գաւակների հետ հաւասար գնալու են պատերազմի դաշտը, սրով առանց արին թափելու, առանց մարմարելու գուր մեր երկրին, մեր գոյքին հաւասար քամանորդ դարձար:

տկարութիւն շունին, զինուել, պատրաստ լինել իսլամի գոյքը պաշտպանելու թշնամիներից և նորանոր նւաճումներով օրից օր ընդարձակելու այդ պետութեան սահմանները 1): Բուն իսլամական հատկացողութեամբ ամբողջ երկրագունդը և նրա միջի բարիքները Ալլահը նախատեսմանի է իսլամի հետևողների համար 2): Պիղծ, անօրէն կապաշտների՝ բազմաստւածեանների իսլամի հետևողները պիտի ջանան բնաջինջ անել և ձեռքերիցը խլել երկիրները 3), իսկ քրիստոնեաներին և հրէաներին, եթէ ուժասպառ ընկճին և իրանց բոլոր գոյքը, կայքը յանձնելուց յետո, նւաստանալով խոստանան կեանքը վերկանքը, պիտազինը, վճարել տարէց տարի, այն ժամանակը եթէ կամենան իսլամները՝ կեանքերը խնային 4): Այդ նւաճած բոլոր բայաների գոյքը, աւարը համայնականութեան սեփականութիւն է կազմում 5): Այս կէտը իսլամի հաւատքի, գաւանանքի և սրտի զգացմունքի այնպիսի մասն է կազմում, որի հետ լուազալ չի կարելի:

- 1) Աւերան սիրիա 11 Բէգարա 212 տյեաթ.
- ,, ,, III Իմրան 151, 152 տյ.
- ,, ,, VIII Ինֆաալ 15, 16, 62 տյ.
- ,, ,, XXXVI Իտսէ 27 տյ.
- ,, ,, XLVII Մլհմէզ 33 տյ.
- ,, ,, LXX Միւլբի 5 տյ.
- 2) ,, ,, II Բէգարա 27 տյ.
- 3) ,, ,, II Բէգարա 186, 187 տյ.
- ,, ,, LIX Հէշիր 5 տյ.
- 4) ,, ,, IX Թոպթէ 29 տյ.
- 5) ,, ,, II Բէգարա 27 տյ.
- ,, ,, VIII Ինֆաալ 68 տյ.
- ,, ,, XLVII Մլհմէզ 4, տյ.



Մինչև 1875 թ. այս հրովարտաչը հրատարակելը, խալիֆները, Օսմանեան դիպլոմատները և իւլէմները ամէն ջանք, ամէն տեսակ նենգութիւններ գործադրում էին այս կէտը մթութեան, մառախուղի մէջ սքողելու: Սուլթան Մէջլիզի հրովարտակից (1856) այսքան միայն նկատելի է, որ իսլամի յետնորդներին պարտաւորացնում է զինուոր գնալու, իսկ քրիստոնէին զինւորութեան փոխարինող մի հարկ վճարելու: Այս էլ այնպէս է բացատրւած, որ իբր թէ քիչ ժամանակից յետո, այնպիսի նոր կարգեր են սահմանելու, որ և ոչ-միւսլիմներին զինուոր հաւաքեն և կատարեալ հաւասարութիւն տրէ միւսլիմի և ոչ-միւսլիմի մէջ:

Քրիստոնեաներից զինւորական հարկ առնելով՝ սուլթանի կառավարութիւնը երկու սրտը միասին է բռնում. նախ որ Ղուրանի շէրիաթի բացարձակ պահանջն է կատարում—իսլամի զիմմիներից սահմանւած ջէզիէն (կեանքի գին) է առնում և երկրորդ որ իսլամի գոյքին շէ ուզում մասնակից անել քրիստոնեաներին, սրանց զինւորակոչի ենթարկելով: Կարճ խօսքով, շէ ուզում ը ա յ ա յ ու թ իւ ն ի ց հանելով իսլամի հետևորդներին հաւասարել և գրանով բորբոքել իսլամի կղերին և ամբոխին: Զինւորութեան փոխարինող հարկն էլ [ը է-զ է լ է թ ի - ա ս ք է ը ի է] ոչ թէ սահմանւած է նրանցից առնել, որոնք այդ պարտականութիւնները կատարելու և տոկաւու ոյժ ու կարողութիւն ունին, այլ բոլոր քրիստոնեա արուներից, ծնւած մի օրւա երեսայից սկսեալ մինչև իննսուն-հարիւրամեա զառամեալի շունչի սպառելը: Արդէն պարզ է, որ այդ զինւորութեան փոխարինող հարկը նախկին ջէզիէն (կեանքի գին) է, միայն անունը փոխած:

Կարծում ենք շեշտելու կարիք չկա, որ Օսմանեան վերանորոգութիւնների հրովարտակներն ու օրէնսդրութիւնները

համանման խորամանկութիւններով է կազմւած, որից ինչպէս մինչև այժմ, սրանից յետո էլ բարիք յուսալը պարզ անմտութիւն է: Զուր ջանք է գործադրում Եւրոպան խալիֆութեան ամբողջութեան և գերիշխանութեան իրաւունքներին առանց դիպչելու և նրանց պահպանութիւնը երաշխաւորելով՝ մտածում է երկրում հաւասարութեան, անխարութեան սկզբունքի հիմունքով բարեկարգութիւն մտցնելու փորձերը շարունակել:

Քաւական շէր, որ 1855 թ. մինչև 1875 թ. քսան տարւան ժամանակամիջոցը, սուլթան Աղիզի սոյն հրովարտակի համեմատ քրիստոնեաների զինւորակոչութիւնը պիտի գործադրէր հրատարակելու օրից յետո ծնւած երեսաների համար: Այսպէս Պարիզի դաշնագրում [1856] խոստացւած կատարեալ հաւասարութիւնը միւսլիմ և ոչ-միւսլիմների մէջ պիտի կատարէր վերջնականապէս 1896 թ. երբ քսան ու մէկերսրդ տարին մտնէին այն ոչ-իսլամ երեսաները, որոնք ծնւել էին 1875 թւից յետո: Սուլթան Աղիզը խորամանկութեամբ, նախորդների նման կրկին խարեց Եւրոպային, երկրի ճգնաժամում, թէ վրդովւած սրտերը հանգստացրեց և թէ ժամանակ շահեց Քոնստանտինուպոլիս, Քուլգարիա, Ղաբաղաղ, Սերբիա և Յունական երկրներում ժողովուրդը աղմկել և ամէն ծայրից աղստամբութիւն էր բարձրացրել, իսկ Ռումէլիայում կատարւած բարբարոսութիւնների համար, բաւարարութիւն էր պահանջում Եւրոպան: Մի թերթ թղթով, եթէ կտրելի էր խաղաղացնել յուզւած սրտերը, ինչի՞ չպիտի հրատարակէր սուլթանը իր հրովարտակը, որը աւժամանակ կապահովէր խալիֆութիւնը, իսկ քսան տարուց յետո... Այլահր մեծ է, իրան յաջորդները թող կարգադրեն ժամանակի պահանջի համեմատ: Քայց կղերը չկարողացաւ գոպել իր գայ-



բայթը և սուլթան Ազիզից աւելի խորամանկ գանւելով, նրան զլորեց անդունդը:

Ներկա սուլթանի քաղաքականութիւնը բոլորովին ընդդէմ է մի այդպիսի կրօնական, դաւանական, էական հարց զարթեցնելու և կրքեր բարբառելու: Արդիւ-Ազիզի 1875 թ. տաժ հրովարտակն էլ մնաց մեռած առ, նման այն հաղաւոր հրովարտակներին, որոնք արւել են 1839 թ. յետո, ընդհանուր օրէնսդրութիւնների, քրիստոնեաների և հրէաների կեանքի, գոյրի և պատւի ապահովութիւնների, մասնաւոր ինչ ինչ սչ-խում անհատների այլ և այլ գործերը կարգադրելու, բաւարարութիւններ տալու և զանազան խում բռնակալ, գող, աւաղակ և հարստահարիչներին կախելու համար:

Իսկ քրիստոնեաները զուրանի հրամանի համաձայն ջէզիէն (փրկանք) մինչև օրս տալիս են, որպէս իսլամի զիմմինները, միայն թէ մեղմացած, քաղաքակրթւած անւան տակ: Ո՛չ թէ ապրելու, մտհից ազատելու, այլ զինուորական պարտաւորութիւնները փոխարինելու [բէզէլէթ ադքերիէ] համար:



V.

«Երբ նրանք վերադառնան (իրանց նախկին կրօնին), այդ ժամանակ բռնեցիք, որսեղ որ գտնեք նրանց, մի՛ ընտրեք ձեզ բնկերակից, հովանաւոր:

Զուրան II՝ Նիսա 91 այեաթ:

«Նրանց հետ, որոնք իրանց նազարեան են համարում, Մենք դաւանաւորեցիք, բայց նրանք Մեր սովորացրածների մի մասը մտաւայան. այդ պատճառով Մենք էլ նրանց մէջ փոխադարձ բեւտութիւն եւ ասելութիւն բարձրացիք մինչեւ յաւիտեան: Այլանք պարզ ցոյց կսա սյն, ինչ որ նրանք կարկասել են:

Զուրան I՝ Մայիզատ 17 այեաթ:

Օտմանեան սուլթանները դարիս մէջ ամենամեծ ջանք դրին և մեծամեծ զոհողութիւններ արին իրանց զինուորական ոյժը [ցամաքային թէ ծովային] բարեկարգելու և զօրեղացնելու: Այս հարցում սուլթանի վարչութեան հետ զուգընթաց գնում էր և կղերը, քանի որ իսլամի կրօնի ամենաէական պահանջներից մէկն էլ, զինուորական զօրութիւնը, միշտ հղօրութեան մէջ պատրաստ պահպանելն է և խալիֆը պարտաւոր է միշտ պատրաստ ունենալ իր բանակները, թէ թշնամիներից պաշտպանելու և թէ նորանոր նաճումներ անելու համար: Ենիշէրիներին կոտորելուց յետո, որքան միլիոններ է հաւաքուի թշուառ քրիստոնեա տաժանակիր ժողովրդից և ծախուել խալիֆութեան զինուորական զօրութիւնը բարեկարգելու համար:

Այս գործում իսլամին մեծ ծառայութիւն մատուցին հունգարիայից և Գերմանիայից փախած, հալածուած, բախտախնդիր զինուորականները, որոնք Կ. Պոլիս հասնելով իս-



լամն ընդունում էին և ամուսնանալով նշանաւոր պաշտօնականների պաշտօններին հետ, իսկոյն մտնում Օսմանեանների բանակները: Սրանք մարդեցին եւրոպական կարգերով իսլամի բանակները և երկար ժամանակ, դեռ մինչև մեր օրերը, Օսմանեան գնդերը պաշտօնանկ, կամ վատարար եւրոպացի սպաների համար մի մի Քալիֆորնիա է:

Բայց ինչ են շահել Օսմանեան բանակները—տարարատարար, սրանք էլ նոյնպէս արաքին փայլով, միայն ձեւերով և շարժումներով են եւրոպականացել մերկացրու այդ արտաքին կեզեցի, միջուկը դարձեալ նախկին ենիչէրին է, կրօնամոյ, նախադաշարած և անհամբերատար ամբոխը: Զօրականները և սպաները ինչ սր զօրքին սովորեցրել են, պարտականութիւնները, հարկին կատարելիք քաջութիւնները և անվհերք գործողութիւնները, գնդերի իմամները (կրօնական ազօթք անել տւող և քարոզող) հերքել են իրանց նախադաշարումներով համեմած քարոզներով: Սպան սովորացրել է ինչպէս զինաշարժութիւնները, նոյնպէս և սուլթանի և նրա կարգած զօրականների հրամանով քաջարար կուել յօգուտ երկրին և հայրենիքին: Իմամը պատուիրում է զոհել պատերազմի դաշտում Ալլահի և իսլամի տարածման համար և իսկոյն Չէհմիդ (նահատակ) ընկնելով երկնքում եօթանասուն երկու հիւրի-փէրիներ ստանալ: Զօրականը սովորեցնում է աներկիւղ առաջ գնալ կէտ առ կէտ, հետեւելով հրամանատարների կարգադրութիւններին, իսկ իմամը հաւատացնում է, որ շվախեան, քանի որ Ալլահը երկնքից հազարաւոր մէլիքներ է ուղարկելու նրանց օգնելու համար: Յայտնի բան է եւրոպայից եկած կրօնափոխ սպաների պատուէրները անկիրախի տային իսլամի դարևոր քարոզիչների կրօնական խրատներին և պատուէրներին:

Իսլամի դաւանութեան համաձայն մի միւսլիմ (զինուոր, թէ քաղաքացի) չի կաշող ոչ մի դէպքում մի սրբիչ միւսլիմի սպանել, մինչև որ այդ միւսլիմի մահաւան պատժին արժանի լինելը չվճուէ իսլամի հարիմի-Չէրին: Իսլամի վարդապետութիւնը դեռ յորդարում է իր հետեւողներին, ներողամիտ և խնայող լինել մահապարտ միւսլիմին անգամ <sup>1)</sup>: Վրիժառուն իր սպանած ազգականի համար իրաւունք ունի պահանջել, որ սպանողն էլ մեռցի, բայց Ալլահը զուրանով յորդորում է, որ այդ դէպքում էլ ներողամիտ լինին վրէժխնդիրները և եթէ կարելի է՝ տուգանքն ստանալով հաշտուել <sup>2)</sup>:

Այս հիման վրա, ամէն մի միւսլիմ զինուոր, թէ ուրիշ անձ, երբէք իր սպայի, գնդապետի, կամ զօրավարի հրամանով չի կարող իր գէնքն ուղղել ու արձակել մի միւսլիմ անհատի գէմ, կամ ամբոխի վրա, եթէ այդ հրամանին համաձայն չէ իր կրօնաւորը: Սրան ապացոյց մենք կարող ենք յիշեցնել ընթերցողին 1876 թ. Մայիսի մէջ Կ. Պօլսում, սուլթանի Զրապանի և Տոյմարազէի պալատների շուրջը կատարած ցոյցերը, երբ իսլամ ամբոխը իր սօֆթաներով և իւլէմներով շրջապատեց պալատները և ներս մտաւ բռնութեամբ, որ ստիպի սուլթանին խոնարհելու կղերի կամքին և մինիստրները փոխելու՝ համաձայն սօֆթաների առաջարկութեան: Այս ցոյցի ժամանակ իսլամի զինուորները ցած զրին իրանց գէնքերը, շնորհամեղեցան իրանց զօրականներին և շուրջեցին իրանց հրացանները, կամ սուլիմները իրանց հողերականների, ամբոխի, կրօնակիցների գէմ: Սուլթան Աղիզը՝ ճարահա-

<sup>1)</sup> Չուրան սիւրիա IV նիսա 94, 95 այեաթ.  
 — » » XVII թիւի Իսրայել 35 այեաթ.  
<sup>2)</sup> » » II թիւորա 173, 174 »



տած՝ սոփթաների կամքին զիջաւ և Մահմուդ Նեղիմ փաշայի մինիստրութիւնը գլորելով, Միգհագին ու նրա ընկերակիցներին պաշտօնի կանչեց:

Միևնոյն զէպրը պատահեց 1890 թ. Թէհրանում, շահի պալատի բակում զօրականների զէմ, ըէթիի ինզրի առթիւ և Չահը զիջեց սէյիզներին ու մոլլաններին:

Հետևաբար Օսմանեան սուլթանի վարչութիւնը՝ բառի բուն նշանակութեամբ՝ պետական զօրութիւն չունի: Թիւրքիայում եղած բանակները իսլամի խալիֆութեան պաշտպան և տարածման նախանձախնդիր զօրքերի գնդերն են, որոնք հրէք իրանց դաւանանքին չեն դաւաճանիլ: Այսպիսի մի մարմնի մէջ ոչ իրանք միւսլիմները կզիջանեն, որ պիղծ, անհաւատ բայաները մուտք գործեն և ոչ էլ այդ դարերը զիմմիները կհամաձայնին նրանց ընկերակցել 1) իսլամի տարածման նեցուկ դառնալ:

Խալիֆները, մասնաւորաբար Օսմանեան Հիւնքիարները իսլամ ազգաբնակիչութեան միշտ շոյել ու փայփայել են: Խալիֆները՝ Մուհամէդի սկսեալ մինչև օրս, բոլորն էլ ահար են հղել իրանց հետևորդների առաջ և ամէն զէպրում զգուշութեամբ են վերաբերել նրանց հետ: Ամէն մի իսլամ անհատ, ինչպէս պարտաւոր է հնազանդել Իմամի-ազամին և նրա

1) 1878 թ. երբ ուսաները Կ. Պօլսի գոններին մօտեցան, թիւրքերն սկսեցին քրիստոնեաներից կամաւոր զինուոր հաւաքել: Այս մասին Չէյն-իւլ-իսլամից պահանջած ֆէթուայում գրում է գննպետը. «,Որսորդը որսի գնալիս մի շահ կարիք ունի, որ ծառայութիւնները կատարէ: Այս ֆէթուան ժամանակին մեծ ազմուկ բարձրացրեց Կ. Պօլսում. Յունաց պատրիարքը զիջաւ և թոյլատրեց որ յոյները ուսաների զէմ կամաւոր զինուոր գնան, շիակ երջանի. ներսէս պատրիարքը մինչև վերջը ընդդիմացաւ այդ պահանջին:

կարգադրած պաշտօնականներին, նոյնպէս իրաւունք ունի իսլամի սահմանադրութեան [զուրանի շէրիաթի]՝ համաձայն իր իշխանաւորի, խալիֆի զէմ զինուոր, եթէ վերջինը դանցաւու գանւի Քէլամ-իլլահի (Աստուծո խօսքի) զէմ, ստնատակ տա անհատական, հասարակական իրաւունքները, վշացնէ համալսամսկանութեան կարողութիւնը [Բէյթ-իւլ-մալ], շպաշտպանէ երկրում երկնային շէրիաթը, այլ իսլամի վարչապետութեան հոգուն հակառակ գործէ 1): Իսկ իսլամ ամբողջ և կղերը միշտ պատրաստական աջակից են զրկւածին կամ շէրիաթի տրամադրութեան հակառակ միւսլիմ տուժողին \*):

1) Ղուրան սիրիա II Բէգարա 384 այ.  
\*) Մրանից մօտ աանուէինդ տարի առաջ Արզուրումի առևտրական (Թի-ջուրէթ մէջլիսի) դատարանի վճռի համաձայն, այդ ժողովը աճուրդի է զնւում մի սնանկացած միւսլիմի Եահհահ-օղլու՝ անշարժ կալածները: Աճուրդից մի քանի կալածներ գնեցին քրիստոնեաները, որոնց թուում և Սանասարեան ուսումնա բանի վարչութիւն, հազար երկու հարիւր լիբալով (մօտ տասն հազար ուր.) զնեց Չիֆալիկը (ազարակ): Բայց այդ թուականից մինչև օրս Եահհահ-օղլին զինւած՝ հայերին շթողեց, որ մօտենան աճուրդով ծախւած իր կալածներին:

Սանասարեան վարժ. վարչութիւնը Կարնո առաջնորդարանի և Կ. Պօլսի պատրիարքարանի միջոցով սկսեց բողոքներ բարձրացնել, որ Չիֆալիկը իրան յանձնելի: Առևտրական դատարանը նրանց պատասխանեց, որ ինքը վերջացնելով Եահհահ-օղլու սնանկութեան գործը, իր պարտքը լրացրել է: Իսկ եթէ Եահհահ-օղլին չի յանձնում Չիֆալիկը, թող դիմեն պատշաճաւոր նահանգական դատարանին (բիդայէթ մէջլիսի): Սանասարեան վարժ. վարչութիւնը կրթնած ուսական կօնսիլատին, պատրիարքարանի միջնորդութիւնով և լիք լիք քսակներով զինւած՝ գործը վարեցին առաջինից մինչև հրրորդ աստիճանը և ամէն տեղ դատը վաստակելուց յետո, հրաման բերին գործադիր մարմնին (իջուա-կոմիսիօն) որ Չիֆալիկը պաշտօնապէս յանձնեն Սանասարեան ուսումն. վարչութեան: Քանի քանի



անգամ ստիկաններով, ժանդարմներով և զինուորական ուժի աջակցութեամբ զիմեցին զԷդ, որ 2իֆտլիկը յանձնեն Սանասարեան վարչութեան, բայց եահեահ-օղլին նոյնպէս զինու զօրութեամբ ընդդիմացաւ գործադիր մարմնին, նրա բերած ստիկանական և զինուորական խմբերին և վաղեց նրանց, առանց թողնելու որ մտնեն իր կալածքի սահմանները:

Վերջապէս պատրիարքարանի անվերջ թագրիւններից, կոնսուլատի և դեսպանատան անընդհատ պահանջներից ստիպւած, Արզուրումի վոյն Կ. Պօլսից ստացած հրահանգների համաձայն, պետութեան պատիւը այդ օտարականների առջ պաշտպանելու համար, պարտաւորւած ահազին ուժով, ստիկաններով, ժանդարմներով, հեռի և հեծելագօր զնդերով զիմում է մի խղճալի եահեահ-օղլու դէմ և իբրև թէ կալւածքը յանձնում Սանասարեան վարչութեան, տասն երկու տարի անվերջ դատաւարութիւններից և զնւածի շտի էլ դուր ծախսեր անելուց յետ: Բայց շանցաւ մի կամ երկու տարի, Արզուրումի 1895 թ. յայտնի կոտորածի ժամանակ, եահեահ-օղլին կրկին զնաց աիբեց իր 2իֆտլիկը: Այժմ ոչ մի հնաք չեն դտնում յիշեալ եահեահ-օղլուն 2իֆտլիկից հեռացնելու, դուրս անելու, իսկ Սանասարեան վարչութեան հազար երկու հարիւր լիբան և այդ շտի էլ ծախսերը ընդ միշտ կօրան:

Սանասարեան վարչութեան հետ նոյն աճուրդում կալւածք զնոյ հայերը՝ եղբայրներ երկանանները մինչև օրս դեռ դատ են վարում, փող են ձտխսում, բողբոջներ են անում, կաշառքներ են տալիս, փաստարաններ են բռնում, որ մի կերպ զոնէ աճուրդի մէջ իրանց վճարած գումարը ետ գտանան:

Այնքան բազմադան ընդարձակ նիւթ կտրոզ են մատակարարել Օսմանեան մայրաքաղաքի և դաւառների մէջ պատահած համանման ապօրինի դատապատանական և աղմինիտարացիական անցքերը, որ նրանց հաւաքելու, ամփոփելու գործը ոչ միայն անհատական ուժից անշտի բարձր է, այլ մինչև անգամ անօգտակար և մեր նիւթի սահմանից բոլորովին դուրս:

Սոյն օրինակով մենք ցանկանում ենք ցոյց տալ ընթերցողին, որ իրլամ անհատը և խումբը, յենւած իր կրօնադրքին — գուրանին, պաշտպանում է և նրան ընդդիմադրելու համար տկար է պետութիւնը, քանի որ ամբողջ համանման անհատներից է կազմւած, որոնք իրանք իրանց, տէր են համարում ամբողջ պետութեան և իրաւունք են ուզում բանացնել այն

Քառասուն-յիսուն տարւան փորձերը ստիպեցին Օսմանեան ներկա վարչութեան՝ ձեռք քաշել իրանց նախկին վերանորոգչտիկան մտքերից, իրանց ծրագրած և հաստատած օրէնսդրութիւններից: Հետզհետէ աշխատեցին օրէնքները կրկին մօտեցնելու և դարձնելու նախկին շէրիաթին, որպէս զի կարողանան միւրոյիմ ամբօրին հպատակեցնել: Այնպէս որ՝ իսլամը չըզիջաւ կանոնադրութիւններին հպատակելու, կառավարութիւնը ստորացաւ կրկին դուրանն ու շէրիաթը զըրկելու և իր պոյութիւնը պաշտպանելու համար, անդայման խոնարհելու հին շէրիաթին: Այսօր պետական օրէնսդրութեան իւրաքանչիւր յօդւածի տակ դուր կտրում էք շէրիաթից հանւած կտոր կտոր ֆէթւաներ արարական լիզում և այդ հատւածների աղբիւրները <sup>1)</sup>: Այսօր ոչ թէ նոր օրէնսդրութիւնն է գործում Թիւրքիայում, այլ դարձեալ հին շէրիաթն է թաղաւորում և գուրանի սկզբունքով է դատում բրիտանեան այդ գոտարանների առաջ: Սուլթանների կրկիրը փոխանակ առաջադիմելու, օրէօր առելի է խորասուզում գուրանի այաթներում, սրի պտուղն էր վերջին սարսափները:

1876 թ. սեպտեմբերի մէջ հրատարակւած Օսմանեան սահմանադրութիւնը առաջադիմական և վերանորոգչական ծայրագոյն գործն է: Պատերազմից յետո, երբ վերջնականապէս վազկեց Օսմանեան տղալին ժողովը, վերանորոգութիւններին և առաջադիմութեան յաջորդեց բէակցին և դեռ շա-

րայաների վրա, որոնք իրանց պետութեան ընդհանրական գրաստներ են համարում, իսկ այդ վերջինի-իրանց զիմնիների առաջ պարտաւոր դառնալ — չի զիջանում իսլամական մեծամիտ գոռոգութիւնը:

<sup>1)</sup> „Մէջէլի-գաւանին“ 1299 հիջրի (1881 թ.) տպարան Օսմանէի Կ. Պօլսու:



րունակում է հոկայական քայլերով մինչև մեր օրերը: Օսման հան ազգային ժողովը փակելուց յետո, մինիստրները ան- ւանական արձաններ դարձան, պետական խորհուրդը մնջկա- կատակների բեմի փոխադրւեց, Ադլիէն (արգարութեան մի- նիստրութիւնը) աչքը միշտ յառած արքունիքի դռներին, ակ- նարկներով կողէկադ է առաջ պնում ոստիկանութիւնը յիշեց- նում է չոսմի Սուլլաի և Մարիւսի շրջանները, մամուլը, լրա- պրութիւնը ներքողական ժողովածւի վերածւեց, պալատը իւ- լէմներով շրջապատւեց, զրանց ծայրը մինչև Ինդոս և Գան- գէս հասաւ, և որ ամենագլխաւոյն է, մարդկային ձայնը կաշ- կանդւեց, խեղդւեց, որով խղճի ազատութիւնն իսպառ վերա- ցաւ, աւելի փաթարացաւ քան թէ միջին և նոր դարերում:

Միջագետքի եզիդիները, որոնց մի ծայրը հասնում է մինչև մեր Արագածի ստորոտը, որոնք իրանց պոյութիւնը պահպանել էին մինչև ներկա XIX դարի վերջերը, որպէս ստտանայապաշտներ, հալածանքի, ինկելիդիական տանջանք- ների ենթարկւեցան, որպէսզի իսլամ ընդունեն <sup>1)</sup>: Իսլամա- կանութեան տաներկու դարում գլուխ բերել շկարողացածը, մեր օրերում, այս լուսաւորեալ դարում երեք շորս տարւա ընթացքում, սրով, հրով և աւարառութեամբ գլուխ բերին իսլամի իւլէմները: Եզիդիները իրանց միջից դարգացած, զըր- շի ու հանճարի տէր մարդ չունէին, որ նրանց բնակավայ- րերում կատարւած դարհուրելի բարբարոսութիւնները, ան- նկարագրելի սարսափները կրօնական դիպլոմացիայի սեղանի

1) Գուրան սիրիա VIII Ինֆաու 40, 59 68 ալ.  
 — ,, ,, II Իմրան 172, 174 ալ.  
 — ,, ,, XLV II Մէհմէդ 4 ալ.  
 — ,, ,, չէշրի 4 ալ.

վրա բարձրացնելով բաւարարութիւն պահանջէին: Հապա բըւ- նի իսլամացրածները... Կ. Պօլսի թուրքերի պաշտօնական լրագիրները երկու հարիւր հազարի էին հասցնում իրանց քա- ջագործութեամբ թլփատած, իսլամացրած ստտանայապաշտ- ների թիւը, որոնք շնորհիւ վեհափառ խալիֆի, եւմարիս կրօնի լուսաւաւի պարդապետութիւնն էին ընդունել: Գեո մինչև այսօր անագին զինուորական ոյժով մոլլաներն ու իմամ- ները բւնութեամբ եզիդիներին կատարել են սալիս դուրանի պատերահմներն ու ծէսերը:

Երկի բարբարոս կրօնների կատարեալ և անսահման ազատու- թեան համար շնորհւած անթիւ հրովարտակների մէջ սուլ- թանները չէին յիշիլ եզիդիներին, որ ձայն չհանեց ամբողջ եւրոպան և լուսթեամբ խրախուսեց միւսլիմներին, որ սա- տանայապաշտներին բռնութեամբ իրանց դաւանանքները հա- ւատացնել տան: Կամ թէ կրօնացիների Օսմանեանների հետ կատարած դաշինքներում եզիդիների համար յօդւած չկար, որ կարողանային սրանց մասին էլ հարց բարձրացնել: Թող- նւած անխնամ, անտէր, խեղճ եզիդիները դուրանի աշակերտ- ների ձեռքում, որոնք համոզմունքի ու կամքի հակառակ ոչ միայն տանջում են եզիդիներին, այլ մինչև անգամ նրանց երեսաներին կըթում են դուրանի վարդապետութիւնով, գի- նելով անմեղ երեսաներին իրանց ծնողների դէմ, տանջում են մարդկային հոգին, միտքը և խիղճը... Հրացանի գնդակով են սպառնում, ով որ յանդգնում է գաղտնագողի իր բուն համոզմունքների համաձայն գոհաբերութիւն կատարել իրան պաշտածին:

Միթէ եզիդիից սոսկալի կացութեան մէջ չեն նոյնպէս բունի ոյժի տակ իսլամը դաւանած այն անաւոր թուով հա- յերը, որոնք եթէ որեիցէ կերպով յանդգնեն աչքերը պցել



գէպի իրանց դարևոր եկեղեցու զոների կողմը, խաշակնքին իրանք իրանց, միթէ շանթիչ գնդակները չեն սառեցնիլ նրանց հայեացքն ու կեանքը՝ Պարզ կերպով դուրանը հրամայում է, որ խլամի հետեոյնի հետ դաշնակցած անհաւանները իսլամ դառնալուց յետո, եթէ թողնեն, ուրանան խլամի կրօնը, իսլամի նախանձախնդիր հետեոյնի կուրին նրանց հետ, սրակոյ որ հասնեն, ուր որ գտնեն, մինչև այդ ուրացողներին բնաջինջ անելը, կամ մինչև որ մի և նոյն (խլամի) աստուած պաշտութեան կատարելագէս թագաւորելը 1):

1856 թ. սուլթան Մէջլիզի տւած հրովարտակի և սրա բովանդակութիւնը հաստատող Պարիզի դաշնադրի համաձայն, Օսմանեան պետութեան մէջ կատարեալ արածութիւն էր տրւած ոչ միայն քրիստոնէին խլամ դառնալուց յետո նահանջել և կրկին ետ դառնալ, կամ ուրիշ եկեղեցու զիրկը մտնել, այլ մինչև անգամ խլամի դարևոր հետեոյն էլ արտօնութիւն էր տրւած ուղած կրօնին յարել: Բայց խլամ ամբոխի կատաղութիւնն այնպէս անդուտ է գէպի կրօնափոխը, որ նա իսկոյն բարբարոսական քարհալածով կմահացնէ այդպիսի յանգուզնին, որի օրինակները ինչպէս մայրաքաղաքում, նոյնպէս գաւառներում հազարգէպ չէ: Իսկ այսօր այնքան բորբոքել է խլամ ամբոխը, նրա շողորթութւած կղերը այնպէս է լարել սրա զգացումները, որ սուլթանը ևւրուպական զբահակիրների առաջ խոնարհած, ազատութիւն է տալիս կրօնափոխ հայերին իրանց մայրենի եկեղեցու գիրկը վերագառնալու, իսկ խլամ ամբոխի քաջերը համարձակ հրա-

1) Ղուրան սիրիո VIII Ինֆատու 40, 58, 59, 72 այ.  
 — » » IV, Նիսա 91—93:

ցանը ձեռքերին սպառում են գեաւորի եկեղեցու բակում այն խլամն ընդունող և ուրանալու յանգուզողին ու աներկիւզ գնդակահարում:

Բաւական չէ, որ Վանի վիճակում վաթսուն—եօթանասուն գիւղ հայերի բոնի Իսլամացրին Խանաձորի արկածից յետո, որպէսզի սրանք ընդմիշտ չկարողանան իրենց ազգային եկեղեցուն վերագառնալ, քուրդ կղերի ու շէյխերի սարսափից խլամն ընդունած հայերի ազջիկներին քուրդ սղաների հետ, քրդուհիներին հայ նորագործ տղաների հետ ամուսնացրին: Ինչ սրանով էլ շրաւականացան, հայ մարդիկ պարտաւորեցան իրենց հայ կիներն արձակել և քրդերի արձակած կիներն առնել: Իսկ քուրդերն էլ հայ արձակած կանանց վրա ամուսնացան: Այնպիսի սաղայէլական մեքնեռայութիւններ լարեց Օսմանեան կրօնական—ազմինիստրայիան, որ անդառնալի կերպով կլանեց ահաւոր հայ ազգարնակութիւնը և դեռ անդուլթ լուսաւոր աշխարհի ներկայացուցիչները յանդգնում են պաշտպանել Իսլամի խալիֆի բռնակալած երկրի ամբողջութեան անձեանմխելութիւնը...

Վերջացնելով մեր խօսքը ամփոփում ենք.

Քանի որ օսմանեան տէրութիւն անւանուող երկիրը խկապէս կաղմում է խլամի խալիփուրբիւր Մահմէդի կաղմակերպած կրօնական հաւալների ընդհանրական սեփականութիւնը, քանի որ չիւրեարին այդ կրօնական համայնքը ընդունում է իր դաւանանքի համեմատ Ալլահի շուքր այս աշխարհի վրա և այդ մեծ-իմամը Ալլահի Մահմէդի միջոցով տրած յայտնութեան շաղովը պարտաւոր է ընթանալ և առաջնորդել իր հօտը, անհնար է ազգայնական և կրօնական անխարութեան, հուատարութեան հոգևով կաղմակերպւած և հաստատւած կարգեր ներմուծել և գործադրել այդ պետու-



թեան մէջ: Հետեաբար եւրոպական գիտնականներն և գիտ-  
լումաբայի ջանքերը Յոմանեան երկիրը բարեկարգելու հա-  
մար ինչպէս բոլորովին զուր է անցել, երբէք էլ գլուխ չի  
գալ, քանի որ եւրոպական պետութիւններն էլ իրանց մէջ  
վճուել են Օսմանեան պետութեան ամբողջութեան և իտալիֆի  
գերիշխանութեան իրաւունքներին ձեռնամուխ շըլինել: Ուս-  
տի ինչպէս տանջուել է վեց ամբողջ դար արեւելքի քրիստո-  
նեա ազգաբնակիչութիւնը թուրքերի սայրառուր ձիրանների  
տակ, ինչպէս անքացել է բայան դուրանի ծանրարեւոն լծի  
տակ այդ երկար ու ձիգ դարերում: ինչպէս քրիստոնէական  
արիւնով անվերջ խլամը ներկել է այդ աշխարհի լեռներն  
ու գաշտերը, այնպէս շարունակելու է խաչի ետեկց անաէ-  
րունչ գնացողների վիճակը և ամէն մէկի վախճանը, մինչև  
իրանց սպոս սպոս ջնջուելը, եթէ...

Ռ Ա Յ Ա

Պ Ա Տ Մ Ե Կ Ը Ն Հ Ե Տ Ը Չ Օ Տ Տ Ի Թ Ի Ի Ն

Նրանք, որոնք Արեւելում և Ամբիկելում հանապա-  
հուղել են, առանց բացառութեան ստուգած են զարմացմամբ,  
րէ որչափ դժնդակապէս ասնմանափակած է մի հաւասա-  
ցեալ միսլիմի միսքը, սիրած է նրան մի սեռակ երկաթէ  
եղանակ, որ նրա գլուխը սեղմած է այնքան, որ սա բո-  
լորովին փակած է գիտութեան առաջ, անկարող է նոր բան  
սովորելու, նոր գաղափարի մտքի տալու:

էր. Բընան



## Ռ Ա Յ Ա

Նա (Ալլահը) ձեզ ինքներիդ օրինակ է առաջարկում: Միքե՞ դուք ձեր աջի սրկացրածի հետ հաւասարապէս կբաժանե՞ք այն բոլորը, որոնցով մեք ձեզ մասնատում ենք:

Ղուրան XXX սիրիւա Ռում, 27 այաթ:

Այդ իշխանութիւնը մի կարծեցեալ յայտնութեան վրա է հիմնւած, որտեղ վարդապետութիւնն է ընկերականութեան կառավարիչը:

էր. Րընան:

Եւրոպական գիտութիւնները ծայրէ իծայր հերետիկոսութիւններ եւ հեթոնոսութիւններ են:

Չէյխ Րիֆա:

Ամէնին յայտնի է, որ վերջին XVIII և XIX դարերում տասն ու երկու անգամ ուսումները զարհուրելի և արհնահեղ պատերազմներ մղեցին Իսլամի Խալիֆի Օսմանեան Սուլթանների գէմ:

Ռուսները ձգտում էին և աշխատում են Ռայային հաւասարացնել տալ իսլամի հարագատ զաւակների հետ, պետու-



Թեան հիմնական օրէնքների խտրութիւնը՝ իսլամի և ոչ-իսլամի մէջ շնչել ու խողառ անհետացնել: Յայտնի է նոյնպէս որ այդ թշուառ բաղմամբիօն և բազմացեղ ժողովուրդը, ինչպէս Եւրոպական, նոյնպէս Ասիական Տաճկաստանում դարերով զրկւած է եղել մարդկային ամենաբարձրական իրաւունքից: Այնքան գոհարերութիւններից, այնքան մարդկային արեան հեղեղումներից յետո, անշափ միլիօնների փշացնելուց յետո, դեռ այսօր էլ Ռայան չէ կարողացել ձեռք բերել ո՛չ միայն իսլամի դաւակների նման համերկրացիութեան (siotyen) քաղաքացիական արածուցութիւնները, կամ սոսկ հպատակչական (sujet) իրաւունք, այլ մինչև անգամ չեն տւել նրան ապրելու ամենաէական պայմանները՝ կեանքի եւ գոյքի ապահովութիւնը, շնայելով որ այս մասին յաղթողը իւր սրի ոյժով պայմաններ է զրել և ընկճւած իսլամը անճարացած ընդունել է, զաշնադրելով խոստացել է Ռայային ազատել սարկական վիճակից, իսլամների անհատական կեղեքումներից և հաւասարացնել աիրող իսլամ կրօնական համայնքի հետ:

Գարաբաշ ժողովրդի այս արդարացի պահանջին գոհացում չարւիլը, այն էլ XX-րդ դարի շէմքում, գուցէ ընթերցողներից շատերին պարմանք պատճառէ, կամ անբացատրելի հանելուկ թւի, մանաւանդ որ Օսմանեանների շահերի տեսակէտից, ներկա դարում, այդ անհրաժեշտ պահանջ է, բայց իսկութիւնն այս է, որ հեաբաւօր չի լինում իրագործել Ռայայի կեանքն ու գոյքը ապահովելու համար սուլթանների կռած դաւեազրերի հիման համաձայն հրատարակած հրովարտակները եւ օրհեստրութիւնները: Եթէ ուշի ուշով հետևենք վերջին տասնեակ տարւա անցքերին, ականատեսների, ճանապարհորդների վկայութիւններին, կօնսուլների վիճակագրութիւններին, կրկրի ու իրերի վիճակին, մենք կհամոզուենք,

որ ճշմարտապէս այդ երկրում, այդ ահաւօր տարածութեան վրա ապրող քրիստոնեայի երկրացիական, քաղաքացիական և տնտեսական վիճակը փոխուած չէ նախորդ տարրերից, (բացի ինքնավարութիւն ձեռք բերող մանր պետութիւններից), և, որ առաւելն է, այսօր Ռայայի վրա աւելի խոժոռ եւ դաժան հայեացքով է նայում իսլամի մոլիաւնդ ամբոխը, անխրտիր թէ՛ ռամիկը, թէ՛ իւլէման, պետական պաշտօնակալը, թէ՛ դատաւօրը:

Տասնեկններորդ դարի գերեզմանական ահաւօր պատերազմներից, ստրկութեան դէմ Եւրոպական համերաշխութեան ձեռք առած միջոցներից և այնքան փրօւն և սուուցիկ դաշնագրերից յետո, նկատի առնելով դեռ այսօր էլ Ռայայութեան գոյութիւնը, այն էլ Եւրոպայի սրտում, ո՛չ թէ Սուղանում, կամ Մոնթոլիայում, հին աշխարհի ամենաքաղաքակրթւած փոքր-Ասիայում, այն էլ քրիստոնէութեան սարկութիւնը իսլամի ճիրանների արանքում, չէ կարացել շխդճալ և շցաւել Եւրոպայի այն աշխակալ դիպլոմացիայի վրա, որը Ռայայութեան վրա ո՛չ թէ մտաների արանքից, այլ փակ աշքիրովն է նայել, նոյն իսկ փայփայել և դեռ գուրգուրացնում Ռայայի գերամեծարնեքին, իւր քնքոյշ և փաղաքշալի ժրպիտներով: Այս գգանքից քաջալիքւած իսլամ ամբոխը աւելի ստեճարձակ է կեղեքել իւր Ռայային, որով աւելի անտանելի է դարձել նրա, առանց այն էլ, սոսկալի դառը վիճակը: Ճըմարիտ է Ռայան թէ՛ և ծախելու և գնելու սովորական աւարկայութիւնից ազատ է, բայց վաճառւածի վիճակից վտարագոյն օրի մէջ է սգացել, սղբացել է ու տապալկել: .:

Ռայա—անասունների երամակ, ահա թէ ի՛նչ բառով, ի՛նչ անունով է կնքել իսլամը իւր դարերը ծառայութեան մասնւած քրիստոնեա ժողովուրդին: Ամբողջ դարեր իսլամը



իւր նւաճած Ռայայի հետ վարել է ճիշտ այնպէս, ինչպէս հնդիկը պարիայի, Լակեզեմոնացին հիլոտի, հոսմայեցին գերու ու Գլադիատուի հետ: Անընդհատ լսում ենք, կարգում ենք լրագիրներում, թէ այս ինչ տեղ մի քուրդ (իսլամ) իւր հօտը մայրել է քրիստոնեայի արտը. նախիրը փշացրել, տրտրել է այդին, առանց երբէք մտքովն անցկացնելու, թէ ինքը շարութիւն է գործում և կամ այդ արարքի համար կարող է տուժել: Կամ մի թուրք (իսլամ) յարձակել, յափշտակել, քշել տարել է քրիստոնեայի հօտը, ջուկը, ապրանքը, կահ-կարասիքը, կամ սրանց կրակ է տւել այրել, մոխիր գարձրել, առանց խղճահարելու, ճնշելու, թէ ինքը զրկել է, կեղեքել է և թշուաւացրել խեղճ քրիստոնեայ զրացուն: Ամէն կողմից լուր է գալիս, որ մտել են, քաշել, յափշտակել, տարել աղջիկներին, մինչև իսկ հարսներին, պատանիներին, բռնութեամբ պահում են ու դուրս շնն տալիս զբանց և այսպիսի առեանգումները մեծ բարեգործութիւն, վարձք են համարում շարագործները: Քաշում են, տանում են շափահատ աղամարդիկ, որոնք պարտաւորել են իսլամը դաւանել ակամա և այսօր շնն կարողանում ետ կանգնել այդ բռնի ընդունած կրօնից: Գեռ այս հերիք չէ, Ռայայի որևէ ընդդիմութեան, կամ ինքնապաշտպանութեան դէպքում, լսում ենք որ դարկում են, սպանում են. սշխարի նման մորթում, կամ արջի նման գնդակահարում և շարագործ արիւնհարուները անգործ հօգով, խաղաղ խղճով ապրում են: Այս բոլոր անցքերից ու արկածներից կառավարութիւնը ոչ միայն լիովին տեղեակ է, այլ շատ անգամ մոլեռօնդ պաշտօնակալները իրենք են խրախուսում ամբոխին: Վարչական կրօնամուլ պաշտօնակալները ոչ միայն այս շարիքի առաջը շնն առնում, այլ եթէ օտար երկրացիք, կօնսուլատներն ու դեսպանատները

միջամտում են Ռայա քրիստոնեաների բարձրացրած աղմուկներին ու դատերին, մի ինչ որ ձեական դատավարութիւն են սկսում, ուր միշտ տուժում է դարաքաշ Ռայան:

Եթէ հետազօտենք ներկայ անտանելի վիճակի սկզբնապատճառները, քննենք նրա աստիճանական զարգացումը, գտնենք Ռայայութեան արմատը, տեսնենք թէ ինչ էր Ռայան անցեալում, ինչի նրա հետ այսպէս է վարել և վարւում իւրաքանչիւր միւսլիմ, այն ժամանակ կհասնենք այն եզրակացութեան, որ Ռայա բառը հոմանիշ է, պարիա, հիլոտ, ստրուկ, ճորտ բառերին, որով կպարզւի ևս այն հարցը. թէ ինչի ուրիշ կերպ չի կարող վարել յաղթող իսլամի յաջորդը իւր նւաճման ենթարկւած քրիստոնեա օւժասպառ ընկճւած ժողովրդի, իր Ռայայի հետ: Այս պարագան մեզ թելադրեց կանգ առնել այս կէտի վրա, մի քննական—պատմական հայեացք զցելով, պարզել անցեալը և սրանով բացատրել ներկան:

Երբէք մտածանալու չէ այն կէտը, որ Օսմանեան գահակալները իսլամի խալիֆներն են, նրանց իշխանութիւնը Մահմէդի յաջորդութիւնն է և այս պետութիւնը իսլամի կրօնական համայնքի իշխանութիւնն է 1): Սուլթանները ոչ թէ աշխարհակալ—երկրատէր թագաւորներ են, այլ մարգարէի արժուականներն են, տեղապահներն են և Ալլահի շուքը երկրի երեսին, որոնց առաջին և վերջին նպատակը, ցանկութիւնը տեղանքը և կամքը եղել է, և պիտի լինի իսլամի շէքիաթի պահպանութիւնը և յարապետութիւնը: Եթէ այս պարագան, ամէն մի պարագայում աշքերիս առաջ տպաւորւած ունենանք, այն ժամանակ իսլամի հայեացքով կզիտենք իւրաքանչիւր

1) Կուրան V օւզուդ. 5 այաթ.



ինչորի վրա, որով կպարզւի մեղ այն հարցը, թէ ինչն իս-  
լամը Ռայայի գոյրի և կեանքի ապահովութիւն չի ղիջանում  
տալ և չի կարող էլ տալ: Պամ իսլամական համայնքի ան-  
հատները հետ հաւասարել, համերկրացի չինել չի կարող ոչ-  
իսլամին, այնքան արիւնահեղ պատերազմներում այնպէս շա-  
րաշար առժկուց և սոսկալի կորուստների ու անդամահա-  
տութիւնների մասնակուց յետո:

Տարօրինակ չի թւալ մեղ իսլամի իսպիֆայութեան վի-  
ճակներում կատարւած բոլոր արկածները, եթէ մենք կու-  
րանի սահմանած շրջանակի մէջ սեղմած ուղեղներովս քննենք  
չորս կողմը: Վերջին դէպքում մենք բնական, սովորական,  
արդար և նւիրական օրէնքներով նախատահմանած կգանենք  
այդ բոլոր կատարւածները և մինչև անգամ միւսլիմների նը-  
ման կապչինք, թէ ինչ բծախնդրութիւններով մեղ նեղում  
ձանձրացնում են անօրէն—անհաւատ եւրոպացիները:

Ամէն մի միւսլիմ անհատ, Ալլահաշնորհ կուրանի բացայայտ  
օրէնքների հիման համաձայն, Ռայայի գոյքը, զուակները և  
կինը իւրացնելը «հալալ է համարում». դեռ համոզւած է, որ  
բարեգործութիւն է կատարում: Միւսլիմանի հայեացքով ու  
համոզումով Ալլահը դրանց իւր արամադրութեան տակ է զը-  
բել, մինչև անգամ Ռայայի կեանքը <sup>1)</sup>, այնպէս ինչպէս նախ-  
կին դարերում ժառանգները իրենց նախօրդների սարուկնե-  
րին, գերիներին և ճորտերին տիրանում էին, միայն այն  
տարբերութեամբ, որ այն ժամանակները ստրուկները սրոշ  
աէրերի մէջ բաժանւած էին և կողմում էին մասնաւոր սե-  
փականութիւն, իսկ Ռայան համիսլամականութեան ընդհա-  
նուր, անբաժան սեփականութիւնն է կազմում, ինչպէս ան-  
տառների վայրի պատուիները, անասունների որսերը, ծովի

<sup>1)</sup> Կուրան VIII ինֆատ, 68—70 այտթ.

ծկները, օղբ և ջուրը, սրից ամէն մի միւսլիմ կարիք տեսած  
ժամանակ իրեն իջատուներն է համարում ցանկացածի և կա-  
րողացածի շափ օգուել <sup>1)</sup>: Այնպէս որ, Ռայան լինելով իսլա-  
մն ընդհանրական սեփականութիւնը, նա ապրելու համար  
համիսլամական գանձին տարեկան սրոշ գլխագինը (ջէզիէ)  
վճարելուց յետո <sup>2)</sup>, իւր կեանքը գարձեալ սրպէս շնորհ է  
բաշխում իսլամից այն պայմանով, որ այդ կեանքի արտա-  
դրութիւնը գարձեալ պահպանելու է և նայնպէս աւելացնելու  
է համիսլամութեան հարստութեան վրա <sup>3)</sup>, սրից իսլամ ան-  
հատները յաւերժարար օգուելու իրաւունք ունին, սրպէս բա-  
ժանորդ—ընկեր իսլամի համայնական սեփականութեան: Այս  
բաղբը իւրաքանչիւր իսլամ անհատ համարում է Ալլահաբաշխ  
մի շնորհ, նրա հաւատացեալ, սիրելի և ընտրեալ համայնքին,  
սրին մի անդամն էլ ինքն է: Այս շնորհը եզեւ է միմիայն  
Մահմէդի հետեոյ իսլամ համայնքի անհատներին, նրանց երկ-  
րային մարմնաւոր ըղձերին ու ցանկութիւններին բաւակա-  
նութիւն տալու համար <sup>4)</sup>: Իսլամը կրօնապետական զինու  
դօրութեամբ նւաճելով ներկայիս ահաւոր կալւածները, նւա-  
ճել և Ռայայի է վեր ածել այդ երկրներում ապրող քրիս-  
տոնեաներին: Սրանք թուրացած և ընկճւած մտնելով իսլամի  
գերիշխանական լծի տակ, յանձն են առել յալթողների  
Ռայան դառնալ: Ինչպէս Ալլահի բացարձակ պատիրանի  
համաձայն իսլամները պարաւոր են պատերազմ մղել ան-  
հաւատ—այլադաւանների դէմ, նրանցից խլել—ետ առնել իս-

<sup>1)</sup> Կուրան և II բէգարա 27 այտթ.

<sup>2)</sup> » և IX թուրթ 29 այտթ.

<sup>3)</sup> » և IX թուրթ 12 այտթ.

<sup>4)</sup> » և VIII ինֆատ 68 այտթ.



խամի հարագասաների համար ստեղծւած և պատրաստւած աշխարհի հարստութիւնները, նոյն պատգամների համաձայն էլ Ալլահի խոյամի ձեռքը մտանած քրիստոնէի և հրէի կեանքը խնայել են միայն նրա համար, որ այդ ընկճւած-սարկացածները ծառայեն համխոսմանութեան մարմնաւոր վայելքները բաւարարելու համար <sup>1)</sup>: Աբուբէքրի, Էսմէրի, Օսմանի և Ալիի օրով միւսխիմանը իրաւունք չունէր երկրագործութիւնով. կամ ուրիշ արհեստներով պարագելու, այդ գործերը կատարում էին ստրուկները և Ռայաները, նա Բէյթ-իւլ մալից թոշակ էր ստանում և միայն զինավարժութեամբ էր գրադւած:

Խոյամի պետութեան զէնքի զօրութեամբ, թէ խաղաղութեամբ նւաճած երկրներում ապրող ոչ-խալամ, բայց էհլի-թար (կտակարան ունէցող համայնք—հրէա և քրիստոնեա) ժողովրդի կեանքը շնորհել և թոյլատրել է միայն այն պայմանով, երբ վերջինները ամբողջ գոյքով, երկրով խալիֆին անձնատուր լինելուց յետո, համաձայնել են իրենց գոյութեամբ, և արգարութեամբ և սերունդներով Ռայա դասնալ և տարեկան դիւազինը վճարել (Չէզիէ <sup>2)</sup>): Հետեաբար ամբողջ պետութեան մէջ ապրող քրիստոնեա ժողովուրդը, անխափր բոլորն էլ խոյամի Ռայա՝ երբ դասն են կազմում (գրաստաների երամակը): Այս պարագան, հարկ է շեշտել, որ խոյամի դաւանանքի մաս է կազմում երկնառաք Ալլահի սահմանած անքննելի և անվիճելի օրէնք ու ճշմարտութիւն է, որի մասին կտակածիլ, կամ տարակուսիլ չի կարող խոյամ անհատը, և հակառակ վարուողը պարտագանց, անհաւատ կամ ուրացող է: Այս ընթացքով են գնացել Մահմէդից յետո նրա

<sup>1)</sup> Կուրան

<sup>2)</sup> Սիրէ թովրէ IX 29 տաթ.

բոլոր խալիֆները իրենց աշխարհակալութիւնների և նւաճումների ժամանակ, նոյն ընթացքով էլ առաջացել են և Օսմանեան Հիւնքեարները:

Օսմանեանների պատմութիւնը ցոյց է տալիս, որ նրանք իրենց իւրաքանչիւր աշխարհակալական քայլերը փոփոխել են խոյամի վարդապետութեան սգու ընթացքով, նրանց պատերազմները, քաջագործութիւնները, արիւնահեղ սիրագործութիւնները, նւաճումներն ու աւերածները նախագործւած են խոյամի կրօնական սրբութիւններով: Դեռ Կ.-Պօլիսը նւաճելուց շատ շատ առաջ, Օսմանեան Հիւնքեարները-Մուրադ Ա և Բայազիտ Ա. պահանջում էին Բիւզանդական կայսրներից, որ թոյլ տան Կ.-Պօլսում մղկիթ կառուցանելու, խոյամի վարդապետութիւնը քարոզելու: Եւ որ զլիւաւորն է, անպայման պահանջում էին, Բիւզանդիոնում խոյամի դազի (գատաւոր) նստացնել.... Այս կրօնական վարդապետութեան պինդ կպշելով միայն Օսմանեանները մեծացան, հզօրացան և բարձրացան Բիւզանդական կայսրութեան աւերակների վրա, որածելով, անմարդացնելով, արեան հեղեղներ հասցնելով ամբողջ աշխարհներ, պետութիւններ և իշխանութիւններ: Օսմանեան Հիւնքեարները խալիֆութիւնը ձեռք բերելուց առաջ և յետո, մինչև օրո էլ պատերազմները մղել են կրօնի տարածման, անհատներին ընկճելու և հպատակցնելու տենչով ու նպատակով:

Օսմանեանների հիմնադիր Օսման Ա-ի նախնական պատերազմները Գարաշա Հիսար, Էար-Հիսար և Բիլէչիքի քրիստոնեա իշխանների դէմ կրօնի տարածման պատրուակով էր: Յիշեալ Հիւնքեարը 1296—1326 թ. Քէօիքի-Հիսար, Իզնիկ, Իզնիմիդ և բրուսան նոյն պատրուակներով նւաճեց: Այս



քաղաքների նւաճման ժամանակ դուրանի համաձայն 1) և Էօմէրի կարգադրութիւնների ընթացքով, բոլոր գինակիր քրիստոնեաներին անխնայ կոտորելուց յետո, մնացեալները այր թէ կին, որպէս գերի բաժանուեցան յաղթողների մէջ, ինչպէս կատարուեմ էր առաջին շորս խալիֆների իշխանութեան ժամանակ: Սրանցից գեղանիներին բռնի իսլամացրին, կնութեան առին և շատերին էլ ուղարկեցին բազմաքանակ իսլամ քաղաքներ աճուրդի գնելու: Միայն Նիկոմիդիայի (Բզնիմիզ) եկեղեցու միջից հազարից աւել գեղանի կիներ գերուեցան բարբարոսական տրիւնահողութիւններով, որոնց արդուզարդից մերկացնելով, գերի վարեցին հեռաւոր երկիրներ: Հէնց այդ ժամանակներից նւաճած երկրներում սրից ու մահից ազատուեցան միայն նրանք, այն սանչպարները, որոնք յանձն առին Ռայա գառնալ, կամ զիմմի դարձան, այսինքն իրենց ամբողջ գոյքով, կեանքով իսլամի դորականներին սպարտական մնացին: Ահա այս զիմմիեհեի ժառանգներն են, սերունդն է ներկա քրիստոնեա ազգաբնակութիւնը, որոնք գերուեցան Օսմանեաններից և միմիայն գոյութիւնները պաշտպանեցին իսլամի Ռայայի վիճակն յանձն առնելով:

Օսմանի յաջորդ Օրխանը (1326 թ.) հրամայեց, որ իւր ենդի-շարի (նոր գործ) գնդի համար դազինները և դէրվիշները ամէն տարի Ռայաներից մի մի հազար քրիստոնեա պատանիներ հաւաքեն, որոնց խոկոյն թլփատելով մտցնում էին ենիշարական օջախները, մարդում, մարտիկներ սբաբառառում և պատերազմի դաշտն էին մղում: Սրանք դարձան Օսմանեանների սուսերամարտիկները, միայն այն տարբերութեամբ, որ Գլադիատորները կրկէսներում ու հրապարակելուց իրար

յօշոտում, արիւնտքամ էին անում, հոռմի արեան ծարաւի ամբոխին զւարճացնելու համար, իսկ ենիշարիները իրենց ազգակից, կամ կրօնակից քրիստոնեաների արիւնն էին խմում, դաշտեր ու սարեր ներկում էին իրենց հարազատների արիւնով, որպէսզի Օսմանեանների սահմաններն ընդարձակեն, անդուսդ Հիւնթեարներին զւարճացնեն, իսլամի իւլէմներին տողացնեն, նրանց քարասրտ աշխարհակալ կրքերին յագուրդ տալով: Մի գար շանցած ատրեկան հազարի փոխարէն տասնակ երեսնեակ և յիսնեակ հազարներ էին կորչում Ռայայի հայրական հիւղից, մարերի գրկից, արտերի մաճից և այս գեռահաս կարիճ պատանիները ենիշարական օջախները (գօրանոց) մանելով, մարդում էին իսլամի սարսափ սիւսդ զբրօշակը աշխարհի շուրջը ծածանեցնելու, նորանոր ազգերի ու յեղբրի Ռայա դարձնելու գեղանիներին գերելու, սարկացնելու և ճոխութիւնները վայելելու: Բայազիտ Ա-ը մի ամսի ընթացքում քաշեց հայրենի բնակարաններից երեսուցն հազար Բոսնիացի քաջ պատանիներ, բռնի թլփատեց ու իսլամացրեց, մտցրեց ենիշարական գնդերը և առաջնորդեց քրիստոնեաների դէմ մղած պատերազմների ահեղ դաշտերը...

Ինչպէս հին Յունաստանը նւաճող Հասմայեցիները յայնորին գերի էին վարում հոռմ իրենց աներում ոստայնակութեամբ, նկարչութեամբ, քանդակագործութեամբ, նօտարութեամբ, ուսուցչութեամբ և կամ սուսերամարտիկութեամբ պարագելու, նրանցից էլ սանձարձակ և էլ անդուլ էին վարում Օսմանեանները իրենց Ռայաների հետ: Բաւական չէ, որ Ռայան զրկւած է գոյքից, հայրենի հողից, տարազրած էր գաւառից գաւառ, իւրաքանչիւր իսլամ անհաս իրաւունք ունէր նրանից խլել: յափշտակել բաժանել թըրւառի սիրելիներին՝ կնոջը, աղջկան հարսին և ար-

1) Սիրիէ VIII ինֆտալ 68—72



զին <sup>1)</sup>: Գեա այս բաւական չէ, կարող է այս յափշտակածնե-  
րին հրամայել, որ ոչ միայն իւր անաեոական ամէն անասկ  
սասր ծառայութիւնները կատարեն, այլ նոյն իսկ իւր լոկորչ  
կրքերին, բարբոքումներին բաւականութիւն տան, մինչև իսկ  
հարձր գառնան...: Գեա աւելին, նրանք բռնանում են Ռայայի  
խղճի վրա, սեղմում են, որ նա իւր գարեոր սրբութիւններին,  
համոզումներին և գաւանանքին հակառակ, գաւաճանէ իւր կրօ-  
նի դէմ, իրենց խղամն ընդունէ:

Օրթան շինքեարը երեսունըհինգ տարւա թաղաւորու-  
թեան ընթացքում, քրիստոնեականերից հաւաքած պատանի-  
ների թիւը յիսուն հազարը անցկացրեց: Սրանցից այնպիսի  
քաջամարտիկ ենիշէրական գնդեր կազմեց, որանց Գարգանէ-  
լից անցկացնելով (2էլէմէնիկ և Գէլիպոլու) յայնների և Բօլ-  
գարների վէմ մղած պատերազմներում այնպիսի արիւնուշա  
մարանշողներ մարդեց, պատրաստեց, որ որդին Մուրադ Ա.  
ուզգակի դրանց գլուխն անցնելով, զարհուրելի սրածութիւն-  
ներով երեսուն տարւա ընթացքում զղրղացրեց Եւրոպան,  
Նաճեց Թրակեան, Բօլգարեան, Մակեդոնեան, Փարս Ասիան,  
Կիլիկեան, և սասկայի ջարդերով, ահաւիյի կոտորածներով  
արիւնոտող արաւ, կրակի ու բոցի մէջ զցեց Բումանիան,  
Բոսնեան, Ալբանեան, Տրանսիլվանեան, Մաջարստանը Գեր-  
մանեան և Լէհաստանը: Ուր որ մանում էին ենիշէրիները  
զժոխք ու մահ էին տարածում, ամէն տեղ սրից էին անց-  
կացնում բնակիներին, քաղաքների բերդերի ու պահականոց-  
ների զինւորներին և բնակիչներին գերի էին վարում հա-  
գարաւոր և բիւրաւոր մատաղահաս կոյսեր ու պատանիներ,  
անգութ ու անոգսրմ կերպով խողխողում էի ծեղերին ու ծրծ-

կերներին, արիւնը հեղեղի նման հոսեցնում էին, ներկում  
դաշաերը, ձորերն և գետերը: Միայն խղամը, կամ Ռայա-  
յութիւնը յանձն առնող քրիստոնեաները հազիւ կարողանում  
էին իրենց կեանքը փրկել ընդհանրական սրածութիւնից:

Այս պատերազմներից այնքան մեծ քանակութեամբ գե-  
րիներ, մահաւանդ կոյսեր էին բերում ենիշէրիները, որ ամէն  
սի գեղանի գերի կոյսի զինը քսանը հինգ փառայի իջաւ,  
(այժմեան փողով մօտ 2½ բուրլի) և հինքեարը աւարից  
իւր մի հինգերորդական բաժինը ճիւրպէ՛ ստրկուհիներով շէր  
վեր առնում, այլ Ղադ-Սարէրի (զինւորական գառաւոր) ար-  
ւած վճաի համաձայն, հնչուն զրամով էր պահանջում: Այդ  
օրերից գերիների սակագինը ամբողջ երկու դար անփոփոխ  
մնաց: Այս ստրուկների խշաւա վիճակը այնքան զարհուրելի  
էր, որ նոյն իսկ թուրք պատմիչների գութն էր շարժել և  
նրանց ձեռքերով հաղաբաւոր սղբալի նկարագրութիւններին  
արձանագրութիւններ կա: Եթէ այս գերի վարւած մատա-  
ղահասների սղբն ու կոծը կարողացել է խղամ-թուրք պատ-  
միչի կարեկցութիւնը գրաւել, իրենց կրօնակիցների անգութ  
ու անոգոք վարքերը քննադատելով բողոքելու և ցաւակցե-  
լու առաիճան, ուրեմն թշաւութեան իսկական ահաւորու-  
թեան մտաին կարելի է միայն երեսկայութեամբ պագափար  
կազմել... Եւ ո՞վ է իմանում, Մուրադ Ա-ի այդ արիւնտանդ ա-  
ւերածութիւնները զեա քանի քանի տարիներ ևս շարունակ-  
ելու, անելու էին զեա քանի բիւր մարդկանց արիւնը հեղե-  
ղի նման հոսելու էր, և որչափ միլիան թշաւա քրիստոնեաներ  
խղամայնելու, Ռայայի էին զարձնելու, եթէ այդ արիւն-  
ուշա գաղանին շլափէր Միլոշ Կորիլովիչի սուրը:

Այսպէս զարհուրելի սրածութիւններով և աւերածու-  
թիւններով խղամը գերել ու ստրկացրել է իւր երկրում

<sup>1)</sup> Կարան IV նիսա 28—29 այաթ.



զանուդ քրիստոսնեա աղբուծիւններին՝ Ռայային: Այսօր այդ ընկճւածները և մահուան ճիրաններէց փրկելու համար Ռայայի լծի տակ մտածները սրբիքը ինչ իրաւունքով յանդուում, պահանջում են, որ իսլամի խալիֆը իրեն Ռայաների վրա էլ նոյն քաղցր հայեացքով նայի և նոյն մարդավայել արտօնութիւններին արժանացնէ, ինչպիսի վայելում են Ալլահի միակ սիրելի և ընտրեալ միւսլիմները: Կամ միթէ այսօր խալիֆը կարող է իւր կրօնապետական գաւանական վարդապետութեան հակառակ Ռայային, իւր պապերի՝ նախորդների ստրկացրածներին, իսլամի զինու զօրութեամբ գերեածներին բերել, հաւասարել Ալլահի ընտրեալ հօտի համայնքների զաւակների հետ: «Միթէ իսլամի ձեռքի գերածին»<sup>1)</sup> իսլամի վայելքների համար «նախասահմանած Ռայային կարելի է բարձրացնել ու հաւասարել Ալլահին հաճելի միայն ճշմարտութեան շաւղում կանգնող միւսլիմների հետ»: Իսլամի գաւառութիւնով, նրա գաւանական համոզմունքով և տեսակէտով, նրան շնորհւած կուրանի քարոզութիւնով, Ալլահը Ռայային միմիայն իսլամին ծառայեցնելու համար, ընդհանրական սրբածութիւնից ազատելու թոյլատուութիւն է տրել: Միայն իսլամի գաւանակների աշխարհային—մարմնաւոր վայելքների բաւականութիւն տալու համար են կենդանի մնացել Ռայաները»: <sup>2)</sup> Ե՛լ ինչի՞ էին թոյլ տալիս այդ պիղծ անհաւատներին ապրելու և ապահանջելու իրենց նախասահմանւած երկրի օգր, ջուրը, հողը, բերքն ու բարին, եթէ գրանք չպիտի ծառայէին իսլամի բարօրութեան: Դեռ աւելին, իսլամ հաւատա մաս հաղխանների համաձայն, Ալլահը իւր նախասահմանու-

<sup>1)</sup> XXX Սիրէա ուում, այսթ 27

<sup>2)</sup> VIII • ինֆաալ » 68—72

թեամբ Ռայային ստեղծել է, որ սա ծառայէ իւր սիրած համայնքի բարեկեցութեան ու վայելչութեան: Ռայան պիտի դիւրացնէ իսլամի աշխարհային կարիքները ձեռք բերելու դործը և միւսլիմները իրենց հաճույքներին պիտի ծառայեն նեն գրանց: Ուստի միւսլիմներ ինչպէս կարող է հակառակ իրեն եղած յայտնութեան՝ կուրանի, ընդդէմ իւր համոզման, հակառակ իւր դարեօր ունակութեան դարձած սովորութիւններին, զիւրութիւններին, այսօր այդ Ռայայից ձեռք քաշելուց յետո, նրա դոյքը և կեանքը ապահովէ: Դեռ աւելին, նախասահմանութիւնից իւր անօրինութեան տակ թողնւած շնորհներին, բարիքներին, երկրին ու հարստութեանը և պետութեան ճօխութեանը Ռայային հաւասար ընկերակից ընդունէ:

Ինչպէս Արիստոտելի ժամանակակիցների կարծիքով ըտրիութիւնը բնական օրէնք էր, անհրաժեշտ կարիք նոյն իսկ յառաջագիմութեան համար, այդպէս էլ իսլամի դարեւոր արմատացած համոզմունքների համեմատ, Ռայան նրան երկիքից շնորհւած բարիքներից մէկն է, ինչպէս կովը, ձին, սշխարը, էջը և սրիչ կենդանիներն ու բոյսերը: Դեռ Ռայան այդ անասուններից էլ ստօր է, համաձայն յայտնութեան: <sup>1)</sup> Այս բոյսից պարզ է, որ միւսլիմը չի կարող իւր ստրկածի իւր անասունի հետ հաւասարել և կամ այդ անասունին իւր կարծեցեալ բարձր գօրը բազմեցնել: Եւ կամ ինչի՞ չպիտի օգուի այդ շնորհից, ինչի՞ պիտի մերժէ այդ բարիքը, քանի որ գրանից դարերով օգուել է, օգուելու կարիքն զգում է միշտ, նրա համար անհրաժեշտ պահանջ է Ռայան: Մտնաւանդ որ համաձայն երկնային յայտնութեան, իսլամը նրան

<sup>1)</sup> VIII Սիրէա ինֆաալ, այսթ 57.



եղած շնորհները պարտաւոր է իւր հաճոյքին ու բաւականութեան գործածել, իւր անձը շղթակել և բաշխւած բարիքը չբաշխել: Ուրեմն իսլամը ինչպէս կարող է Ռայայից շօգուել, ձեռք վերցնել, կամ այդ բարիքը փշայնել, կորցնել աւանց Ալլահի իրեն հետ կուած կտակը խախտելու սնշացնելու, պարտազանց դառնալու:

Գրօնական վարդապետութեան մոլեռանդարաց յառած, ձրիակերութեան էլ վարժւած, միւսլիմանը իւր ձեռքի տակ սրահել է քրիստոնեային գերու նման, Ռայային բանացրել է և սրա տրդիւնարեբաժսով ապրել, վերապահելով իրեն միմիայն կառավարչական գործերը և զինւորականութիւնը: Այս բնութեան ամբողջ դարեր են ապրել միւսլիմն ու Ռայան իրար քով, առաջինը միշտ քաշել, տարել է վերջինի ձեռքում կամ յարկում գանւած բարին, իսկ վերջինը կուել է բնութեան դէմ, դատել է, արդիւնարեբել է, իւր դարերը սգո օրերը սղրալով, միշտ ու հանապազ աշքի առաջ սննեալով այն վիճակը, թէ ինքը Ռայա է, որ իւր աշխատութեան արդիւնքը, ամբողջ կարողութիւնը և հարազատներին միւսլիմը կարող է քաշել ու տանել, հաճոյքներին գործածել: Օսմանեանների Կ. Պօլիսը տիրելուց առաջ էլ, յետո էլ իսլամ իշխանաւորների ճիրանների տակ քրիստոնեանների վիճակը նոյն է եղել, դեռ շարունակուում է և այս ճշմարտութիւնը խոստովանել են նոյն իսկ սուլթանները, անցեալ դարում վերանորոգչական նպատակով տւած հրովաբտակներով (Խաթ-թ-ըՉէրիֆ 1839 թ. 26 Ջաբան են): Ռայային կողոպտելու և պէս պէս յափշտակութիւնների ենթարկելու ամենամեծ և ամենաանգութ օրինակները հէնց իրենք սուլթաններն են տւել, որոնց հետեւել է իրենց ստորագրեալ պաշտօնակալութիւնը և ամբօրը: Սուլթան Քայադէտ Ա. 1387 թ.

Մուրադ Բ. իւր քոյրերին և աղջիկներին Ազրիանուպօլսում մեծ հանդէսներով հարսանիք անելիս, կամ սրդիներին կարգելիս (1423—1438) պետութեան այլ և այլ կողմերում գրունոց արհեստաւորներին և ճարտարագործներին բռնութեամբ քշում, բերում էին մայրաքաղաք, որպէս զի տարիներով ծառայեն, պալատներ կառուցանեն, մզկիթներ շինեն և պալատական ներքին արդուղարդը, կահաւորութիւնը պատրաստեն արծաթի, ոսկու, մետաքսի, գոհարի ու մարգարտի բանւացքներ կատարեն: Այս բոլոր բանւորները ամբողջ տարիներ ձրի ծառայելուց յետո, փոխանակ շնորհների, կամ վարձի արժանանալու, զրկուում էին դեռ իրենց սիրասուն աղջիկներից, յուստտու դաւակններից, մինչև անգամ կանանցից, որոնց չիւնքեարի հրամանով քաշում, տանում, իսլամացնում, այլագաւանների հետ ամուսնացնելով, ընդհանուր հարսանեկան ուրախութիւնները Ալլահաճա գործերով էլ փառաւորում էին: Միայն Մուրադ Գ. խալիֆի որդիների թրփատութեան հանդիսին Կ Պօլիսի քրիստոնեա ընտանիքներից ութ-տասը հարկաւ կօթ-ութ տարեկան մանուկներ հաւաքեցին, բռնի իսլամացրին և արքայազունների հետ միենոյն օրը թրփատեցին, Ալլահի քաղցր հայեացքը մուրալու համար... Նախանձախնդրական ոգւով սուլթանները միշտ ուզեցել են իրենց նախորդներից ոչ միայն ճօխութիւնով գերազանցել, այլ նոյն իսկ իսլամավայել բարեգործութիւններով:

Համանման դէպքերի նկարագրութիւնները կարող են հատորներ կազմել, մեզ էլ մեր նիւթի ծրագրից չեղել, սուտի այս ուղում ենք աւելացնել, թէ ինչպէս սուլթանները իրենց ուրախութիւնների ժամբում շէին մոռալու՞մ Ռայաներից յափշտակութիւններ անել, ահաւոր գումարներ կորզել, ձրի աշխատեցնել, գաւակներին յափշտակել, բռնի իսլամացնել



Ալահաճո գործեր կատարած լինելու համար, որոնց օրինակին հուրբարար հետեւել են իրենց յայնածաւալ պետութեան մէջ ապրող մեծամեծ վէզիրները, Բէյլէրբէյիները, փաշաները, ենիշէրբէյները, կղերը, այնպէս որ կարողութիւնը հասնող, ոյժը պատող մարդը չէ ուզեցել հա ընկնել իսլամաբարո առաքինական գործերից. : Այսպէսով Ռայային դրաստի նման դասեցնելուց և նրա աշխատանքը իւրացնելուց զառ, Ռայայի խիղճն ու հոգին փալասի նման արորել են, սախակը ճկել իրենց տէրերի քմբի և հաճոյքի համաձայն ձեռնարկութիւններ ընդունելու, կրօնները փոփոխելու: Հագարաւոր և բիւրաւոր քրիստոնեա մանուկների պարբերական իսլամացնելը բաւական չհամարելով, Սէլիմ Ա-ը (1510 թ.) հրամայեց, որ բոլոր քրիստոնեաներին կամ թլփատեն, կամ թրատեն: Այս համաշխարհային սրածաւթիւնից ազատելու համար միլիօնաւոր քրիստոնեաների ծակ ու ճեղքելու թագցրած ու խորած գանձերը հաւաքեցին, եկեղեցիներն ու վանքերը թանկագին զարդերից մերկացրին, ժողովեցին և այս ահաւոր միլիօններով կաշառեցին վէզիրներին, Ղէյլս-Իւլ-Իսլամին և իւլէմային, որոնք հազիւ հազ կարողացան ամբիւր Վէս-Սէլիմի սիրտը, զուգանի որոշ այսթը, էօմերի որոշումները, սրը Ռայայի աշխատութիւնով պիտի պահպանուի իսլամի զինուորական գորութիւնը և Սէլիմի պապի՝ Կ.Պօլիսը նաճող Մէհմէդ Բ-ի հրովարտակները ցոյց տալով և պետական գանձարանի եկամուտի աղբիւրների անփոխարինելի կերպով ցամաքելը ապացուցանելով: Վէս-Սէլիմը թէև ընձեց իւր կաշտուած պաշտօնականներից, ետ առաւ հրամանը, բայց հրամայեց, որ գտնէ բոլոր քարաշէն, գմբէթաւոր եկեղեցիները մզկիթի վերածեն և Ռայա քրիստոնեաները միայն փայտածածկ շինուածքներում շարունակեն իրենց աղօթքները:

Այսպիսի անգութ և բարբարոսական հրովարտակներ արձակող խալիֆներից Վէս-Սէլիմ Ա-ը ոչ առաջինն էր և ոչ վերջինը, նա միայն կոյր հետող էր եղել նշանաւոր խալիֆներին՝ մեծ էօմերին, էօմեր Բ-ին Իւմմանին և Միւթէվէքիլ Արբասեանին, նա միայն իւր պարտականութիւնն է կատարել, որպէս պարտաճանանչ իմամ եւ մանմեդի արուակալ: Ռայան իսլամից զանազանելու և որոշելու համար խալիֆները այլ և այլ կարգեր սահմանած և օրէնքներ խմբագրած են. որպէսզի հրապարակապէս ամեն քաղաքի և այլ «մարդակերպ անասունը» յայտնուի եւ սարբերի, որ միւսլիմանը կարողանա ամեն մի կարեւոր դեպքում այդ Ռայայի ծառայութիւնից օգտուել: Մինչև անգամ յողարաններում և բողոքներում, ուր բնականաբար մերկ մարմնով, միայն մի գոգնոցով էին երևելու Ռայաները իսլամների հետ, քրիստոնեաները միւսլիմներից տարբերելու համար պարտաւորուած էին ծնկներին ու արմուկներին բոժոժներ, զանգակներ կապել, որպէսզի զնգզնոցից իսլամները լսէին ու զգուշանային զրանց ապականուած ու նեխուած անարգ մարմիններին բուելուց: Իսլամի տիրած երկրներում միշտ շարաշար տանջանքի ողբի ու սգի մէջ է եղել Ռայան: Այս անվերջ սուգը պարտաւորուած է եղել արտաքին տարազով արաւայտելու, որը անել է մինչև մեր օրերը: էօմեր խալիֆը հրամայեց, որ Ռայաները միմիայն սե հագուստ հագնեն, կրէք իրաւունք շունենան միւսլիմանի զրակ գնելու, կամ ապարօշ կապելու, կամ գոյնզգոյն կօշիկներ հագնելու: Ռայան իրաւունք շունէր թամբած ձի, կամ ջորի նստելու, դէնք կրելու. իսկ եթէ իսլամի վրա ձեռք բարձրացնելու յանգնէ՞ր՝ մահ էր նրա պատիժը: Ռայան բարձր ձայնով աղօթելու, արատուելու, կրօնական թափորով հրապարակ դուրս գալու, զանգակ խփելու



եկեղեցի, վանք կառուցանելու, սրանց գմբէթին խաչ բարձրացնելու երբէք իրաւունք չի ունեցել: Էջմերի օրէնքները Օսմանեանները ճշտութեամբ պահպանել են, այնպէս որ միմիայն այս կարգերից պարտազանց Ռայաներից արգելօք որքան ընդարձակներ զլուրը կացնի տակ է ընկել և որքան միլիօն գումար տուգանք են կորդել դարերի ընթացքում...: Եթէ բացել պատրիարքարանները, թեմակալները և վիճակաւորների արխիւները և քննել, թէ արգելօք մեր նախորդները քանի քանի միլիօններ են վճարել անկուշտ ու ծակաչք Օսմանեան վէրիքներին, փաշաներին, կամ բէգերին, որ կարողացել են ամբողջ հինգ դար պահպանել իրենց եկեղեցիները, վանքերը կարկատելով, կամ հիմքից վերաշինելով: Մեծամեծները հրովարտակներ շնորհել են, իսկ ենիշարխներն ու բաշիրողուկները շարունակ արգելք են դրել նորագութիւնների կամ շինութիւնների վրա և ժողովրդի Ռայայի մաշկն են քերթել:

Իսպառ Ռայան զրկւած է եղել ս: միայն սեից ջոկ ուրիշ գոյնի շոր հագնելուց, այլ մինչև անգամ մաքուր հագնելը, զէնք կրելը, կարգին բնակարան ունենալը, սոսկի, արծաթ, գոհար կրելը, փողօցի մայթից քայլելը, իւրամական թափարներին և ենիշարական գնդերի հանդէսներին հանդիպելը մահացու յանցանք էին և օրինազանցների պատիժը դահիճի կողմին էր և կախազանի ճարպոտ շանը: Միայն ուժեղ Ռայաները մեծամեծ կաշառներով և հզօր թեմակալների հովանաւորութիւններով ու միջամտութիւններով կարողանում էին մահաւան ճիրանից ճողովրել: Դեռ մի դարից շատ չէ անցել այն օրից, երբ Գերմանական կայսերական զեռպանք իւր ամուսնի հետ գոհ գնացին իրենց անաղի հետաքրքրութեանը: Ենիշարական գնդերը երբ անցնելու էին Թոփ-Քափուրց,

Թէքքէի մօտից պատերազմի մեկնելու համար, զեսպանք կընող հետը ուղեցին անձամբ տեսնել ենիշարական հանդիսաւոր գնացքը: Գեսպանք ընտանիքով թագնւած էին մի կաշառւած միւսլիմ սափրիչի կրպակում, որ ծածկւած լուսամտակ ետեւից ծակափնեքից զիտում էին ենիշարիների գնացքը: Յանկարծ նրանց նկատելով «սանջակը-չէրիֆը» (զրօշակ) առաջ ասնող մի խումբ, իւրոյն փշրեցին կրպակի դռները, ներս խուժեցին և կաշառւած սափրիչի տանը զարհուրելի եղերական տեսարան տեղի ունեցաւ, սոսկալի, անգութ արիւնահարութիւններով, կոխրտեցին մինչև անգամ թշուա կանանց ու անմեղ երիտաներին: Եթէ զերմանական կայսերական զեսպանն էլ այս վիճակին էին մատուած, պէտքէ գուշակել թըշուա ու անպաշտպան Ռայայի սոսկալի տառապանքը ամբողջ դարեր, որի «լինելու և շինելու իշտանութիւնը Ալլահի բացայայտ յայտնութիւնով բաշիրողուկներին էր յանձնւած»...:

Այս սոսկալի զրութեան մէջ բնականորաբար ամէն մի Ռայա սև օրին և ճգնաժամին յոյսի, ապաւէնի համար, պարտաւորւած էր իրեն պաշտպան և հովանաւորող վարձել: Թէ եւրոպական և թէ ասիական թուրքիայի քաղաքացի արհեստաւոր և առևտրական Ռայաները աշխատում էին խլամ ամբոխի, կամ պաշտօնականների մէջ իրենց հովանաւորող գրտնել և մանուս էին զբանց թեի տակ: Ընդհանրապէս ենիշարիները և յայտնի պաշտօնականները շատ թեմակալներ ունէին: Կզերը ընդմիշտ հակասակ են եղել, թէ թեմակալներին և թէ հովանաւորողներին, օրովհետև այս բանը հակառակ են համարել իսլամի վարդապետութեան սզուն: Սրանք աշխատել են որ Ռայան անպաշտպան մնա, ամէն մի միւսլիմ անարգել կարողանա նրան փետրել: Բայց պէտքէ իմանալ, որ հովանաւորողը միայն որոշ շահով, իւր ոյժի և զիրքի համեմատ կարողա-



յեւ է պաշտպանել թեաքեալին, զօրեղ սյծի առաջ խոնարհ-  
ւել, հեռացել են, մինչև անգամ առաջին մահացու հարածը  
իրենց ձեռքով են աւել իրենց շքի տակ պատսպարւածին:  
Այս առթիւ անթիւ օրինակ կարող ենք գտնել, եթէ քրքրենք  
վերջին դէպքերի նկարագրութիւնները, որոնք կատարւեցան  
Տաճկաստանի այլ և այլ քաղաքներում: Այս պատճառով էլ  
Ռայաները միշտ ձգտել են զօրաւոր մեծամեծներ շքի տակ  
պատսպարել: Օսման պետութեան կազմակերպութիւնից  
մինչև անցեալ դարերի առաջին կէսը, իսկ երկրի խորքերում,  
մինչև օրս էլ, դեռ Ռայան շի ցանկանում պուկ զալ հովանա-  
ւորներից և ստրկական համբարատարութեամբ անընդհատ լըը-  
ցրել են և լըցնում են նրա ամբարները՝ սիրտը զրաւելու-  
համար: Պէտք է յիշել, որ շատ անգամ հովանաւորները  
մեծամեծ օգնութիւններ են հասցրել իրենց ապաւինողներին  
և զանազան միջոցներով նրանց ազատել են զարհուրելի կա-  
ցութիւնից: Թեաքեալներն էլ փոխադարձաբար քրտնաթոր  
աշխատութիւններով փոխաբերնել են նիւթականօրէն: Գիւ-  
ղական հասարակութիւնները մինչև անցեալ դարի առաջի  
կէսը ունեցել են իրենց սահմանի աղան (վասալը), կամ բէ-  
զը, որը որպէս կալւածատէր և աւատաւոր՝ պաշտպանել է  
և հովանաւորել հնարաւորութեան շափ իւր կալւածքի մշակ-  
ներին արտաքին յարձակումներից, որպէսզի իւր կալւածքի  
բերքն ու բարին, հարձն ու ազատինը չկորցնեն օտար-  
ները, չկլանեն ուրիշները, բայց զօրեղները միշտ քաշել տարել  
են: Այսպէս թէև Ռայան մասամբ մասնաւոր սեփականութեան  
ձևի տակ է մտել, բայց իսլամի կղերը միշտ ընդդիմադրել  
է այսպիսի սանձաւորներին և աշխատել է Ռայային թողնել  
ընդմիշտ ընդհանուրի՝ համիսլամականութեան ծառայութեան  
սահմանում, ազատ, արձակ, ամէն մի միւսլիմի կամայականու-

թիւններին, հաճոյքին ծառայելու, ինչպէս օգը, ջուրը, անասու-  
ների պատւոյները, որսերը և ծովի ձկները:

Ռայայի անտանելի, անապահով վիճակից, կեանքի, գոյքի  
անվերջ աւարի մատուցուց, իսլամների մշանջնաւոր յափշ-  
տակութիւններից և պահանջներից, պետական հարկահան-  
ների անոպր կեղեքումներից ու կողոպուտներից ի՛նչ սոսկա-  
լի անտեսական անկումն որ կարելի է երևակայել, ամենա-  
զառն տեսակները իրականացել են Գանուրի ափերից մինչև  
Տիգրիսի ափերը ապրող ազգերի և ցեղերի մէջ: Երկրագործը  
որի արտադրութիւնից կախած է կ' իւր, կ' քաղաքացու գոյ-  
ութիւնը, մոռացած սիրելի զաւակների կնիշէրական օջախ-  
ներում դեղերիլը, սիրատուն աղջիկների հարէմներում ձողկ-  
ւիլը, պարտաւորւած է եղել քաղցած, մերկ և բացօղեայ  
մորմորալ և սղրալ իւր զարհուրելի վիճակը սովի ճիրանե-  
րում: Ծերն ու պառաւը, մանուկն ու մատաղը զրկած իրենց  
երկրագործական անասուններից՝ եղից ու ձիուց, իշուց ու  
ջորուց, անըում էին բնութեան խստութիւնների զէմ կուելով  
և անգութ կերպով հարստահարում, գոսացնում ու ջրատում  
իրենց անգամները: Եւ այս դառն աշխատութիւնների ընթաց-  
քում ուժաստիւ մարմնով թաւալւած հողի ու տակաւնու-  
թիւնների մէջ, պարտաւորւած էին լինում վայրի խոտերով  
ու արմատներով իրենց ստամոքսները բեռնաւորել՝ սովամահից  
ազատելու համար...: Ամբողջ ամիսներ ու տարիներ շարա-  
շար տանջելով՝ հասցրած բերքն ու բարին պորտաբոյժ ազա-  
ների ու ձրիակիր բէզերի մասանները լցնելով էլ դեռ չէին  
կարողանում պուրիները դրանց մարակից և թիկունքները մահա-  
կից ազատել: Այս սոսկալի դրութեան մէջ սովն ու ժանախա-  
տը փոփոխակի իրար էին յաջորդում, որոնք հնձում մերկա-  
ցնում էին դաշտերի, ձորերի և սարահարթների երեսից իս-



լամի ճիրանները պղտաւած Ռայաներին և անապատ դարձնում երկիրը, շէնքերից միմիայն աւերակներէ հետքերը և հանգստարանները թողնելով: Այս շարաքաստիկ կացութեան մէջ յուսահատութիւնը ինչեւ շէր գործել տալիս եղկելիներին: Երբ Մուրադ Գ. անցնում էր Սօֆիայի մօտով, 1695 թ. երեք հարիւրի շափ Բօլգար այր թէ կին գիններին խուրձեր, վզերին փոխաթ դրած խալիֆի աշքերի առաջ իրենք իրենց կրակ աւին, այրեցան, մօտիկ դարձան, սրպէսզի քարասիրտ հինքեալին հասկացնեն իրենց կրած դուրհուրի տանջանքների և զրկանքների աստիճանը...: Քայց Ալլահի երկրի վրայի շուքը արդեօք ինչպէս բացատրեց մարդկային պատմութեան այս հազադէպ և քստմնելի եղերական տեսարանը...:

Ռայայից խրած է եղել ոչ միայն կայքը, գոչքը, կեանքը և մարմինը, ոչ միայն բռնարարած է եղել նրա խիզճը, միտքը, հոգեկան զգացումները, այլ նա ստիպւած է եղել լուսու, երբէք մտքովն անգամ շրոգորել էրած ֆիզիքական ասնջանքների համար: Ինչպէս Ռայան իրաւունք շունէր իւր ինչքը յափշտակողների ձեռքը բռնելու, դաւակներին տանողների ճանապարհը կտրելու, նայնպէս պիտի անմուռնչ տակար և ցաւերին, կսկիծներին գիմադրէր առանց կոծելու, երբ նրա աջն էին կարում, ոտքն անդամահատում, ախանջը փրցնում, քիթը քերթում, աշքը փորում, արցաններով միսը զջւում, գլխին շիկացրած թատ անցկացնում: Գաթան և քարասիրտ դողինները (դատաւոր) ինչ տանջանքների շէին մատնում Ռայային սարկացնելու, կեղեքելու, պոպկելու, չքաւորութեան մէջ խորովելու համար: Այսպիսի դատաւորների գրանը սր յիմար Ռայան կարող էր յանդգնել գիմել և բաւարարութիւն աղերսել մի որեւէ իսլամի գործած անիրաւութեան համար: Միթէ մի որեւէ աղա (իսլամ) պարտաւոր է իւր ինչ-

կիցէ արարքի համար Ռայային (սարկին) հաշիւ տալ և կամ նրա գէմ պատառխանտու կանգնել, քանի որ Ռայան իւր գոյութեանը, կեանքի շնորհը տիրոջն (միւսլիմին) է պարտական:

Ռայայի ստրկական վիճակը, անվերջ կեղեքումների ենթարկելուց առաջացել է այն առելութիւնը, որը տաժում են քրիստոնեաները իրենց բռնակայների դէմ: Այդ առելութիւնը այնքան անսահման է, այն աստիճանի զարհուրելի է, շնորհիւ անգութ, անողոր իսլամական գահիճների սրածուրթիւնից ու արեան սողումներից, սր դա առելութիւնը ծնեցրել է վայրի անտանների և ապառաժային այրերի «ղաչաղներին» (կառավարութեան զարհուրելի տանջանքներից փախտական) խմբերին: Այս խմբերը, որոնց Անատոլիայում Հայդուղ (կատաղի-արջ), Բալկաններում Հայդուղ են անւանում, ներկայացրել են Ռայայի սարսափելի վիճակի բողոքը, որոնք կառավարութեան հետ զուգընթաց անընդհատ պահպանել և շարունակել են իրենց գոյութիւնը, մշտնջենաւորապէս իրար դէմ լարւած զարհուրելի արիւնահեղութիւններով: Իսլամական անտանելի լծի դէմ բողոքող այս ապստամբները, այս զաչաղ-հայդուղները ամբողջ շորս դար ինչ սոսկալի անձնագոհութիւններով, ինչ ամենի քաջագործութիւններով անվերջ մարտնչել են իսլամի իշխանութեան դէմ, այդ կարելի է եղբարեացնել այն անվերջ կռիւներից, որը տեղի է ունեցել իսլամի և այս մարդկային բնակավայրերից վայրի որջները ապաստանողների մէջ: Օսմանեանների Բիւզանդիոնին տիրելուց մինչև այսօր, դեռ մինչև անգամ իրենց փառքի գաղաթնակէտին՝ Սուլթան Սելէյման Ա. շրջանում, երբ Գերմանական կայսրն անգամ յաղթւած, բնկճւած և պարտաւորւած էր իսլամի գերիշխանութեան տարեկան երեսուն հազար ոսկի հարկ



վճարել, ոչ միայն տարի չէ անցել, որ կառավարութեան դէմ բողոքող մի բուռն ասպետներին ընկճելու և խոնարհեցնելու համաք, բանակներ չկազմակերպեն, գնդեր չըզրկեն, թնդանօթներ չբարձրացնեն լեռները: Այս կուրանքում միշտ հայդուղն է յաղթել, միշտ իսլամի խալիֆն է խոնարհել, միշտ բանակները և ենիչէրները ցրել, փախել են և վերջապէս այդ հայդուղական խմբերի շնորհիւ Ռումանեան 2երնագործան, Յունաստանը. Սերբիան, Յուգարեան, Աէրէյ-Լիբանը, Սամոսը, Բոսնիա-Հէրցեգովինան, Կրիտէն, Աէյթունը կամաց կամաց անջատել են, բաժանել են. արտօնութիւններ են ձեռք բերել և դուրս եկել իսլամի ճիրաններից: Հինգ դարի մէջ, մի միայն խալիֆական յատուկ հրովարտակներով, առանձնապէս նշանակած սպարապետներով, կամ զօրականներով, բանակով, թնդանօթներով և զբահաւորներով ութսունը հինգ անգամ կարգին ներքին կուր և մղել Ռայաններից փախստական գնդեր կազմած ասպետներին դէմ և այս սպասերազմները տեսել են մէկից մինչև երեք, հինգ տարի: Այս կուրանքը առիթ են տեսել ապիկար եցիչերիցերից և բաշիքուզուկներին հայդուղների դէմ ընկճելու ոխը առնել դաշտային և քաղաքային անմեղ խաղող ու սորկացած Ռայայից հարիւր հազարների սրածել, յափշտակել և նրանց գոյքը իւրացնելով: Քանի որ խալիֆութիւնը գոյութիւն ունի, այս բանը իրեն բազմը համարելով միւսլիմը Ռայայից միշտ պիտի ջանա գլխել, քերթել և վայելել: Ռայան էլ զրկանքներից ընկճած ու ճնշած, իւր դասն վիճակի միակ պատճառն եղող միւսլիմանին ատելով պիտի ատէ:

Եւ ինչպէս կարող էր շարատանջ Ռայան, զրկած իւր ամենակարևոր գործիքներից, գործող անասուններից, ոյժից ու տղահոգութիւնից, մարդավայել բնակարանից ու սնունդից, բաւարարել իւր իսլամական ազաններին, բէգերին, փա-

շաներին ու ներքիններին յագուրդ տալ, երբ սրանցից իւրաքանչիւրը աշխատում էր և պահում էր քառանական հարձ, ութսունական ազախին ու մանկլաւիկ, տպարանք ու պալատ, ձիերի ու ձրիակերների երամակ, կառքեր, պատգարակներ, արքայավայել մետաքս ու դիպակ և շոյլ շքեղութիւններ: Ամէն մի նահանգի փաշան. բէգն ու աղան, աւելի շատ է ձգուել հարէմներ կաղնի, հանդէսներ սարքել, փառահեղ ստայներ կառուցանել, մի խօսքով սուլթանավայել շքով ապրել, քան թէ իրենք խալիֆները: Եւ ո՞ր գաւառական քիչ թէ շատ աչքի ընկնող քաղաքում, աւանում, նոյն իսկ գիւղերում շենք հանդիպում այնպիսի սպարապետների աւերակներին, կամ խալիֆներին, որոնց գաւթներում ու պարաէգներում շեն պատահում մարմարեա, կամ սրբատաշ շքեղ քէօշքեր, աւազաններ, խիտ ու թաւուտ անտառների մէջ ծածկած, ուր կրքապաշտ փաշաներն ու ինքնակոշ բէգերը իրենց հարձերով ու խանութներով, աշխատել են ջէհէնէթի մինիատուրը այս աշխարհումն էլ վայելել և վաւաշ բորբոքումներին յազնցնել...:

Եթէ միմիայն Կ. Պօլսի և գաւառների այսօրեա հագարուր ոսկերիչների անկեալ և քայքայած դասի վրա մի քննական հայեացք ուղղենք, զրանց նախորդների ահաւոր լէգէոնների գործունէութիւնը հետադասենք, մի սրտը գաղափար կկարողանանք կազմել այն ահաւոր քաղաքային դատակարգի մասին, որը գիշեր-ցերեկ անընդհատ արնել ու տանջել է կանանոցների գոհարեղէնները յարգարելով, ընդունարանների արծաթի, սոսկու, կերակուրի և ծխիչների անօթները շինելով, ալոռատան գոհարաղարդ թանկագին ձիազարգերը կազմակերպելով: Եթէ ամէն մի հասարակ փաշայի ճաշի, կամ ընթրիքի սեղանը հարիւր քսան տեսակ կերակուրներից էր կազմւած, այդ սեղաններին սովորաբար շոյս-հինգ հարիւր



այլ ու կին էին մասնակցում տարրեր սեղանատներում, զբրանցից կարելի է հղբակացնել, թէ որքան անօթներ, պնակներ և շիրուխ, կամ նարգիլէներ էին պատրաստում ամէն մի նահանգում, կամ գաւառում: Եթէ ամէն մի հասարակ ազգայի, բէգի առաջից տասնեակներով «Եգակ» ձի էին քաշում, որոնց իւրաքանչիւրի ոսկիից ու գոհարից հիւսած արդուզարդը զբնահաստում էին յիսունից մինչև հինգ հարիւր «էկաա» (մի քէտան արժէ մօտաւորապէս յիսուն բուրլի) ստակ, կարելի է մտկարկել, թէ տարեկան քանի՞ քանի՞ միլիոններ ծախսում էր շուայի աիրողը միմիայն այսպիսի փարթամութիւնների վրա...:

Մինչպէս առանց դառն աշխատանքի, առանց գոհարերութիւնների ձեռք էին բերում ազաններն ու վաշանները ահաւոր ճոխութիւններ: Կեղեքելով միայն իրենց Ռայաները, այնպէս էլ յանկարծակի, անտինկալ կորչում ու փշանում էր զբանց հաւաքածը որեւէ հասարակ պատճառով: Խալիֆական մի հրքաման, նոյն իսկ ենիշէրական մի հասարակ սխալալութիւն այրում, կործանում, սպանում, աւարի էր մատնում զբանց ինչքը, կանանոցը և մոխրակոյտը թողնում: Այնքան անհատալի արագ էին ընկնում, դուրսում պաշտօնակալները, կամ ինքնակոչ բէգերը. մանաւանդ վէզիրները, որոնց իսկոյն ուղարկում էին կասափնարան, որ թուրքիայում յատուկ առակ էր դարձել, թէ վէզիրի բազմօցն ու կասափնարանի կոճը համանիշ են: Ամէն մի ներակոչ վէզիր իւր նախորդին դուրսուց և գլուխը կարել տալուց յետո, երկրի, աշխարհների, նահանգների և գաւառների վարչութիւնը կապալով տալիս էր իւր կուսակից ստորադրեալներին, որոնք նոյնպէս գլխատել էին ապիտ, կամ սպանում այդ վիճակաւոր պաշտօնակալներին և աիրում վիճակներին: Որովհետեւ այս վիճակաւոր

կապալատները չէին կորոզ փտահիլ իրենց բազմօցի յարատեւութեան վրա, կամա թէ ահամա, գործի գլուխ անյնիւր պէս, ազահութեամբ ծծում էին Ռայաների արիւնը, որպէսզի իրենց վճարած կապալազրամից շուկ, կարողանային մի գումար էլ դուրս բերել, հարազատների սև օրը ապահովելու համար: Այսպէս շարունակում էր անվերջ՝ ամբողջ շորս հինգ դար: Որովհետեւ պաշտօնանկութեան հետ անխուսափելի էր կառափնարանն ու կարողութեան յարբունիս գրաւելը, մատնելը ինիշէրիների ձեռքով, ուստի գործի գլուխ կանգնած օրից ամէն մի պաշտօնակալ տքնում էր գիշեր-ցերեկ վայելքով անցկացնել ժամերը, բազդի ժամերն ու վայրկեանները առանց հաճոյքի շահեցնել: Եւ ինչպիսի՞ ահաւոր գումարներ էին կորզում ենիշէրիները այսպիսի անձաւորութիւնների գոյքը աւարի մատնում օրը: Սուլթան Մահմադ Ա-ի ներքինի Բէհշէթ-ազայի գանձարանից, որը քսանը ութ տարեկան հասակում գլխատեցաւ, միայն յիսուն միլիօն դուրուշ կանխիկ դրամ դուրս եկաւ, որ ներկայիս փողի հետ համեմատելով մօտ քսանը հինգ միլիօն բուրլի է կազմում: Այսպէս մէկը քայքայում, զլբւում էր, միւսը առաջանում, իսկ թշուա մայան պարտաւորած էր անզագար նոր գալոզների դանձարանները լքցնել. ամբարները ճոխացնել, որպէսզի նրանք իրենց սալքանաքին (արքայավայել-ճոխութեան) վայել զարգարեն իրենց ապարանքները, կանանոցները, ախոռները, մասանները, զեղխութեան ու շախտութեան մէջ ծփան, արդուզարդի մէջ սնգուրած ծփփան:

Իսկ թէ, վաշաների վէզիրների նրանց դասակից աստիճանաւորների խոհանոցներում ի՞նչ սարսափելի շալալութիւն էր աիրում, չի կարելի գրելով զազափար տալ ընթերցողներին: Ամենահասարակ գաւառապետների սովորական ճաշերն



ու ընթրիքները հարիւր քսան տեսակ կերակուրներից էր կազմուած, իսկ հրաւերներին, հանդէսներին կրկնապատիկն ու ըստապատիկը: Այս կերակուրների մեծագոյն մասը շաքարից իւղից, մրգեղէններից, համեմներից և որիզից էր պատրաստուած, ուր վարդի իւղը ջրի նման էին բանացնուած, աննկարողրելի գումարներ էին կուլ տալիս: Գեռ շինք յիշուած խալիֆների կատարել տւած արտակարգ հրաւերները, հանդէսները, իրենց զաւակների թլփատութեան և աղջիկների հարստեան հարկիքները, որոնց Կ. Պօլսի ամբողջ իսլամ ազգաբնակչութիւնն էր մասնակցուած մի քանի ամիսներ շարունակաբար: Այս հրաւերներին տիրող շոայութիւնները ակամա յիշեցնում է Լիկուլոսի, Կրասոսի, Պոմպէոսի, Կետարի ժամանակների մեծածախս խնճոյքները, ուր ինչպէս կոնսուլները ոչինչ չէին խնայում ամբողջ սիրտը գրաւելու համար, այնպէս էլ ձգտում էին այտտեղ միւսլիմներին գրաւել և Ռայային ցոյց տալ խալիֆի ահաւորութիւնը: Կարելի է առանց կասկածելու ասել, որ Մուրադ Բ-ի, Մահմէդ Բ-ի Ազրիանուպօլսում Մուրադ Գ-ի Կ. Պօլսում տւած խնճոյքները, որոնք ամիսներ տւելցին, գերազանցում էին Կրասոսի և Կետարի շոայութիւնները: Սոլթրաբար խալիֆների արքունիքում օրական երկուսից մինչև երեք հարիւր ոչխար, երկուսից մինչև երեք հազար հաւ ու հաւեղէն էին ծախսուած, որոնց համեմատ միւս նիւթերը, մանաւանդ քաղցրեղէն, պտուղ, դայֆէ, որի գործածութիւնը թուրքերը ներմուծեցին Եւրոպա:

Ինչպէս ուտել-խմելու, նոյնպէս գուլելու և հագնելու վայելքներից ետ չէին ուզում մնալ Օսմանները իրենց նախորդ աշխարհակալ պետութիւններից: Այնպիսի թանկագին պարսկական, հնդկական, շին-ճապոնական կերպաններ էին բանացնում, որ իւրաքանչիւր կտոր գերձակին յանձնելիս

կշեռքով էր կատարուած գործը, սրպէսդի շլինի թհ անհաւատ Ռայան՝ գերձակը կարողանա կատրներից գողանալ: Թէ թիրմա, թէ լահոր, թէ մետաքսէ բանւածների համար ահաւոր գումարներ էին վճարուած, իսկ արծաթաթել և ոսկեթել զիւպակները կրկնակի արծաթով ու ոսկով էին կշուում՝ փոփօխուած: Այս բոլորը դարաբաշ Ռայա բանուրը գիշեր ու ցերեկ աշքերը կուրացնելով պիտի ասեղնագործէր, պիտի նկարներ բանէր, կուրանից այաթներ ընդօրինակէր քիւֆի տառերով, սրպէսդի սրանց թալիսմաներով շար աշքերից և ոգիներից անդերծ մնային այդ թանկագին լաթերը բանացնողները: Ուշագորոյս Ռայայի կաշին քերթելով հաւաքուած միլիօնները անխնա պիտի շոայէին իսլամի իշխանութեան նեցուկ համարող այդ քէզ-փաշաները: Հապա պալատում, արքունիքում ի՛նչ ազահութեամբ և ի՛նչ շոայութեամբ էին վարուած այսպիսի թանկագին պատտանների հետ: Սուլթան Իրահիմ, իւր ութնամեա (1640—48) խալիֆութեան շրջանում, պալատում այնպիսի աննկարագրելի և անհաւատալի զեղխութիւն ու վատնողութիւն մտցրեց, որ մինչև անգամ ժամանակակից թուրք պատմիչներից Սարգանարալ ու Փարաւոն մականունին արժանացաւ: Այս սուլթանը ոչ միայն ամէն օր իւր ահաւոր կանանոցով, հարձերով ու աղախիներով նորանոր զգեստներով սնգուրւած ու զարդարւած խնճոյքներ, պարեր ու կաքաներ էր սարքում, ճոխ սեղանների շուրջը սքանչելի օշարակներով, նեկտարանման գինիներով, անուշահոտ իւղերով օծւած, խրախճանքների և տալատութիւնների մէջ էր մթնացնում օրերը, սպանում ժամերը, ոչ միայն Սարգանարալի նրման հարձերի հետ սնգուրուում է, ծուում սակեղօծուում, այլ իւր վէզիբին հրամայում էր, պալատի անհուն ծախսերը վճարելուց դատ, պալատն ամբողջապէս արտաքուստ Թուրանի



Թանկագին թաւիշով ծածկել և օրերի համեմատ գոյները փոփոխել: Իւրաքանչիւր օր նորագոյն ծածկոցներ, վառվառն գոյներով պիտի շողջողացնէր ու փայլփայցնէր Ալլահի երկրի շքի շքեղագոյն ապարանքը, որպէսդի աշխարհ իմանար ու հիանար նրա ահաւոր ճոխութիւնից: Վէզիր Ահմէդը, որ հասարակ գրագրութիւնից հասել էր խալիֆի առաջին պաշտօնէի աստիճանին, որի ձեռքումն էր յիսուն միլիօն ժողովուրդի կեանքի ու մահու խնդրի բազըը, պետութեան կնիքը, ծայրահեղ աւարառութիւններով ժողովուրդը—Ռայան կեղեքելով և պետութեան բոլոր պաշտօնները նահանգապետներին ու գաւառապետներին զարհուրելի սակագներով բաժանելով, գիշեր ու ցերեկ անընդհատ խորհում էր պետութեան դատարկ գանձարանը լցնելու միջոցներ գտնել: Վստք բերել, որպէսդի կարողանա իւր խալիֆի հաճոյքներին բաւարարութիւն տալ, նրան հաճելի գտնել և բռնած դիրքին պինդ կայել: Ո՞վ կարող է հաշիւ տալ, թէ որքան անմեղ քրիստոնեա Ռայաներ՝ նրա լուկ կարծիքին զոհ գնացին, զըլխաւեցան, որպէս զի նա, գրանց մառաններն ու ամբարները գատարկելով, կարողանա մեծամեծ գանձ ձեռք բերել և ճգնաժամից՝ գլխաւելուց ազատել: Բայց զուր, Սուլթան Իբրահիմի պահանջներն այնքան ահաւոր էր, որ նոյն իսկ իսլամ կղերը այլևս չկարողանալով հանդուրժել, գահից գլորեցին և որդուն՝ Խոթը տարեկան երեխային՝ Մէհմէդ Ի-ին գահը բարձրացրին:

Սուլթան Իբրահիմի դաստիարակ՝ Ջինջի Խօջայի ազարանքից մի քանի տասնեակ միլիօնի կարողութիւն գրաւեցին և աւարի մասնեցին ենիշէրինները՝ սովորութեան համաձայն: Իսկ վէզիր Ահմէդի կողմաւորներով և աւարով հաւաքած գանձըն այնքան ահաւոր էր, որ չնայելով, որ մեծագոյն մասը

հրդեհի բոցերին զոհ գնաց և մոխրակոյտի տակ մնաց, բայց դարձեալ ենիշէրիններն և նոր վարչութեան ղեկավարների ձեռքը տասնեակ միլիօնի կարողութիւն անցաւ: Որովհետև ամէն մի պաշտօնանկութեան գէպքում Բէյթ-Իւլ-Մալը գրաւում էր կառավարան ուղարկւած պաշտօնակալի և նշանաւոր հորուստների կայքը և գոյքը, ենիշէրինները աւարի էին մատնում գատապարուածի տունը, տեղը, կանանոցը և գանձարանը, մեծամեծ օգուտ էին ձեռք գցում, այս պատճառով ենիշէրինները աշխատում էին մեծամեծներին գլորելու առիթը ձեռքից բաց չթողնել: Մինչև անգամ ենիշէրինները խալիֆներին գահից գլորելիս կնոջերին գահ բարձրացնելիս, սուլթաններին ցահագին գումարի վարձատրութիւն էին ստանում, այս պատճառով խալիֆների վիճակն էլ վէզիրների նման միշտ վատնաւոր էր: Չատ անգամ ենիշէրինների ահաւոր պահանջները օր առաջ և ժամ առաջ լրացնելու համար, նորընտիր յաջորդները չէին մեղքանում իրենց Ռայային, հրամայում էին սուրերը սրել ու շարժել և նշանաւոր հարուստ Ռայաներին արիւնշաղագ տապալել, աները աւարի և գանձերը յարքունիս գրաւելով, բաւականացնել ենիշէրիններին: Այսպիսի գէպքերում երբ ընդդիմութիւնների էին պատահում, ենիշէրինները չէին խնայում, կրակի էին մատնում յանդուգն հակառակող տունը և հրդէհ բարձրացնում ամբողջ մայրաքաղաքում: Ստանեանների ամենագօրեղ շրջանում, նոյն իսկ ամենահեղ ճիւղիարներն անգամ պարտաւորել են (Մուրադ Բ. Մէհմէդ Բ. Սէլիմ Ա. կային կային) ամբողջ ենիշէրական գնդին, որը 200,000 հոգուց էր բաղկացած, գահ բարձրանալու հարկը վճարել և այս հարկը ահաւոր գումար էր, երբեմն երբեմն ամէն մի ենիշէրին մինչև 10-20 սակի (այն ժամանակա Ստանեան սակին հաւասար էր հունգարական բաջախլին, որը



արժէ մօտաորապէս հինգ բուրլի), կամ ամբողջ գնդին 20, 000.000 բուրլի: Միայն Գ. Պօլիսը նւաճող ֆաթիհ Սուլթան Մէհմէդը տասը հազար քիսա ոտկի բաժանեց, որը մեր ներկա փողով քսանըհինգ միլիօն բուրլի է բռնում: Իսկ համեմատութեամբ շորս ու կէս դար առաջ փողի սղութեան և արեւելքի վարձագնի աժանութեան, հարկ կլինի այդ գումարը քառապատկել, որպէսզի ներկայիս արժէքի հետ հնարաւոր լինի համեմատել: Պէտք է ընդգծել և կրկնել, որ այս նիւշէրինները Օսմանեանների Բէյթ-Իւլ-Մալից օրական էլին սաանում մի մի փարա, (կէս դրհէմ-կէս գօլօանիկ արծաթ) և կերակուրներն եփոււմ էր գնդի խոհանոցում:

Օսմանեանների վեց դարի տարեգրութիւնը, խալիֆայութեան հազար երկու հարիւր տարւա պատմութիւնը ապացուցանում է, որ օրէնսդրի դիրքի և էօմէրի սահմանած կարգերի համաձայն, խալիֆայութիւնը սրով ու կրակով իւր իշխանութիւնը տարածելիս, նւաճած բոլոր աշխարհներում նախ կուրօրէն հետեողներ է որոնել, իսլամի թիւն ու թիկունքը զօրացնելու—սոււարացնելու համար, ապա մնացեալ յաղթահարւածներին դարեւոր ստրկութեան է մատնել, Ռայա է դարձրել, իսլամի զինւորական զօրութիւնը պահպանելու և հաւատացեալների կեանքը քաղցրացնելու համար: Այս պարզան Ալլահի բացարձակ կամքը և անօրինութիւնը համարելով, իսլամը առանց խղճի խայթի կեղեքել է ընկճւած, անձնատուր եղած Ռայային, որ վայելէ երկնատուր բարեբը: Իսլամի վարդապետութեան դարեւոր աւանդողները այնպէս են կաշկանդել և այնպիսի կարծր երկաթի շրջանակի մէջ են խշտել հետեւող ամբօխի միտքը, որ նա այդ շրջանակից դուրս աշինչ չի նկատում, չի ուզում տեսնել և Սուլթանի հրովարտակներով, օրէնսդրութիւններով չի կարելի դարեւոր

նախապաշարումներով կաշկանդւած միւլիմի միտքը շղթաներից արձակել և այդտեղ եւրոպայի դարերի շրջանում զարգացրած ազատ գաղափարները ներմտծել: Ղուրանի այտթներով հիպնոսւած մտքերը դեռ ֆանատիքական և ֆատալական նիւրհով քնած են, ուրիշ գաղափար ընդունելու տրամադրւած չեն: Իսլամականութիւնն իւր ենթադրեալ իրաւունքներից երբէք ձեռք չի քաշել, ամբօխը, կղերը յօժարուած Ռայային ստրկահան վիճակից շին կարող ազատել, քանի որ յարասեւում է խալիֆութիւնը, քանի որ գերիշխում է համիլամականութիւնը, քանի որ գոյութիւնը պահպանում է աշխարհի վրա Իսլամի Շեքիսը:

Իսլամ ամբօխը ինչպէս հաւատացած է, որ ինքն է Ալլահի միակ սիրելի ժողովուրդը և Ալլահի ամբողջ աշխարհը դրած է իւր տրամագրութեան տակ, այնպէս էլ համոզւած է, որ իրենից դուրս բոլոր ազգերն ու համայնքները խաւարի ու տգիտութեան մէջ են խարխարում, մոլորւած են հեթանոսական—կռապաշտական նախապաշարումներով: Նրանց կարծիքով Ալլահը շարժէ քաշի իրենցից դուրս բոլոր ազգերի աշքերին, բուրգ է խրել դրանց ականջները, որ շտեսնեն զուրանի լոյսը, շլտեն այդ յայտնութեան փառահեղութիւնները, սըրտերը կապել է, որ նրա վիհութիւնը շըմբռնեն: Ամէն մի հաւատացեալ միւլիմ գոտոզացած իւր վիճակով, որ իսլամի մէջ ծընելու բաղդն է ունեցել, զուրանի դէմ ոչ մի խօսք, ոչ մի գիտութիւն չի ուզում լսել—այդ արգելւած է: Նա մեծամիտ անձն է.—Եթէ Ալլահը նախասահմանել է, որ իւր համայնքի իշխանութիւնը կործանելի, ինչ էլ որ պատահի, նա կործանելու է: Մարդկային մտքի ծնունդ միջոցները չեն կարող նախասահմանութեան որոշումների ժամերը երկարել, կամ կարճել և ոչ մի վայրկեանով: Հետեւորար միևնոյն բան



է իսլամ անհատի համար ձգտելը, կամ անհոգ մնալը, քանի որ Ալլահը աշխարհի ստեղծելուց առաջ սահմանել է գալիքները, որոնք անփոփոխ են: Ուստի քանի որ իշխանութիւնը իսլամի ճանկերումն է, իրենք պիտի վայելեն առանց մագաչափ իրաւունքներից զիջանելու. եթէ պարագան նրանց կը հրաւիրէ պարտականութիւնները կատարելու, նրանք կզիմեն պատերազմի դաշտը Ջհադի, թողնելով ամէն բան բողոքին, վստահելով որ Ալլահը ալէմ է (ամենագէտ) և ամենից լաւ է տնօրինել գալիքները...: Եթէ յաղթ են (քանի որ Ալլահը կամենա, ինչի շնն յաղթիլ, երկնքից կարող է բիւրաւոր հրեշտակներ իջեցնել անօրէններին ջարդելու և սիրելի համայնքին փրկելու) խո աւարի տալով պարտածների ինչքը, գեղանի կոյսերը էլ աւելի ախորժակով կվայելեն ընծաւածներից յափշտակած բերքն ու բարին, թէ կյաղթիւն, կամ կհորժանի համխոլամականութիւնը, այն ժամանակ խոնարհելով Ալլահի կամքին, կապեն մի կերպ, ինչպէս միւս ազգերը, մինչև Ալլահի մի նոր յայտնութիւնը, կամ Մէհմէդի գարձը...:

Համխոլամական իշխանութեան անգամակցութեան բազում աւելի շատ է պարծեցել և պարծենում է իսլամ անհատը, քանթէ երբեմն չուսմայեցին, կամ պատրիկը իրենց կոչումով: Ինչպէս մի ժամանակ ստրուկ ազգերի քաղաքներում չուսմայեցին յաղթական գոտոզ քայլերով էր շրջում, արհամարհական հայեացքը ուղղելով ընկճաւածների վրա, միալիմանը աւելի հպարտ ու դաժան է եղել Ռայաների գլխին: Երբէք մի որեւէ միալիման չի ասել մեր տէրութիւնը (հիւրիւմտարլըգ), մեր թագաւորութիւնը (փազիշահլըգ), մեր հայրենիքը (վաթան), այլ նա սովոր է մեծամտութեամբ ախրական տօնով կրկնել՝ մեր հարստութիւնը (զօվլէթ) և մեր կալածքը (միւլք): Ամէն մի միալիմ սոսկ իսլամի մէջ ծնելով ինքն-

իրեն ազատ աէր ու իշխան է համարում և այս ծաղումը չի զիջանիլ զիտութեան ու դրամական ճոխութեան որեւէ աստիճանի հետ: Իսկ եթէ սովորել է դուրանից մի քանի գլուխ, եթէ գլխի մէջ պատում են այդ վարդապետութիւնից մի քանի վսեմ մաքեր, նա արդէն այնքան մեծամտում է, որ ամբողջ մարդկային առաջադիմութեան պատմութիւնը նրա համար ծածաղիլի և անհամարհելի է դառնում: Ո՛չ շոգեշարժ մեքենականութիւնը, ո՛չ կլէքտրականութիւնը, ո՛չ նորանոր գիւտերը նրան շնն զարմացնում. չնն սթափեցնում, այլ նա ապշած է միայն իւր դուրանով, որը աշխարհի բոլոր գիտութիւնների բանալին է համարում:

Կուրանը իւր առասպելական խառնիճաղանճութեամբ և հագիսները այնպիսի խաւար սղջամուղջի մէջ են խրել իսլամ ամբոխին, որ սրանք չեն կարող այդ մառախլապատ անդունդից դուրս սողալ, քանի որ իսլամի իշխանութիւնը պահպանում է իւր գոյութիւնը: Ով որ ճանապարհորդել է արեւելք, ովքեր սր մտել են իսլամի ներքին խաւերը և մօտեցել են Ռայայի խոր խոր վէրքերին, արեւնոզող խոցերին, նրանք հաստատապէս կարող են համոզմունք կազմել, թէ ինչ ծայրայեղ ազիտութեան մէջ է երկիրը, ազգարնակութիւնը և ինչ զարհուրելի վիճ է բացւած Ռայայի համար: Միմիայն Կ. Պօլսի մեծամեծ մղկիթների արտաքին տեսքով, սուլթանի պալատների որմերի քանդակներով, նկարներով, երկրի մէջ մի քանի հարիւր վիւստ ձգւած երկաթուղիներով և պատերազմական դրահակիրներով պէտք չէ յափշտակել և երբէք զարմանալու չէ, եթէ մտածենք, թէ իսլամը Ռայա ունի, որը կարողանում է նրան այնքան դրամ և ոյժ մատակարարել, որով կարողանում է մղկիթներ կառուցանել, պալատներ դարգարել և պճնել: Բայց եթէ քննող հայեացքով զննենք, զի-



տակցութեան և յառաջադիմութեան ոչ մի ազատույց չենք գտնիլ: Մինչև անգամ Կ. Պօլսեցի թըրքուհին, կամ թուրքը, սրտնք այսօր դարդարում են Եւրոպական բնքոյշ կերպաններով, ճաշում են սպիտակ սփռոցների վրա արաֆրանգա յարդարում սեղանների շուրջը, որտեք այլևս կերակուրը մասներով չեն լպստում, այլ բանացնում են դանակ, պատառաքաղ և զգալ, բայց սրտան աչքերը կնկատեն քաղաքակրթութեան անշափ հեռուօրութիւնը թըրքական բարքերից: Մանաւանդ որ Կ. Պօլսը չի ներկայացնում խալիֆաթը ամբողջապէս:

Եթէ մտնենք իսլամի յարկի տակ, նոյն իող Պօլսեցի թուրքի տուն, ուշի ուշով զննենք և մերկացնենք իսլամի հետեղներին Եւրոպական արդուզարդից, մենք կհամոզուենք, որ նա ամէն ըսպէս, կեանքի ամէն մի քայլափոխին նոյն նախապաշարած ճակատագրի ստրուկն է, նոյն կուրանի կոյր մոլեռանդ երկրպագուն և անդադար կրկնում է. «Ալլահ Ալէմ, Ալլահ քէրիմ, Ալլահ գատէր, (Աստուած ամենագէտ, ամենահօր, ամենակարող) ինչպէս կամեցել է, ճակատիս գրել է, այնպէս կլինի»: Թուրքն ասում է.—«Եւրոպացի բժշկի զիզն ընդունեմ, թէ ոչ, հեռեանքը միևնոյնն է լինելու, Ալլահի կամքը»: Իսլամ անհատը ինքնակալի նման գոտող, շրջապատած է կանանցով, հարճերով, աղախիններով, մանկալիկներով ու սարուկ—նեղրներով, թէև արգելած է. բայց նրա համար անհրաժեշտութիւն է, կուրանն էլ թոյլատրում է: Այս բոլորը անյազ շոյութեամբ լափել են ուզում անվերջ և անընդհատ, իսկ տանուաէրը—ազան աչքերը շորս կողմը շոած կրկնում է. «Տէք, բերէք»: Եւ թշուա Ռայան, այն օրից, երբ պապերի պապերը դադաւատում (կրօնական պատերազմ) ընկճւած դազինների (յաղթող) սրերի ու ոտքերի տակ յանձն առան իսլամի խալիֆի ընդհանրական գերութիւնը, իրենց կեանքը և

գոչքը պարտական մնացին (ղիմի) համխումութեան, այնօրից մինչև անգամ այսօր վառապակած և բեռնաւորած տարել է ու տանում է այն սոսկալի լուծը, օրը վարում է իսլամի կղերը անուգբարար իրենց հիմնադրի ծրագրած շաղով:

Խալիֆաթի վարչութեան զեկը, ամէն կարգի հիմնարկութիւնները, զբաւած են կղել գարերով իսլամները, նոյնը ևս շարունակում է մինչև այսօր: Մուափիէն Գամատի կուտակալ ժամանակը զրեց և խնդրեց էօմէրից, որ թոյլ տա քրիստոնեա համարակալ, կամ քարտուղար պահելու: Էօմէրը սաստիկ նախաանց այս քայլը, սպանել տուց այդ քրիստոնեային և այն օրից խալիֆները խօյս են տուել քրիստոնեա գործակատարներ, սրանց հետ վարել են, ինչպէս որսկանը իւր բարակի հետ: Խալիֆաթի արդիւնարերութիւնը և արդիւնագործութիւնը, արհեստների և զեղարեւտների հետ Ռայային է բաժին մնացել, սրը կերակրել է, յագեցրել է, հագեցրել է, գորգարել է, զինել է, պատսպարել է, դարմանել է յագթող իսլամի զինւորական գորութիւնը, իրենց ստորադրեալներով և կանանոցներով: Երկրի մէջ նկատւած բոլոր նշանաւոր շինութիւնները, գորանոցները, բերդերն ու մարտոցները, հիւանդանոցները, բանտերն ու ապարանքները Ռայայի ձեռքով, նրա քրտինքով է ողողել, Ռայան է ծրագրել, Ռայան է հիմնարկել և Ռայան է պսակը բալորել: Իող Եւրոպայից բերւած թանկագին նիւթերը, մեքենաները, կամ մասնագէտները նոյնպէս Ռայայի արտաթորած քրտինքով վաստակւած փողով են վարձարւած: Սկզբներում իսլամին թէև արգելւած էր պատերազմներից ջոկ, ուրիշ գործով պարտաւել, բայց այսօր երկրում իսլամ երկրագործ և խաշնարած ժողովուրդ շատ կան, որտեց ձեռքումն է երկրի հողի ամենաբերրի մասը, բայց եթէ այս



ժողովուրդի էլ ներքին կեանքը ուսումնասիրենք, կնկատենք, որ միայն Ռայան է վարչութեան ղեկավարներն և զինուորական զորութեան շտաբում թիւններին բաւականութիւն տուողը: Բոլոր իսլամ հաստատարնակ հողագործ դասակարգը նախկին ընկճւած, յաղթահարւած, սոսկալի բռնակալութեան ճնշումներինց անճարացած, ահամա իսլամն ընդունող ժողովրդի սերունդն է: Այս հին—Ռայաները, իսլամը դաւանել են միմիայն հարստահարութիւններից, կեղեքումներից ու ճնշումներից ազատելու համար, ուստի սրանք իրենց իսլամական իրաւունքներին պաշտպան կանգնելով, քիչ թէ շատ արածունութիւններ են ձեռք բերել և գլուխները շին թէքում, ոչ միայն կողմնակի հարկապահանջների առաջ, այլ զիմադրում են կառավարութեան. Կուրանի և էօմէր խալիֆի ծրագրներից դուրս, պահանջումների առաջ: Ազատութիւն ստանալով, զըրանք էլ հետամտել են ձրիակերութեան, աշխատել են կեղեքել իրենց նախկին դասակից Ռայաներին, կամ աւագակուլութիւններով ապրել: Ուստի ազքատութիւնը, շունետութիւնը՝ իսլամի անբաժան յատկութիւնը տիրել է և սրանց, սրանք ծայրայեղ թշուաութեան մէջ հազիւ ապրուստ են ճարում: Ուստի սրանց հետ իսլամ սոսիկանութիւնը երբէք չի կարող այնպէս վարել ինչպէս կեղեքում է ոչ-միւսլիմներին՝ Ռայաներին, բացի այդ շունետածներից ինչ կարող է զջլել: Աւելորդ հարկ ու տուրք շունի իսլամ հողագործը, բացի տասանորդը, երբէք յարձակումների և կեղեքումների չի ենթարկւիլ և միշտ բողոքում է վարչութեան ապօրինի—ընդգէմ շէրիաթի—ընթացքի դէմ, բայց սրտիկան սարսափելի ազքատութեան, ազիտութեան մէջ է թաղւած, չի կարողանում ոյժ կազմել և զիմադրել անգթութիւններին: Կասավարութիւնն էլ այս դասակարգին միշտ շողորթութում է, փաղաք-

չում է, ներողամտութեամբ է վերաբերւում, որպէսզի չզրգուէ իրեն դէմ, մանաւանդ որ երկրի զօրքը սրանցից է կորզում: Քրիստոնեա Ռայաների հետ հաւասարապէս տուժել են և տուժում են բոլոր ազանդաւոր միւսլիմները, որոնք խալիֆաթի սահմաններում զիւզական—երկրածակ դասակարգի մէջ փոքր տեղ չեն բռնում: Օսմանեան կառավարութիւնը բռնութեամբ զբանցից հրապարակապէս իսլամ—Սիւննի դաւանանքի խոստումն է արել, զբանց իւր պետական մատաններում դաւանակից է ճանաչում, բայց Ռայաների հետ զբանք էլ հաւասարապէս տանջւել են և տանջւում են, անընդհատ սոսիկանութեան, իսլամ զրացի ու լիւնականների կամայականութիւններին մատնելով: Թիւրքմանները, Ալլիուլահինները, եզիզիները, շիաները, շէյխիները և ուրիշները Ռայաների նման հալածւել են և նրանց նման լծւած են իսլամի խալիֆական սայլին ու քաշումեն հաւատացեալների զինուորական զօրութեան ծանրութիւնները: Իսկ սիւննի-միւսլիման լիւնական կասավարներն հովական ցեղերը՝ քրդերը, թարաքեամաները, զահրիմանները, զազաները, բէզլիները և ուրիշները ոչ միայն ոչնչով չեն օգնել խալիֆութեան պահպանութեան գործին, այլ իրենց գոյութեամբ վնասակար են եղել ոչ միայն երկրի խաղաղ, արդիւնարերող ժողովրդին՝ Ռայային, կողոպտելով վերջինիս ինչքը, յափշտակելով դաւակները, ոչնչացնելով մշակած ու հասցրած բերքը, այլ մինչև անգամ խալիֆութեան գլխին մեծամեծ շարիքներ են բերել, պատուհաս են դարձել ազգաբնակութեան Օսմանեանները՝ խալիֆները պարտաւորւած են եղել միշտ մեծամեծ կոսիներ մղել զբանց դէմ, անախորժութիւններ տնկնալ և վնասներ կրել: Այս կիսովայրենի ցեղերի առաջնորդները՝ շէյխերը յաճախ ապստամբում էին խալի-



Ֆի իշխանութեան դէմ, անկախ իշխանութիւն հիմնում և օսնատակ տալիս խաղաղ երկրամշակ ազգաբնակութիւնը: Գեւ խալիֆները պարտաւորւած են եղել այսպիսի ըմբոստ արարական լիոնական ցեղապետներին հարկ ու տուրք վճարելու, որպէսզի դրանք շատպատակին երջանիկ Յրարիան, Հէջաղը, չկողոպտեն սրբազան քաղաքները՝ Մէքքէն և Մէդինէն, չկտրեն այդ քաղաքները ղիմող ախտաւորներին կարավանները, չկողոպտեն, չսպանեն սխտաւորներին, չբռնաբարեն խալիֆութեան իրաւունքները: Մինչև այսօր հարիւրներով են հաշուում այն արարացի շէյխերը, որոնք իրենց որոշ տուրքն են ստանում ամէն տարի իսլամի խալիֆից:

Ո՛չ միայն անցեալում, ս՛չ միայն ներկայումս իսլամ լիոնական և կիսավայրենիների համար Ռայան սարկի տեղ է դրել, նոյն իսկ այսօր Օսմանեանների պետութեան արտաքուստ ձեւական օրէնսգրութիւններովն անգամ Ռայան միւլիմից այնքան ստոր է դասւած, որքան նախկին հիւստը Լակեղեմնացիներից: Չնայելով խալիֆի զաշնագրերով պարտաւորւած խոստումներին, վերւն Խաթթը-Հիւմայուններին, այսօր օրէնքը դարձեալ Ռայային հաւասար չի ճանաչում իսլամի հարազատ սրղինների հետ: Այսօր և ոչ մի իսլամ դատաւոր չի կարող ընդունել նոյն իսկ Օսմանեան դէսթուրների (օրէնսգրքի) տրամադրութեան համաձայն Ռայայի վկայութիւնը միւս իմի դէմ: Սուլթան Մէջիդի, Ազիզի բոլոր հրովարտակների ամէն մի տողում կրկնւած է միւսաւլւած (հաւատարութիւն—անխրարութիւն), բայց մինչև օրս քրիստոնեան, դուրանի արամադրութեան համաձայն, իւր գոյութիւնը մի կերպ պահպանելու համար, ծնւած օրից մինչև մահւան օրը, ամէն տարի իւր գլուխը պիտի գնէ իսլամի Բէյթ-իւլ-Մալից՝ կեանքի փրկանքը՝ Զեզիէն վճարելով: Օսմանեանները եւրոպացիների աչքին փո-

չի փշելու համար, այգ յարկի անունը փոխել են՝ և Զեզիէի փոխարէն անւանել են զինուորական տուրքի փոխարէն (բէզէլէթը—աւքէրիէ): Խալիֆները թէև խոստացել են ջնջել այս գլխափրկանքը և քրիստոնեաներին էլ զինւորակոչութեան ենթարկել, բայց քանի որ խալիֆութիւնը գոյութիւն ունի, քանի որ երկիրը հպատակում է իսլամի շէրիաթին, երբէք չեն կտրույ այդ քայն անել: Եւ ինչպէս կարող է մարդաբէի տեղակալը՝ խալիֆը իսլամի հարազատ գաւազներին արիւնով նըւածած ամիրապետական կալածներին երկրի իսլամին ծառայելու յատկացրած սարուկներին, պիղծ անասունների երամակներին բարձրացնել, հաւասարցնել յաղթողների ժառանգներին, մասնակից անել պետութեան հարստութեանը, զինւորակոչի ենթարկելով սարկին տիրողի հետ հաւասարապէս:

Հետեարար, քանի որ քրիստոնեան արիւնահեղ իսլամական ղազաւասներում (կրօնական պատերազմ) գերի է ընկել իսլամի ճիրանում, քանի որ ընկճւած և յաղթահարւած քրիստոնեան կեանքը, գոյութիւնը մի կերպ քաշ տալու, ձգձգելու համար մտել է իսլամի գերիշխանութեան տակ որպէս Ռայա, քանի որ ամբողջ զարեք իսլամը որպէս տէր՝ անզուսպ կերպով քերթել է Ռայայի կաշին և ռայլել, այնպէս որ Ռայան անհրաժեշտ պահանջ է դարձել իսլամի համար, քանի որ այս բոլորը կտարել է և անում է միւլիմը Ալլահի նրան շնորհած յատուկ կտակի և յայտնութիւնների համաձայն և իսլամը Ռայային կեղեքելը, հարստահարելը, յափշտակութեան ենթարկելը, հարազատներից բաժանելը Ալլահի՝ բացայայտ կամքի՝ յայտնութիւնների համաձայն «հալալ» է համարում և պարտ է (Ֆարզ) իմանում, քրիստոնէին չի կարելի Ռայայութիւնից հանել և ս՛չ միայն համերկբացիութեան (litoyen), այլ մինչև անգամ հպատակութեան գասն (suféh) անցկոյց-



նել: Քանի որ խոյամի վարդապետները իրենց օրոշումներով և վճիռներով ժողովրդին քարոզում և համոզում են, թէ Ռայային չի կարելի դանազանել երկրի անտառների անասունների երամակներին, ծովերի ձկներին և դեռ անասուններից էլ սոտը արարած են համարում, իսկամը հակառակ դաւանածին և հաւատացածին՝ Ռայային իրեն հաւատար չի կարող ճանաչել, միւսիմը չի զիջանիլ իւր գոռոզ բարձրութիւնից ցած գալ և դասաւորել Ռայայի հետ, իսկառ ձեռք քաշելով իւր աջի գերածից՝ իւր Ռայայից և որա ժառանգական գոյքից ու դաւանիւնից:

Մինչև օրս խալիֆների այս մասին տւած բոլոր հրովարտակները, հրատարակած օրէնսդրութիւնները կեղծիք, խարէութիւն, խուլ ու մութ և յաճախ երկղիմի են գրւած, որոշ չեն բացատրւած և հրատարակւած են միայն ցոյցի, եւրոպայիների աչքում փոշի փշելու համար: Ռայային անասունների—զրտոտների երամակից հանելու և մարդու շարք բարձրացնելու համար անճարացած խալիֆների կողմից ստորագրւած դաշնագրերը և հրովարտակները բոլորովին անիրագործելի են մնացած վաթսուն տարւան ընթացքում: Նոյն իսկ մինչև օրս էլ Օսմանեան Սուլթանները խալիֆների հրովարտակների, կանոնադրութիւնների ձգձգումների և անմեկնելի դարձւածների համաձայն, մանաւանդ «Մէջէլլէի-Ահրետմը-Ազլիլէի» (արդարադատութեան օրէնսգիրքը) նենգամիտ բառախաղերով, Ռայան ոչ միայն զրկւած է իսլամ դատարաններում միւսլիմների հետ հաւասար իրաւունքը վայելելուց, ոչ միայն զրկւած է վկայելու իրաւունքից, ոչ միայն թուրքիայի բոլոր գոտարաններում մինչև օրս խոյամի զաղին (կրօնական—չէրիական դատաւոր) է վճիռներ արձակում, ոչ միայն երկրի վարչական և ոչ մի ատեանում քրիստոնեան

աղղեցիկ պաշտօն չի կարող ստանալ, այլ մինչև անգամ երկրի երեսունը երկու վալիներից, հարիւր քսան միւթէսարիֆներից և վեց հարիւրի շափ դայմագամներից և ոչ մէկը քրիստոնեա չէ և չի կարող լինել: Ոչ մի հաա քրիստոնեա պաշտօնակալ չկա երկրում և իսլամ ամբողջ չի ստորանալ չի զիջանիլ ոչ-միւսլիմ պաշտօնակալին: Մինիսարութեան դասում չի գտնուում և ոչ մի քրիստոնեա, չկան ևս երկրորդականներ, և եթէ հաա ու կտոր հոգւով ու սրտով թրքացած Ռայաների գիւնատներում պաշտօնի են դնում, այդ էլ անձարութիւնից է առաջանում, արտարին ճնշումից, կամ կարիքից ստիպելու են կատարում: Այնտեղ, սրտեղ Ռայայի մըտաւոր գործունէութիւնն է կարեսը, այնտեղ կանչում են այդ ոչ-միւսլիմին, օգտւում են խելքից, մտքից, հանճարից ու տաղանդից, առանց նրան Ռայայի աստիճանից բարձրացնելու: Այսպիսիներին ոչ միայն մինիսարի բազմոցի չեն բարձրացնում, այլ մինչև անգամ օգնականի աստիճանումն էլ նրա վայել յարգանքի չեն արժանացնում: Ոչ միայն այդպիսիների զիրքը անշափ խախուտ է, մաղից է կախւած, այլ մինչև անգամ անձը-պատիւր անարգւած է այն շրջանից, որին օգնութեան է հրաւիրւած և որից խելքով ու մարով անհամեատ առաւելութեամբ է օժտւած: Իսլամի հաւատացեալների գոռոզութիւնը, մանաւանդ Յունաստանին շարաշար յաղթելուց յետո, այն աստիճանի է հասած, որ արտաքին գործերի մինիսարութեան մանր մունր Ռայա պաշտօնակալներին զրազմաններին, կամ վիս-կօնսուրներին անգամ առանց ամաչելու առաջարկում են՝ կամ իսլամը դաւանել, կամ հրաժարական տալ: Իեռ եթէ քննենք՝ չեն գտնիլ մի քրիստոնեա գործակատար խալիֆաթի պաշտօնակալների ձեռքի տակ, սր անունը փոխած իսլամականի վերածած չլինի:



Վերջացնելով մեր խօսքը կրկնում ենք, որ Ռայան մը-  
նալու է իւր վիճակում, քանի որ իսլամի խալիֆութիւնը գոյ-  
ուլթիւնը շարունակում է, Ռայայի բաղղը ինչ որէք նախորդ  
դարերում և ինչ վիճակում որ գտնուում է ներկայումս, նոյն-  
պէս և աւելի վատթար պիտի յարասե՛ք, քանի որ Յւրոպա-  
կան կօնցերար վճռել է խալիֆութեան անկախութիւնը, գոյ-  
ուլթիւնը պահպանել, նրա կալածիւնը անձեռնմխելի թողնել,  
խալիֆների յաջորդի, Մահմէդի տեղակալի և երկրի կրեւորն  
Ելլահի շքի ինքնակալ—կայսրութիւնը պաշտպանել, որ յա-  
րասե՛ք...:



Վ Ե Ր Ջ.



2013

« Ազգային գրադարան



4818

NL0031973



